ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ

Առաջին մաս

Երաշխավորված է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից, 2022 թվականին

10

Նինո Կապանաձե, Նինո Տալախաձե

«Սիդի» հրատարակչություն

Թբիլիսի, 2022

Հեղինակներ՝ Նինո Կապանաձե, Նինո Տալախաձե

Խմբագիր՝ Թեոնա Բեքիշվիլի
Ձևավորող՝ Իա Մախաթաձե
Տեխնիկական ձևավորող՝ Սոփո Տարդաշվիլի

© «Սիդի» հրատարակչություն, 2022
Բոլոր իրավունքները պաշտպանված են
ՍՊԸ «Սիդի հրատարակչություն»
Հեռ. ՝ 599623610

www.ceed.ge
E-mail: info@ceed.ge
ceedgeorgia@yahoo.com
https://www.facebook.com/ გამომცემლობა სიდი
Citizenship 10
Student's Book
© Ceed Publishing, 2022

ISBN 97-9941-8-5248-0

Բովանդակություն

Դասագրքի հայեցակարգը..... 5

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլան (Քաղաքացիություն առարկայի չափորոշիչը).....7

Ուղեցույց, քաղաքացիություն առարկա. 11

Թեմա 1. Գլոբալ քաղաքացիություն. 32

Հավելվածներ..... 89

Դասագրքի հայեցակարգը

Այս գիրքը տասներորդ դասարանի «Քաղաքացիություն» առարկայի աշակերտի դասագրքի առաջին մասի ռեսուրսն է, որի նպատակն է օգնել ուսուցչին արդյունավետ կերպով կազմակերպել ուսանում-ուսուցման գործընթացը։

Երկու գիրքն էլ բովանդակային առումով և մեթոդապես համապատասխանում են բազային աստիճանի Ազգային ուսումնական պլանի, առարկայական չափորոշչի պահանջներին։

Աշակերտի գիրքը առաջարկում է «Գլոբալ քաղաքացիության» թեմայի համատեքստում կազմված երկարաժամկետ նպատակներին/թիրախային հասկացություններին կողմնորոշված միջանկյալ նպատակներ՝ համալիր առաջադրանքների տեսքով, և համապատասխան ակտիվություններ։
Աշակերտի գրքում այս թեմայում ընտրված **հարցերը** տրված են 18 պարագրաֆով, այդ պարագրաֆները միավորված են 5 գլխում։

Յուրաքանչյուր պարագրաֆ սկսվում է կենսական իրավիճակ/ների, այսպես կոչված, քեյսերով և դրանց քննարկմամբ։ Սրան հետևում է աշակերտների կողմից նմանատիպ իրավիճակների հիշեցում-վերլուծությունը, բանավեճերը, խմբային և անհատական աշխատանքը՝ ուղղորդված ինչպես առարկայական նպատակներին, այնպես էլ՝ ներառարկայական (մակրո) հասկացություններին, մետակոգնիտային և գործառնական՝ ֆունկցիոնալ ունակությունների զարգացմանը։

Տեսական տեղեկությունները ներկայացված են չափավոր, բազմաբնույթ դիդակտիկ միջոցներով. լուսանկարներով, սխեմաներով, դիագրամներով, ինֆոգրաֆիկայով, ինչը հեշտացնում է ըմբռնումը։ Աշակերտի կողմից ինքնուրույն արված եզրահանգումները, ընդհանրացումը և առաջարկված տեղեկությունը նպաստում են հարցի ընկալման և գիտելիքի ամբողջացման գործընթացին։

Աշակերտի գրքում տրված են խորագրեր, որոնք կօգնեն նրան կողմնորոշվել, ուղղորդվել գրքում։ Ներկայացված ակտիվությունների ամբողջ հավաքածուն, մոդելավորման սցենարները, քննարկումները, բանավեճերը պարունակում են երկընտրանքային խնդիրներ։

Այստեղ նեթ նշենք, որ երբ ակտիվությունը վերաբերում է երկընտրանքային իրավիճակին, այնտեղ չունենք «ստույգ», «ճիշտ» պատասխանների ոչ սպասելիքներ և ոչ անհրաժեշտություն, նման իրավիճակը լավագույն միջոցն է զարգացնելու աշակերտի քննադատական մտածողությունը և փաստարկների, տարբեր դիրքորոշումների վերաբերյալ խորհելու ունակությունները։

Ավանդաբար, բոլոր ուսումնական միավորները սկսվում են **համալիր առաջադրանքներով**, ինչը աշակերտին և ուսուցչին տալիս է ընտրության հնարավորություն։ Այն դեպքում, երբ համալիր առաջադրանքի գնահատման չափանիշները զուգադիպում են, ցանկալի է ընտրության հնարավորությունը տալ աշակերտին, իսկ երբ տարբեր համատեքստի պատճառով համալիր առաջադրանքը պարունակում է տարբեր տեսակի ակտիվություններ, գերադասելի է ընտրությունը կատարի ուսուցիչը։

Վերադառնանք «Ուսուցչի գրքին»։ Եթե հետևենք դասագրքին, ուսուցչի գրքում տրված թեմատիկ մատրիցան պարունակում է 4 թիրախային հասկացությանը կողմնորոշված 8 համալիր առաջադրանք։ Նրանցից յուրաքանչյուրի համար, նույնիսկ այն դեպքում, երբ ակտիվությունները հիմնականում համանման են, մշակված է առանձին մատրիցա։ **Թեմատիկ մատրիցայում թիրախային հասկացություններին, ենթահասկացություններին**, **ենթահարցերին** համապատասխան

կազմված **համալիր** առաջադրանքում տրված են առաջադրանքի քայլերն ու այս քայլերի համապատասխան ռեսուրսներն իրենց ակտիվություններով, որոնք հարմարեցված են **առաջադրանքներին**, և ուղղորդող հարցերով:

Հարցերի բլոկի վերջում կհանդիպեք մուգ գույնով գրված հարցերի, որոնք ուղղված են ընթացակարգային գիտելիքին և ստացած տեղեկության ու եզրահանգումների կոնկրետ քայլերին և կատարվելիք առաջադրանքում կիրառելու մասին աշակերտին ստիպում են մտածել: Թեմատիկ մատրիցայում բոլոր բաղադրիչները դասավորվում են ակնհայտորեն և ուսուցչի համար հեշտացնում են գործընթացի կազմավորումը: Որոշ ակտիվությունների կցված են սակավ հանձնարարականներ, որոնք ճշգրտում են հարցը կամ առաջարկում են այլընտրանքային ակտիվություններ:

Պարզ է՝ Դուք մնում եք գործընթացի գլխավոր «ռեժիսորը», և ձեր մեկնաբանությունները կլինեն այս դասագրքի համար նոր կյանք տվող:

Գիրքը տալիս է այլ ակտիվություններ կիրառելու հնարավորություն, կան բազմաթիվ տեղեկատվական ռեսուրսներ, նշված են լրացուցիչ ռեսուրսների էլեկտրոնային հղումները, առանց որոնց չենք պատկերացնում ուսումնական գործընթացը:

Եթե համացանցի հասանելիությունը սահմանափակ է, հավելվածներում տեսնում եք առաջադրանքի համար նախատեսված նյութի կարճ նկարագիրը, որով կարող եք կիսվել աշակերտի հետ՝ պարզելու նյութի բնույթը: Իսկ լրացուցիչ տեղեկություն կարելի է գտնել՝ անցնելով հղումին:

Մատրիցայի գլխում տրված է համալիր առաջադրանքների կատալոգը՝ քարտարանը, ինչը ուսուցչին տալիս է ընտրություն կատարելու հնարավորություն: Առաջին և 7-րդ առաջադրանքների համար պատրաստել ենք բուկլետի և **հրավիրատոմս**ի նմուշներ: Այն հասանելի չպետք է լինի աշակերտի համար՝ մինչև առաջադրանքը կատարելը: Դուք կարող եք օգտագործել շնորհանդեսից հետո, երբ կունենաք աշակերտների հետ հետադարձ կապ և իրենց աշխատանքները «այլ աշակերտների նամակների» հետ համեմատելու հնարավորություն կտաք :

Ըստ թիրախային հասկացությունների, **համալիր առաջադրանքների համար** թեմատիկ մատրիցայի վերջում տրված է Ազգային ուսումնական պլանի արդյունքների **տաքսոնոմիայի** հիման վրա պատրաստված **զարգացնող գնահատման գործիք:** Ուսուցիչը կարող է այս գործիքի կիրառմամբ, Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի մակարդակներին համապատասխան ստեղծված ինդիկատորներով՝ ստուգիչներով նկարագրել աշակերտների ուսման, մտածողության գործընթացը և այն **համապատասխանեցնել տաքսոնոմիայի մակարդակին:** Այս համապատասխանություններից ելնելով, գործիքը կօգնի Ձեզ **զարգացնող մեկնաբանության** մեջ ճիշտ ու ստույգ կերպով խորհուրդ տալ աշակերտին՝ ինչ քայլեր պետք է կատարի, որպեսզի հասնի հաջորդ մակարդակին: Մատրիցայի աջ սյունակում տեղադրված համալիր առաջադրանքի վերջում նշված է հավելված, որը պարունակում է համապատասխան գնահատման գործիքը:

Գրքի վերջում տրված է «տես՝ հավելված 1, էջ 89», որը առաջարկում է դիագնոստիկ՝ ախտորոշիչ հարցեր և կօգնի աշակերտին շնորհանդեսի ու ինքնագնահատման, իսկ ուսուցչին՝ գնահատման հարցում: Ինչ վերաբերում է **ամփոփիչ առաջադրանքին**՝ այս գործառույթը կարող եք շնորհել Ձեզ համար ցանկալի յուրաքանչյուր առաջադրանքին, իսկ ռուբրիկայի՝ խորագրի պատրաստման և առհասարակ գնահատման հարցերի ճշգրտման համար տեսեք ուղեցույցից հատվածը՝ էջ 19:

Ողջույն, սիրելի՛ ուսուցիչ։

Տասներորդ դասարանի «Քաղաքացիություն» առարկայի աշակերտի դասագրքի առաջին մասին համապատասխանող «Ուսուցչի գիրքը» ստեղծվել է ընդհանուր կրթության բարեփոխման շրջանակներում ընթացող գործընթացներում Ձեզ աջակցելու համար։

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլանի համաձայն, միջնակարգ աստիճանի տասներորդ դասարանի առաջին կիսամյակում առաջադրված է մեկ թեմա՝ գլոբալ քաղաքացիություն։ Ուսուցչի գիրքը ևս նվիրված է այս թեմային։

Կհամաձայնեք՝ աճող գլոբալիզացման պայմաններում աշակերտներին հարկավոր է ըմբռնել այս գործընթացին ուղեկցող հնարավորությունները և ռիսկերը, հարկավոր է պատմության կտրվածքով հետևել քաղաքացիության հայեցակարգի զարգացմանը մինչև գլոբալ քաղաքացիություն։

Դուք՝ ուսուցիչներդ, դասասենյակում կոնկրետ համալիր առաջադրանքների, կոնկրետ ակտիվությունների, երկընտրանքային իրավիճակների կիրառմամբ պետք է օգնեք աշակերտին հաղթահարել երկարաժամկետ նպատակները, թեման ու հարցերը, միևնույն ժամանակ զարգացնեք XXI դարի հմտությունները։

Կրթություն գլոբալ քաղաքացիության համար, սա միջազգային հանրության, պետության պատվերն է կրթական համակարգին։ Սա հեշտ չէ, բայց այս գործում Դուք մենակ չեք։ Այս «Ուսուցչի գիրքը», Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից պատրաստված բազմաթիվ լրացուցիչ ռեսուրսների հետ միասին ստեղծվել է Ձեզ օգնելու համար։

Շնորհակալություն, որ հենց այս դասագիրքն եք ընտրել։

Մաղթում ենք հաջողություն։

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլան (առարկայական չափորոշիչ- «Քաղաքացիություն» առարկա)
Ուսուցանվում է շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 72 ժամ

Հասարակական գիտություններ, միջնակարգ աստիճան

գ) Քաղաքացիություն

Ներածություն

Դասընթացը հատկացված է միջնակարգ աստիճանի աշակերտների համար: Դասընթացի շրջանակներում լայնանում և խորանում են բազային աստիճանում քաղաքացիության շրջանակներում ձեռք բերված գիտելիքները:

Չափորոշչում արդյունքների ու թիրախային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ նպատակները:

Բովանդակությունը նկարագրված է թեմաների (ենթաթեմաների), հարցերի և ենթահասկացությունների տեսքով: Ազգային ուսումնական պլանը սահմանում է պարտադիր թեմաներ: Թեմաների համապատասխան հարցերը ինքը՝ դպրոցն է ընտրում:
Յուրաքանչյուր թեմայի կցված են արդյունքներին հասնելու ինդիկատորները՝ուղղորդիչները: Նրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատվի ուսում-ուսուցման գործընթացում: Ինդիկատորները խմբավորված են ըստ թիրախային հասկացությունների:

Աստիճանի արդյունքները

Միջնակարգ աստիճանում չափորոշչում նկարագրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է առջևից կցված ցուցիչը, որը մատնացույց է անում առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարը, օրինակ. «**Քաղ. միջ. ընտր. 1»:**

«Քաղ. » ցույց է տալիս առարկան. «Քաղաքացիություն»,

«միջ. » ցույց է տալիս աստիճանը,

«1» ցույց է տալիս չափորոշչի արդյունքի համարը:

Քաղաքացիության չափորոշչի արդյունքները միջնակարգ աստիճանում		
Արդյունքների ցուցիչ		**Թիրախային հասկացություն**
	Աշակերտը պետք է կարողանա.	
Քաղ. միջ. 1	Որոշումներ կայացնելիս և համապատասխան գործողությունը կատարելիս՝ հաշվի առնել գերազույն իրավական փաստաթղթերը (այդ թվում՝ Վրաստանի սահմանադրությունը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Երեխաների իրավունքների կոնվենցիան):	**Հասարակություն** (անձ, անհատ, սոցիալականացում) (Քաղ. միջ. , 1,2,4) **Ժողովրդավարություն** (*մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ*) (քաղ. միջ. 1,2,3,4) **Քաղաքացիական մասնակցություն** (Քաղ. միջ. 2,4) **Կայուն զարգացում** (Քաղ. միջ. 3)
Քաղ. միջ. 2	Բացահայտել հասարակության համար ակտուալ գլոբալ և տեղային սոցիալ-քաղաքական խնդիրները և սեփական մասնակցությամբ հոգ տանել դրանք ուղղելու մասին, հաշվի առնելով ժողովրդավարության սկզբունքները:	
Քաղ. միջ. 3	Գործել կայուն զարգացման սկզբունքները ըմբռնելով (այդ թվում՝ գործել առօրյա և արտակարգ (բնական և տեխնոգեն պատճառներով առաջացած) իրավիճակում անվտանգության կանոնները պահպանելով):	
Քաղ. միջ. 4	Հասարակության մեջ դրական փոփոխություններին ուղղված գաղափարները շահարկել և փաստարկել տարբեր հետաքրքրությունների խմբերի և պետական հաստատությունների հետ համագործակցությամբ:	

Պարտադիր թեմաներ

X դասարան
1. Գլոբալ քաղաքացիություն
2. Իրավական մշակույթ
XI դասարան
3. Արտադրություն և բիզնես
4. Քաղաքականություն և քաղաքական մշակույթ
XII դասարան
5. Վրաստանը և գլոբալիզացիան
6. Գլոբալ տնտեսությունը և Վրաստանը

Ցանկալի է՝ ուսանում-ուսուցման գործընթացում դպրոցները պահպանեն թեմաների վերևում տրված հերթականությունը։

Պարտադիր թեմաներն ու գնահատման ինդիկատորներին կապող աղյուսակներ. յուրաքանչյուր աղյուսակում տրված է թեմայի վերնագիրը, նրա նկարագրությունը և գնահատման ինդիկատորները, որոնցում ցույց է տրված, թե ինչպես են իրացվում կոնկրետ թեմայի արդյունքները:

X դասարան

Թեմա 1. Գլոբալ քաղաքացիություն Թեման ներառում է քաղաքացիության իմաստի ուսումնասիրում-ըմբռնումը տարաժամանակյա կտրվածքով՝ անտիկ ժամանակաշրջանից մինչև ժամանակակից գլոբալ քաղաքացու հայեցակարգ, քաղաքացու իրավունքների զարգացմանը համընթաց: Ուշադրությունը կենտրոնացած է Վրաստանի քաղաքացիություն շնորհելու հնարավորությունների, ժողովրդավարական մշակույթի և թվային իրավասությունների նշանակության վրա գլոբալ քաղաքացու ձևավորման գործընթացում: Վերլուծված են մարդու աշխարհայացքի և անհատական զարգացման վրա ազդող գործոնները (ինքնություն, ինքնավերլուծություն, էմպաթիա, ասերտիվություն, էմոցիաների և կոնֆլիկտների կառավարում, զանգվածների հոգեբանություն): Թեման պարունակում է ապատեղեկատվությունը և կեղծ նորությունները որպես ժողովրդավարական հանրության զարգացմանը խոչընդոտ հանդիսացող պայման, և դրա հետ կապված հակառազմավարությունների նշանակության ընկալում: Շեշտը դրվում է հանրության և քաղաքականության վրա սոցիալական մեդիայի ազդեցությանը:
Թեմայի շրջանակներում արդյունքի հասնելու ինդիկատորները ըստ թիրախային հասկացությունների. **Հասարակություն -** Աշակերտը պետք է կարողանա. • վերլուծել մարդու անհատական զարգացման և գլոբալ քաղաքացի ձևավորվելու անհրաժեշտ էական գործոնները (ինքնություն, ինքնավերլուծություն, ինքնակառավարում, սոցիալական գիտակցություն, հարաբերությունների ունակություն, որոշում կայացնելու պատասխանատվություն, էմպաթիա, ասերտիվություն, հակամարտությունները՝ կոնֆլիկտները առանց բռնության կառավարել, մեդիագրագիտություն և թվային իրավասություններ): **Ժողովրդավարություն-** Աշակերտը պետք է կարողանա. • կապել մարդու սոցիալական հմտությունները և գլոբալ քաղաքացիության էական բնութագրիչները ժողովրդավարության սկզբունքներին (հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, պատասխանատվություն, ներառական կրթություն, առանց բռնության մեթոդների կիրառում, հանդուրժողականություն): **Քաղաքացիական մասնակցություն-** Աշակերտը պետք է կարողանա. • առանձնացնել ակտուալ խնդիրները գլոբալ քաղաքացու տեսադաշտից և ընտրել դրանք լուծելու ճանապարհներ (այդ թվում՝ ընտրել տարբեր հետաքրքրության խմբերի և պետական հաստատությունների հետ համագործակցության ճանապարհներ, կոնֆլիկտները խաղաղ ճանապարհով լուծել, բացահայտել ապատեղեկատվությունը և մերկացնել); **Կայուն զարգացում-** Աշակերտը պետք է կարողանա. • կապել գլոբալ քաղաքացիության էական բնութագրիչները կայուն զարգացման սկզբունքների հետ:

Ուղեցույց. առարկա- «Քաղաքացիություն»

Ըստ երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլանի

Վրաստանի կրթության և գիտության նախարարության նախադպրոցական և ընդհանուր կրթության զարգացման դեպարտամենտ

2022 թվական

❖ ***Ինչպե՞ս են Ազգային ուսումնական պլանում ձևակերպված երկարաժամկետ նպատակները:***

Ազգային ուսումնական պլանում երկարաժամկետ նպատակները ձևակերպված են առարկայական թիրախային հասկացությունների և աստիճանի արդյունքների տեսքով:

<u>Աստիճանի արդյունք.</u> Աստիճանի արդյունքները ընդհանուր կողմնորոշիչներ են, որոնք սահմանում են դպրոցի հանրության համար առարկայի ուսուցման նպատակները: Պատասխանում են հարցին՝ ինչ պետք է կարողանա աշակերտը աստիճանի/ենթաաստիճանի (և ոչ կոնկրետ ուսումնական տարվա) վերջում: Յուրաքանչյուր դպրոց պարտավոր է դրանց վրա հենվելով ստեղծել դպրոցական ուսումնական կուրիկուլում/դպրոցական ուսումնական պլան, որտեղ ցույց է տալիս, թե ինչպես են հաղթահարվում արդյունքները՝ հաշվի առնելով դպրոցի կարիքներն ու հնարավորությունները:[1]Արդյունքները ձևակերպված են այնպես, որ ակտուալ են առարկայի չափորոշչի կամ դպրոցական ուսումնական պլանով սահմանված ցանկացած թեմայի առնչությամբ:

---

[1] Դպրոցական կուրիկուլումը՝ ուսումնական պլանը, փաստաթուղթ է, որը սահմանում է, թե ինչ առարկայական հարցեր, առաջադրանքներ, թեմաներ, հիմնական ու լրացուցիչ ռեսուրսներ, գնահատման գործիքներ է առաջարկում դպրոցն իր աշակերտներին անհատական զարգացման/Ազգային ուսումնական պլանի արդյունքներին հասնելու համար: Ելնելով նրանից, որ բոլոր դպրոցներն ունեն տարբեր հնարավորություններ և անհրաժեշտություններ/կարիքներ, յուրաքանչյուր դպրոցի դպրոցական ուսումնական պլանը տարբերվող է և առանձնահատուկ:

Ազգային ուսումնական պլանի ներդրման գործընթացում դպրոցական ուսումնական պլանը քննարկվում է որպես գլխավոր միջոց.

- ուսանում-ուսուցման որակի բարձրացման համար,
- դպրոցի հանրությունը որպես միասնական խումբ ձևավորելու համար,
- դպրոցական մշակույթը վերափոխելու համար,
- դպրոցի ինքնավարության որակը բարձրացնելու համար:

Դպրոցական ուսումնական պլանի հետ կապված, բացի բովանդակությունից կարևոր է նաև հենց այս փաստաթղթի վրա աշխատելու գործընթացը: Ազգային ուսումնական պլանը ներդնելիս դպրոցները նախարարությունից ստանում են ռեսուրսներ և գործիքներ դպրոցական ուսումնական պլան ստեղծելու համար, մասնավորապես՝ կրթության նախարարությունը նրանց առաջարկում է թեմատիկ մատրիցաների և համալիր առաջադրանքների նմուշներ: Ուսուցիչները պետք է քննարկեն այս նյութը և համապատասխանեցնեն իրենց դպրոցի կարիքներին:

Առարկայական թիրախային հասկացություններ. Ազգային ուսումնական պլանի յուրաքանչյուր արդյունք կապված է առարկայական թիրախային հասկացությանը: Ազգային ուսումնական պլանում յուրաքանչյուր առարկայի համար սահմանված է մի քանի թիրախային հասկացություն:

Աստիճանի մակարդակով դրանց (արդյունքները/թիրախային հասկացությունները) տիրապետելը արդյունքի հետ միասին, ներկայացնում է առարկայի ուսանում-ուսուցման երկարաժամկետ նպատակը: Ստորև թվարկված են «Քաղաքացիություն» առարկայի թիրախային հասկացությունները: Յուրաքանչյուր հասկացության կողքին, փակագծերի մեջ գրված է, թե որ արդյունքների հետ է կապված.

հասարակությունը (անձ, անհատականություն, հասարակություն, սոցիալականացում) (Քաղ.միջ. 1,2)
ժողովրդավարությունը (մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ) (Արդյունք 1,2,3,4)
քաղաքացիական մասնակցությունը (Արդյունք. 2,4)
կայուն զարգացումը (Արդյունք. 3)

Երկարաժամկետ նպատակները (արդյունքները և թիրախային հասկացությունները) ճշգրտում և ավելի հստակ են դարձնում հասկացությունների հետ կապված **(ա) ենթահասկացությունները, (բ) կայուն պատկերացումները և (գ) աստիճանի հանգուցային հարցերը:**

ա) Ենթահասկացությունները բխում են թիրախային հասկացությունից: Դրանց միջոցով դպրոցական ուսումնական պլանում սահմանվում են կոնկրետ հարցերն ու ենթահարցերը (աղյուսակ 3):

բ) Կայուն պատկերացումները սահմանափակում են հասկացության տարողությունը և սահմանում են, ինչ պետք է գիտակցի աշակերտն այս հասկացության առնչությամբ աստիճանի վերջում: Դրանց միջոցով ի հայտ են գալիս ընդհանրացումներ, որոնց աշակերտը պետք է հասնի անցնելով ցանկացած թեմայի ուսանում-ուսուցման գործընթացը: Կայուն պատկերացումները սերտորեն կապված են միմյանց հետ (չի կարելի դրանք առանձնացված մշակել): Դրանք սահմանվում են դպրոցական, և ոչ Ազգային ուսումնական պլանի մակարդակով:

գ) Աստիճանի հանգուցային հարցերի միջոցով առանձնանում են այն շեշտադրումները, որոնց նկատմամբ կողմնորոշումը պետք է ընթանա ուսանում-ուսուցման գործընթացում:

❖ ***Ո՞ր դեպքում են Ազգային ուսումնական պլանի արդյունքները համարվում ձեռք բերված:***

Այս հարցին պատասխանելիս մեզ օգնում է մի կողմից Ազգային ուսումնական պլանի արդյունքներին հասնելու տաքսոնոմիան, որը ներառում է հինգ մակարդակ՝ չկապակցված, միակապ, բազմակապ, ամբողջացված, ընդլայնված մակարդակներ,մյուս կողմից՝ գործառնական-կոգնիտային ունակությունների (քննադատական մտածողություն, ստեղծագործական, կոլաբորացիա/համագործակցություն, հաղորդակցություն, քաղաքացիություն, բնավորություն/կամք) վրա հիմնված զարգացնող գնահատականի խորագրերը/աղյուսակները: Դրանց միջոցով նկարագրվում է աշակերտի էմոցիոնալ-սոցիալական և կոգնիտային զարգացումը:

Ազգային ուսումնական պլանի արդյունքներին հասնելու տաքսոնոիմիա- դրա յուրաքանչյուր աստիճանը բացահայտում է թիրախային հասկացության տիրապետման մակարդակը/ թիրախային հասկացության հետ կապված հարցի/հարցերի ընկալման որակը: Առաջին երեք մակարդակում թիրախային հասկացության հետ կապված հարցերի ընկալման որակը բավարար չէ: Հասկացության տիրապետումը/արդյունքի հասնելը նույնականացվում է ամբողջացված և ընդլայնված մակարդակների հետ:

Չկապակցված մակարդակ Աշակերտն ունի չկապակցված տեղեկություն հարցի մասին:
Միակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մի չկապակցված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:
Բազմակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, միմյանց չկապակցված, չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:

Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է. • քննադատաբար ու համակցված ընկալել և վերլուծել թիրախային հասկացությունների հետ կապված փաստերն ու իրադարձությունները, • համակցված վերլուծել թիրախային հասկացության կայուն պատկերացումները, • կոնտեքստուալիզավորել՝ համատեքստայնացնել (առարկայի այլ թիրախային հասկացությունների հետ կապել) որոշակի թիրախային հասկացության հետ կապված տեղեկությունը, • ամբողջացված մակարդակում հարցի/թիրախային հասկացության ընկալումը նշանակում է հասնել Ազգային ուսումնական պլանով սահմանված արդյունքին, չնայած հնարավոր է աշակերտը ավելի հեռու գնա, այսինքն՝ դեպի այն ընդհանրացումը, որը սահմանված է ընդլայնված մակարդակի համար։
Ընդլայնված մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատելու գործընթացում ձեռք բերված գիտելիքը և փորձը կապել Ազգային ուսումնական պլանի գերառարկայական (մակրո) հասկացությունների հետ։

Գերառարկայական (մակրո) հասկացությունները նաև կապված են Եվրամիության կողմից սահմանված XXI դարի ութ հանգուցային իրավասությունների հետ։

XXI դարի հանգուցային (Եվրախորհրդի) իրավասություններ	**Գերառարկայական (մակրո) հասկացություններ**	**Չափորոշիչ՝ Ա.ու.պ արդյունքների 5-րդ մակարդակ Աշակերտը պետք է կարողանա.**
Գրագիտություն Թվային գրագիտություն	Կոնստրուկտ (նշանակություն շնորհում) Նարատիվ/պատում (տեղեկության համակարգում)	• **Կոնստրուկտ** - տեղեկության ընկալում, սեփական փորձով նշանակության վերաիմաստավորում/ խորացում, • **Նարատիվ/պատում**- տեղեկության համակարգում/նարատիվի վերածում, սեփական նարատիվի ձևավորում, որում պատկերված կլինի հարցի վերաբերյալ փաստացի նյութը՝ սեփական նպատակները և լսարանը հաշվի առնելով։
Բազմալեզու գրագիտություն Մշակութային գիտակցություն և ինքնաարտահայտում	Մշակութային բազմազանություն	Ընկալի, թե ինչպես են ըմբռնում նույն տեղեկությունը այլ մշակույթի մարդիկ։
Քանակական գրագիտություն	Մոդել Հետազոտություն	Օրինաչափության բացահայտում և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, ուսումնական նյութի կապակցում այլ գիտական գիտելիքի հետ։
Անձնական, սոցիալական և ուսման ուսուցման իրավասություն	Ռազմավարություն	Ռազմավարության ընտրություն հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը կատարելու համար։
Քաղաքացիական իրավասություն	Քաղաքացի	Վերլուծի, ինչ ազդեցություն է թողել իր քաղաքացիական աշխարհայացքի վրա ձեռք բերված գիտելիքը։
Ձեռներեցություն	Ինովացիոն/նորարարական նախագիծ	Ձեռք բերված գիտելիքի կիրառմամբ ասպեկտների՝ տեսակետների որոնում սեփական կամ հասարակական կարիքների համար։

Գերառարկայական (մակրո) հասկացությունները քննարկելիս հարկավոր է հաշվի առնել մի քանի գործոն.

- դրանք երբեք անկախ հասկացությունների տեսքով չեն մշակվում։ Դրանց ընկալումը տեղի է ունենում առարկայական թիրախային հասկացությունների վրա աշխատելու գործընթացում,
- գերառարկայական (մակրո) հասկացությունները կապված չեն որևէ առարկայի կամ թիրախային հասկացության հետ։ Օրինակ. գրագիտության հետ կապված մակրոհասկացություններն են **կոնստրուկտն ու նարատիվը,** որոնց վրա աշխատելը ակտուալ է բոլոր առարկաների թիրախային հասկացությունների և առարկայական հարցերի համար։ Նույնը վերաբերում է այլ իրավասություններին/գերառարկայական (մակրո) հասկացություններին։ Երբ աշխատում ենք առարկայական հարցի և դրա հետ կապված թիրախային հասկացության վրա, բացի նրանից, որ աշակերտը ստեղծում է կոնստրուկտներ ու ձևավորում նարատիվ, այսինքն՝ աշխատում է «գրագիտության վրա», միևնույն ժամանակ.
- հայտնաբերում է **օրինաչափություններ,** անում է **մոդելավորում** և կապում է նոր նյութը այլ **գիտական կառուցվածքների հետ (քանակական գրագիտություն),**
- փնտրում է ձեռք բերված գիտելիքի կիրառական ասպեկտները՝ տեսակետները սեփական կամ հանրային կարիքների համար (ձեռներեցություն),
- ընտրում է **ռազմավարություններ** հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը կատարելու համար (**անձնական, սոցիալական և ուսման ուսուցման իրավասություն),**
- մտածում է՝ ինչ ազդեցություն է թողնում ձեռք բերած գիտելիքը նրա՝ որպես **քաղաքացու** մտահոգության և անելիքի վրա **(քաղաքացիություն),**
- մտածում է՝ ինչպես կարող են տարբեր ձևով ընկալել նույն տեղեկությունը այլ մշակույթի անձինք **(բազմալեզու իրավասություն, մշակութային գիտակցություն և ինքնաարտահայտում):**

Գերառարկայական (մակրո) հասկացությունների հետ կապված ընդհանրացումները, ինչ խոսք, չեն հաղթահարվում մեկ համալիր առաջադրանքի կամ մեկ ուսումնական տարվա ընթացքում։ Դրանց վրա ուսուցիչն ու աշակերտը աշխատում են ամբողջ ուսումնական ժամանակահատվածում։

Առարկայական թիրախային և գերառարկայական (մակրո) հասկացությունների վրա աշխատելը նպաստում են այն առաջնահերթությունները աշակերտին հասցնելուն, որոնք սահմանված են ընդհանուր կրթության ազգային նպատակներով ու միջազգային փաստաթղթերով (առաջին հերթին՝ Եվրախորհրդի հանգուցային իրավասություններով սահմանված պահանջների իրացմանը[2]):

---

[2] Վրաստանի Ազգային ուսումնական պլանը հենվում է հետևյալ տեղական և միջազգային փաստաթղթերի վրա.

- **միջնակարգ կրթության ազգային նպատակներ –** նկարագրում է, թե ինչպիսի քաղաքացի պետք է դաստիարակի և աճեցնի դպրոցը,
- **կայուն զարգացման նպատակներ –** ձևավորում է այն սկզբունքները, որոնց պետք է բավարարեն կրթական համակարգերը ,
- **21-րդ դարի հանգուցային իրավասություններ –** սահմանում է այն իրավասությունները, որոնք անհրաժեշտ են մարդուն ինքնադրսևորման համար։

Թիրախային հասկացությունների վրա աշխատելիս՝ մի կողմից հարկավոր է կողմնորոշվել գերառարկայական (մակրո) հասկացությունների վրա, մյուս կողմից՝ հաշվի առնել այն մեթոդական պահանջները, որոնք ձևակերպված են ուղեցույցի երկրորդ գլխում: Այլ կերպ ասած, ըստ երրորդ սերնդի Ազգային պլանի, երկարաժամկետ նպատակների վրա (թիրախային հասկացություն, աստիճանի արդյունք) աշխատելը նկատի ունի մի կողմից ուշադրությունը սևեռել գործառնական-իրավասության ունակությունների (քննադատական մտածելակերպ, ստեղծագործականություն, կոլաբորացիա/համագործակցություն, հաղորդակցություն և այլն) և մետակոգնիտության վրա, մյուս կողմից՝ թիրախային հասկացությունների հետ կապված կոնկրետ ուսումնական բովանդակության/ առարկայական հարցերի մշակման վրա:

Ազգային ուսումնական պլանում բովանդակությունները տրված են ըստ պարտադիր առարկաների: Առարկայական թիրախային հասկացությունները և աստիճանների արդյունքները ճիշտ դրանց հիման վրա են ձևավորվում: Միջազգային և հեղինակային դպրոցները իրավունք ունեն ի նկատի չունենալ առարկայական թիրախային հասկացություններն ու աստիճանի արդյունքները և ուսումնական գործընթացը միայն գերառարկայական (մակրո) հասկացությունների հիման վրա կազմակերպել: Նման դեպքում նրանք իրենք են առանձնացնում արդյունքներն ու թիրախային հասկացությունները այն առարկաների համար, որոնց ուսուցումը ենթադրում է կոնկրետ դպրոցի կուրիկուլումը՝ դպրոցական պլանը:

Ազգային ուսումնական պլանը տալիս է հնարավորություն, որ անմիջականորեն գերառարկայական (մակրո) հասկացություններին կողմնորոշումով՝ ձևակերպվեն նաև տարբեր տեսակի դպրոցական ուսումնական պլանները՝ կուրիկուլումները. ծանր և բազմաթիվ մտավոր խախտումներ ունեցող աշակերտների համար, զգայական պլան և պլան՝ նախատեսված կրթության երկրորդ հնարավորության ծրագրի համար:

Միջազգային փաստաթղթերի պահանջները էլ ավելի են ճշգրտված այլ փաստաթղթերում, օրինակ. ժողովրդական իրավասությունների շրջանակ/աղյուսակ, **ժողովրդավարական իրավասությունների շրջանակ,** որը ճշգրտում է պահանջները քաղաքացիական և սոցիալական իրավասությունների համաձայն:



❖ ***Ինչպե՞ս պետք է գնահատել աշակերտի ձեռքբերումները:***

Աշակերտի գնահատումը ուղիղ կապ ունի ուսանում-ուսուցման գործընթացի երկարաժամկետ նպատակների կողմնորոշման հետ: Ուսուցումն ու գնահատումը մի մեդալի երկու կողմերն են և իրարից անկախ ու մեկուսացված բաղադրիչներ չեն ներկայացնում: Աշակերտը կարող է գնահատվել հենց ուսումնական գործընթացում, առանց հատուկ նշանակված հարցաքննումների և ստուգողական աշխատանքների: Հատկանշական է նաև այն, որ զարգացնող գնահատման ժամանակ գնահատող կարող է լինել ինչպես ուսուցիչը, այնպես էլ աշակերտը: Օրինակ, աշակերտներին պետք է տալ հնարավորություն հաստատել և ստանալ հետադարձ կապ համադասարանցիներից և ակտիվորեն կիրառել մետակոգնիտային և կոգնիտային ռազմավարությունները ինքնագնահատման նպատակով:

Ուսումնական գործընթացի գնահատմանը նման մասնակցությունը աշակերտի մոտ կզարգացնի ինքնուրույն ուսուցման ունակություններ-հմտություններ, կօգնի տիրապետել ուսման ռազմավարություններին, կտա հնարավորություն գիտակցաբար նպաստելու սեփական առաջընթացին ու հաջողությանը: Գնահատմանը աշակերտին մասնակից դարձնելու հիմնական նպատակն է աշակերտի ինքնագիտակցությունը ուսման գործընթացներում, ինչը նրան կսովորեցնի այս գործընթացները գիտակցված և անկախ կառավարել:

Ազգային ուսումնական պլանում կիրառվում է երկու տեսակի գնահատում՝ զարգացնող և սահմանող։

	Դասարանական գնահատում		Արտաքին գնահատումներ
Զարգացնո՞ղ, թե՞ սահմանող	Զարգացնող	Սահմանող	Սահմանող
Գնահատման ձևերն ու գնահատողները	Ուսուցիչ- Բանավոր կամ գրավոր հետադարձ կապ, խրախուսիչ ցուցումներ, գիտելիքը/ընկալումը ստուգող հարցեր, խորագրեր,թեստեր և այլն։ Աշակերտներ- ինքնագնահատում, ինքնակարգավորող ուսուցում (մետակոգնիցիա և ինքնակարգավորում), փոխգնահատում։	Ուսուցիչ- միավորով կամ/և մեկնաբանությամբ գնահատված ամփոփիչ գնահատում (միավորին կարող է կցված լինել մեկնաբանություն ուժեղ և թույլ կողմերի նկարագրությամբ, թերությունները ուղղելու ցուցումներով)	Արտաքին գնահատող- միասնական ազգային քննություններ, ստանդարտ թեստեր, Cambridge KET, PET, FCE; PISA, PIRLS, TIMMS։
Խնդիրներ	Գիտելիքի համակարգման և գիտելիքները միմյանց կապելու գործընթացի գնահատում, նախորդ գիտելիքի/պատկերացումների սահմանում, աշակերտի կողմից սեփական ուժեղ և թույլ կողմերի սահմանման ունակության գնահատում, աշակերտի կողմից սեփական առաջընթացին օժանդակելու համար գիտակցված քայլեր կատարելու ունակության գնահատում, երեք կարգի գիտելիքի յուրացման գործընթացի գնահատում, գիտելիքի միասնական գործառնական կիրառման ունակության գնահատում։	Գիտելիքը իրար կապելու ունակության գնահատում, Գիտելիքի բոլոր երեք կարգի կիրառման ունակության գնահատում, Գիտելիքի միասնական գործառնական կիրառման ունակության գնահատում։ Կուրիկուլումի, կիրառված հրահանգչական ռազմավարությունների	Ակադեմիական տարվա ընթացքում գիտելիքի ամփոփիչ գնահատում, աշակերտների սելեկցիա համալսարաններ ընդունվելու համար և այլն։

		արդյունավետության գնահատում և այլն:	
Նպատակներ	Ուսման որակի բարելավում, աշակերտի առաջընթացին և զարգացմանը աջակցություն:	Աշակերտի ակադեմիական նվաճումների մակարդակի սահմանում առարկայական ուսումնական պլանի արդյունքների առնչությամբ:	Հավաստագրային գնահատում, աշակերտների նվաճումների մակարդակի գնահատում:

Հատկանշական է նաև այն, որ հնարավոր է ամեն սահմանող գնահատականի արդյունքը, լինի դա նշան, թե երաշխավորություն, կիրառված լինի զարգացնող նպատակների համար:

Զարգացնող գնահատման ժամանակ ուսուցիչը անպայման պետք է հաշվի առնի զարգացնող գնահատման 5 ռազմավարությունները/գործոնները.

- ո՞ր նպատակին (երկարաժամկետ/միջանկյալ) է ուղղված զարգացնող գնահատականը,
- որքանո՞վ են ուսումնական գործընթացում իրականացված առաջադրանքները աշակերտին տալիս գիտելիքի/սեփական կարողությունների բացահայտման հնարավորություն և որքանո՞վ է նպաստել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը աշակերտի գործառնական ունակությունների զարգացմանը:
- Ինչքա՞ն արդյունավետ է կիրառվում զարգացնող հետադարձ կապը աշակերտի առաջընթացի և զարգացմանը նպաստելու նպատակով:
- Ինչպե՞ս են աշակերտները կիրառում փոխգնահատման ռազմավարությունները:
- Ինչքանո՞վ է աշակերտը ուշադրություն դարձնում մետակոգնիտային տեսակետներին:

<table>
<tr><td></td><td>Ուր է գնում աշակերտը</td><td>Ինչ փուլում է աշակերտը</td><td>Ինչպես հասնենք նպատակին</td></tr>
<tr><td>Ուսուցիչ</td><td rowspan="4">Ո՞ր ուսումնական նպատակների, այդ թվում՝ երկարաժամկետ նպատակային կողմնորոշիչներին է ուղղված զարգացնող գնահատականը:</td><td rowspan="2">Որքանո՞վ են ուսումնական գործընթացում կատարված առաջադրանքները աշակերտին տալիս գիտելիքի/սեփական ունակությունների բացահայտման հնարավորություն և ինչքանո՞վ է նպաստել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը աշակերտի գործառնական ունակությունների զարգացմանը:</td><td rowspan="2">Որքանո՞վ արդյունավետ է կիրառվում զարգացնող հետադարձ կապը աշակերտի առաջընթացին և զարգացմանը նպաստելու նպատակով:</td></tr>
<tr><td>Հասակակից</td></tr>
<tr><td rowspan="2">Աշակերտ</td><td colspan="2">Ինչպե՞ս են աշակերտները կիրառում փոխգնահատման ռազմավարությունները:</td></tr>
<tr><td colspan="2">Որքանո՞վ է աշակերտը ուշադրություն դարձնում մետակոգնիտային տեսակետներին:</td></tr>
</table>

Զարգացնող գնահատականի մաս է կազմում նաև ուսուցչի ինքնավերլուծությունը, այսինքն՝ վերլուծությունը, թե որքանով է ուսուցչի գործունեությունը ազդեցություն թողել աշակերտի նվաճումների վրա, ինչ պետք է հաշվի առնել հետագայում ուսումնական գործընթացը պլանավորելիս:

<table>
<tr><td colspan="3">Զարգացնող գնահատական</td></tr>
<tr><td>Նպատակային կողմնորոշիչ</td><td>Մետակոգնիցիա</td><td>Գործառնական/բաղադրիչ ունակություններ</td></tr>
<tr><td colspan="3">Աշակերտի նվաճումների նկարագրություն-

Խորհուրդ աշակերտներին-
ուսուցչի ինքնավերլուծություն-</td></tr>
</table>

Ուսման որակի բարելավմանը նպաստելու համար առավելությունը պետք է տալ զարգացնող գնահատականին, որը գնահատում է աշակերտին նրա նախորդ արդյունքի հետ համեմատած, չափում է անհատական առաջընթացը և այսպիսով, աշակերտին տալիս է գիտելիքը փուլ առ փուլ կառուցելու (կոնստրուկտավորելու) հնարավորություն։

Աշակերտի ձեռքբերումները գնահատելիս՝ ուսուցչին կօգնի Ազգային ուսումնական պլանի արդյունքներին հասնելու վերևում հիշատակված տաքսոնոմիան, որի միջոցով նկարագրվում է որոշակի հարցի առնչությամբ թիրախային հասկացության որակը։

Որոշիչ գնահատման համար ըստ Ազգային ուսումնական պլանի կիրառվում է երկու մոդել։
Մոդել 1- Թվանաշանը դրվում է ընթացիկ դասարանական, տնային և ամփոփիչ առաջադրանքների մասում, իսկ կիսամյակային միավորը հաշվվում է այս երեք բաղադրիչների թվաբանական միջինի հիման վրա։

Մոդել 2- Թվանշանը դրվում է միայն ամփոփիչ առաջադրանքներում։ Դրանց քանակը սահմանում է դպրոցը՝ ելնելով դպրոցական ուսումնական պլանի առաջնահերթություններից։
Դպրոցն իրավունք ունի տարբեր դասարաններում, տարբեր առարկաներից որոշիչ գնահատականի տարբեր մոդելներ կիրառել։

Ներքևում տրված է գնահատման ռուբրիկան՝ խորագիրը, որը ներկայացնում է, թե որ առանձնահատկությունները պետք է գնահատել թվանշանով ուսանում-ուսուցման գործընթացում։

Ընդհանուր չափորոշիչ (ընդհանուր)	Գնահատման չափանիշներ (որոշակի)	Միավոր	Մեկնաբանություն
Աշակերտը ակտիվորեն մասնակցում է ուսումնական գործընթացին	Աշակերտը ճիշտ է հասկացել համալիր առաջադրանքի պահանջը։		
Աշակերտը ցույց է տալիս փաստացի նյութի իմացություն, ընթացակարգային գիտելիքի կիրառմամբ ընդհանրացնում է թիրախային հասկացության վերաբերյալ կարծիքները։	Առարկայական հարց/հարցեր.		

Աշակերտը կարող է ընդհանրացնել համալիր առաջադրանքի գնահատման չափանիշի տեսքով ձևավորված կարծիքները:	Համալիր առաջադրանքի գնահատման չափորոշիչ 1:		
	Համալիր առաջադրանքի գնահատման չափորոշիչ 2:		

Մետակոգնիտային և գործառնական/բաղադրիչային ունակություններ

Ազգային ուսումնական պլանը առանձնացնում է 6 գործառնական ունակություն և դրանց հետ կապված կոգնիտային գործողություններ, որոնց վրա առանց առանձնահատուկ ուշադրություն հատկացնելու չի հաջողվի թիրախային հասկացությունները զարգացնել: Այս ունակությունների վրա աշխատել պահանջվում է բոլոր առարկաների ուսուցիչներից բոլոր աստիճաններում, յուրաքանչյուր թիրախային հասկացության առնչությամբ: Բոլոր համալիր առաջադրանքները նկատի ունեն նաև հանգուցային հարցերի սահմանում, որի շուրջը մտածելը լեյտմոտիվի ձևով հետապնդում է համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացին: Օրինակ, վերևում քննարկված համալիր առաջադրանքի առնչությամբ հանգուցային հարցերն են.

- ինչպե՞ս մտահոգել դպրոցական հանրության անդամներին քաղաքացիական անվտանգության վերաբերյալ հարցերում,
- տեղեկատվական պաստառի միջոցով ինչպե՞ս ներկայացնել կյանքի համար կարևոր երաշխավորություններ արտակարգ իրավիճակում
  սեփական և շրջապատում գտնվող անձանց անվտանգությունը պահպանելու վերաբերյալ:

Առաջին դեպքում կարևոր է սահմանել, թե ինչ կուսումնասիրի աշակերտը, երկրորդում՝ ինչպես կկարողանա իրականացնել մտադրությունը (երբեմն այս երկու բաղադրիչները կարող են միավորված լինել):
Երկրորդ հարցի վրա կենտրոնանալիս ուսանում-ուսուցման գործընթացում ի հայտ են գալիս գործառնական-բաղադրիչային ունակությունները:

Ներքևում տրված են աղյուսակներ յուրաքանչյուր գործառնական-կոմպոնենտային՝ բաղադրիչային ունակությունների վերաբերյալ: Դրանք կօգնեն ուսուցչին զարգացնող գնահատման գործընթացում:

Գործառնական ունակություն- **քննադատական մտածողություն**	**Կոգնիտային գործողություններ/բաղադրիչներ**
Դիտարկում	Հիշել Բացահայտել
Օրինաչափության բացահայտում և ընդհանրացում	Համեմատել և հակադրել (կոնտրաստ) Դասակարգել Իրական և ոչ իրական տեղեկության նույնականացում
Եզրահանգումների ձևակերպում օրինաչափությունների հիման վրա	Առաջնային եզրահանգում Ենթադրություն անել
Եզրահանգումների գնահատում դիտարկման հիման վրա	Հերթականությունը ստուգել Միտումնավորության, կարծրատիպերի, կլիշեների և պրոպագանդայի՝ քարոզչության նույնականացում Անհիմն թույլտվությունների նույնականացում Չափազանցված ընդհանրացման կամ նվազագույն ընդհանրացման բացահայտում Եզրահանգումների հաստատում փաստարկներով

Գործառնական ունակություններ- ստեղծագործականություն	**Կոգնիտային գործողություններ/ բաղադրիչներ**
Ազատ մտածողություն	Հարցերի առաջադրում Գաղափարների գեներացում, խնդիրների լուծման ճանապարհների անվանում, այլընտրանքային պատասխանների որոնում և խնդիրների լուծման ուղիների առաջարկում
Թեքություն	Խնդիրը տեսնել և գնահատել տարբեր հեռանկարներից Մոտեցման բազմազանություն (approach)
Յուրօրինակություն	Յուրօրինակ և նոր գաղափարների գեներացում Տարբեր տարրերից յուրօրինակ կոմբինացիայի ստեղծում
Ուշադրության սևեռում մանրամասների/դետալների վրա	Գաղափարների զարգացում և հարստացում մանրամասնությունների հաշվին

Գործառնական ունակություն-հաղորդակցություն	**Կոգնիտային գործողություններ/բաղադրիչներ**
Տեղեկության արտահայտում պարզորոշ և բովանդակալից	Նպատակայնություն (տեղեկացված լինել, հրահանգավորել, հավաստիացնել) Խոսելու՝ արտահայտվելու տեսակի ընտրություն- նկարագրել, պատմել, քննարկել Ակտիվ լսողություն (հաստատել կապեր, գտնել վստահություն, երկխոսություն վարել (այսինքն՝ մոնիտորինգ), նպատակային ֆրագմենտացիա) Համատեքստայնացում (հաղորդակցման իրավիճակի վերլուծություն և արտահայտման իրական միջոցների ընտրություն) համապատասխան գործառնական խոսակցական գործողությունների կիրառում) Ոչ վերբալ՝ բանավոր ազդանշաններ (մարմնի լեզու, միմիկա, ժեստիկուլացիա և այլն) Բացվածություն
Ինքնավստահություն	Բարյացակամություն
Էմպաթիա (ուրիշի աչքով տեսնել)	Ինքնավերլուծություն/ հետադարձ կապ հարաբերությունների մոնիտորինգ
Ճանաչում-ընդունում	Հավասարություն Պատասխանատվություն Հանդուրժողականություն (տարբերության ընդունում) Կողմնորոշում խնդրի և հաղորդակցության մեջ չմտած սուբյեկտների վրա

Գործառնական ունակություն-համագործակցություն **Համատեղ աշխատանք** **Ընդհանուր պատասխանատվություն** **Էական որոշումներ (բովանդակություն, գործընթաց, արդյունք)**	**Կոգնիտային գործողություններ/բաղադրիչներ** Դեմ առ դեմ և տեխնոլոգիաների կիրառմամբ գաղափարների և ռեսուրսներով կիսվելու ճանապարհով Ընդհանուր նպատակ Հաշվետու լինել արդյունքի առնչությամբ Նախորդ գիտելիքի կիրառում որոշումներ կայացնելու նպատակով Դերերի և պատասխանատվության բաժանում Արդյունքի/ապրանքի դիզայն, բնույթ և կիրառություն Փոխհարաբերություն (հաշվետվության երկու մակարդակ՝ անհատական և խմբային)
Գործառնական ունակություն-Քաղաքացիություն **Գերագույն էթիկայի սկզբունքներ** **Հաշվետվություն հասարակության հանդեպ և համատեղ ստեղծագործականություն** **Թեմայի առաջնահերթությունների ընկալում**	**Կոգնիտային գործողություններ/բաղադրիչներ** Մարդու արժանապատվություն Թյուրիմացության հանդեպ ներողամիտ վերաբերմունք Պատասխանատվություն Հակամարտությունների՝ կոնֆլիկտների կառավարում Օրենքի գերակայության գնահատում Տեղային թեմայի ակտուալ խնդիրներ Երկրի համար ակտուալ խնդիրներ Գիտենալ և ճանաչել աշխարհը

Գործառնական/կոմպոնենտային ունակություն-բնավորություն, կամք	Կոգնիտային գործողություններ/բաղադրիչներ
Ինքնություն	Սեփական կարողությունների և հետաքրքրությունների բացահայտում (ով եմ ես) Որոշումների կայացում ինքնաիրացման համար (որի հետ ես կապված եմ)
Ինքնակարգավորում	Նպատակների առաջադրում Պլանավորել Ինքնարդյունավետության զգացում Ապրումներ Ուսման ռազմավարություններ Մոնիտորինգ և գնահատում Օգնության համար դիմել ուրիշներին
Ինքնաարդիականացում	Խանդավառություն (էնթուզիազմ) բոլոր գործերի հանդեպ Ինքնավարություն Սեփական անձի դրական գնահատում Մարդկանց և աշխարհի հանդեպ բարյացակամություն Գործընթացին կողմնորոշվածություն

Գործառնական ունակությունների վրա աշխատանքը առանձնացված տեղի չի ունենում: Աշակերտը յուրաքանչյուր համալիր առաջադրանքի վրա աշխատելիս դրանք կիրառում է սիներգիայով: Գործառնական-կոմպոնենտային ունակությունները իրենցից ներկայացնում են հարցի խորապես ընկալման միջոցներ: Չնայած, մյուս կողմից հարցը ինքն է տալիս դրանք զարգացնելու հնարավորությու

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել **մետակոգնիտայինին**: Մետակոգնիտայինը մտածողության գործընթացի վերահսկում և կառավարում է: Այն բանի համար, որ աշակերտը հաջողությամբ կառավարի մտածողության գործընթացները, նա պետք է կարողանա կառավարել նաև անկախությունն (կեցություն-վարք) ու զգացմունքները: Այս գործընթացը կոչվում է ինքնակարգավորում: Այն կարելի է պատկերել հետևյալ ճանապարհով.

	Կոգնիտային գործընթացներ/մտածողություն	Կենսակերպ-վարք	Զգացմունքներ
Մոնիտորինգ	Մետակոգնիտային	Ինքնակարգավորում	
Հսկողություն/կիրառում			

Ինչպես վերևում տրված աղյուսակից է երևում, մետակոգնիտայինը և ինքնակարգավորումը սերտ կապված են միմյանց, ինչը նշանակում է, որ մետակոգնիտական ռազմավարությունների արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որ աշակերտը միասնաբար կարողանա սեփական զգացմունքներն ու վարքը հսկել և կառավարել: Այս միասնական գործընթացը կոչվում է ինքնակարգավորման ուսուցում:
Այս գործընթացը ինքնըստինքյան այսպես կարող է պատկերվել.



Մետակոգնիտական ունակությունների զարգացման համար ուսուցիչը պարբերաբար պետք է անցկացնի երեք տեսակի ակտիվություն։ Այս ակտիվություններն են.

- **ռազմավարությունների մոդելավորում**- Ուսուցիչը աշակերտների հետ կատարում է առաջադրանքը և այն կատարելիս «մտածում է բարձրաձայն» այն մասին, թե ինչպես կատարի այս ակտիվությունը (օր.՝ լավ ծանոթանանք պայմանին և դիտարկենք, թե ինչ է պահանջում այն, պայմանը ունի՞, թե՞ ոչ կցված նյութ, օր.՝ նկարներ, մինչև կկարդանք տեքստը, ավելի լավ չէ՞, եթե ծանոթանաք նկարներին և տեսնենք, թե ինչ տեղեկություն է տալիս այն և այլն)։
- **Նախնական մետակոգնիտական դադար, այսինքն՝ մինչև կատարելը մտածել ու քննարկել կատարվելիք քայլերը**- այն բանից հետո, ինչ աշակերտները կծանոթանան առաջադրանքի պայմանին, հանձնարարենք կատարել մետակոգնիտական բնույթի նման ակտիվություն. նրանք խմբերով պետք է սահմանեն այն ճանապարհը, որով կկատարեն առաջադրանքը, մասնավորապես՝ մանրամասն նկարագրեն առաջադրանքի կատարման փուլերը (ինչը ինչից հետո կատարեն և այլն) և ռազմավարությունները, որոնք կկիրառեն յուրաքանչյուր փուլում։ Խմբերը պետք է ներկայացնեն իրենց աշխատանքները և քննարկեն ընտրված ճանապարհների կամ ռազմավարությունների նպատակահարմարությունը։
- **Հետագա մետակոգնիտական դադար, այսինքն մտածել առաջադրանքը կատարելուց հետո և քննարկել արված քայլերը**- այն բանից հետո, երբ աշակերտները կկատարեն կոնկրետ առաջադրանքը, նրանք պետք է հիշեն և նկարագրեն անցած ճանապարհը. ինչն ինչից հետո են արել, ի՞նչ միջոցներ են կիրառել աշխատելիս, ինչո՞ւմ են դժվարացել և ի՞նչը հեշտությամբ արել։ Կատարված գործողությունները նկարագրելուց հետո աշակերտները կգիտակցեն այն փաստը, որ նպատակին հասնելու համար գոյություն ունեն տարբեր ճանապարհներ և միջոցներ, որոնց մասին պետք է մտածել մինչև առաջադրանքը կատարելը (լավագույն որոշումը կայացնելու համար)։ Մետակոգնիտական դադարը կզարգացնի աշակերտի ուսման ունակություններն ու գործունակությունը։

Թիրախային հասկացությունների վրա աշխատելիս հարկավոր է նաև հոգ տանել **ինքնակարգավորման** ունակության զարգացման մասին, ինչի համար աշակերտը ինքը իրեն պետք է պարբերաբար տա հետևյալ հարցերը.
ռազմավարություն. երբևէ կիրառե՞լ եմ այս ռազմավարությունը հաջողությամբ։ Ինչո՞ւ է այս ռազմավարությունը դարձել հաջողված։ Ինչպե՞ս համոզվեմ, որ այս անգամ էլ հաջողությամբ կկիրառեմ այս կամ այն ռազմավարությունը։

Համալիր առաջադրանքի ժամանակ.ինչպե՞ս եմ գլուխ հանում առաջադրանքից։ Ընդհանրապես, նման առաջադրանքներում ի՞նչ սխալներ եմ թույլ տալիս։ Ինչպե՞ս խուսափեմ այս սխալներից։ Այս համալիր առաջադրանքում ինչո՞ւմ եմ դժվարանում։ Ի՞նչն է ամենադժվարը։ Ինչո՞ւ։ Ի՞նչն եմ կարողանում լավ անել և ինչո՞ւ։

Մոտիվացիա. համալիր առաջադրանքը կատարելիս ինչպե՞ս եմ զգում ինձ։ Մոտիվացվա՞ծ եմ, որ կատարեմ առաջադրանքը բարձր որակով։ Ի՞նչ կարող եմ անել հիմա իմ մոտիվացիան բարձրացնելու համար։ Առաջադրանքը կատարելուց հետո. ինչպե՞ս լինեմ ավելի մոտիվացված հաջորդ համալիր առաջադրանքի համար։

Ինքնակարգավորվող ուսման համար հարկավոր է աշակերտը կատարի ռեֆլեքսիա/անդրադարձ հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ի՞նչ եմ սովորել այսօր/այս շաբաթ / այս կիսամյակ։
- Ի՞նչ զգացմունք է տիրում ինձ, երբ գիտեմ, որ նոր բան եմ ուսումնասիրել։
- Ի՞նչ ժամանակ եղավ անհրաժեշտ որոշակի հարց սովորելու համար։ Պետք եղա՞վ, թե՞ ոչ ավելի շատ, քան սկզբում կարծում էի։
- Ի՞նչ տարբերություն կա ուսման և հիշողության միջև։
- Ի՞նչ ռազմավարություններ կարող եմ կիրառել, որ ավելի լավ հիշեմ փաստերը։

Թեմա 1. Գլոբալ քաղաքացիություն

Թեմա. Գլոբալ քաղաքացիություն	Ժամերի հավանական քանակը՝ 36
Թեմային վերաբերող կայուն պատկերացումներ.	
Հասարակություն	• մարդու անհատական զարգացման վրա ազդեցություն է գործում ինչպես տեղային, այնպես էլ գլոբալ միջավայրը, • գլոբալ քաղաքացիությունը նկատի ունի սեփական իրավունքների և պատասխանատվության ընկալում ոչ միայն տեղային մակարդակով (հարևան թեմ/համայնք, երկիր), այլև ամբողջ աշխարհի մասշտաբով,
Ժողովրդավարություն	• տեղային և գլոբալ մակարդակով ժողովրդավարական սկզբունքների պահպանումը նպաստում է մարդու անհատական զարգացմանը, • քաղաքացիության հայեցակարգը փոխվում էր պատմական ժամանակաշրջանը հաշվի առնելով, ներկայիս փուլում ժողովրդավարական սկզբունքները գլոբալ քաղաքացիության և միջազգային հարաբերությունների հիմքն են:
Քաղաքացիական մասնակցություն	• գլոբալ մակարդակով մարդու իրավունքների և ազատության պահպանմանը նպաստում են միջազգային փաստաթղթերը, ինստիտուտները և ժամանակակից միջազգային հարաբերությունների համակարգը, դրանց միջոցով հնարավոր է մարդու տարբեր իրավունքների հետ կապված հարցերի շահարկում և փաստաբանություն,
Կայուն զարգացում	• կայուն զարգացման սկզբունքները գլոբալ քաղաքացիության հիմքն են, • տեղային գործողություններին հետևում են գլոբալ արդյունքները:

Թեմատիկ հանգուցային հարցեր.

- Ինչո՞ւ է հարկավոր մարդուն գլոբալ քաղաքացիության համար սեփական իրավունքների և պատասխանատվության ընկալում ոչ միայն տեղային մակարդակով (հարևան թեմ, երկիր), այլև ամբողջ աշխարհի մասշտաբով **(Թիրախային հասկացություն- հասարակություն, ժողովրդավարություն)**
- Ինչպե՞ս է նպաստում մարդու անհատական զարգացմանը ժողովրդավարական սկզբունքների պահպանումը տեղային և գլոբալ մակարդակով **(Թիրախային հասկացություն- հասարակություն, ժողովրդավարություն)**
- Ինչպե՞ս էր փոխվում քաղաքացիության հայեցակարգը պատմական ժամանակաշրջանին համապատասխան: Ինչո՞ւ են ժամանակակից փուլում ժաղովրդավարական սկզբունքները համարվում գլոբալ քաղաքացիության և միջազգային հարաբերությունների հիմք **(ժողովրդավարություն):**
- Ինչպե՞ս են ապահովում իրավունքների հետ կապված հարցերը գլոբալ մակարդակով շահարկման և փաստարկման հնարավորությունը միջազգային փաստաթղթերը, ինստիտուտները, ժամանակակից միջազգային հարաբերությունների հիմքը **(Թիրախային հասկացություն- հասարակություն, քաղաքացիական մասնակցություն)**
- Ինչո՞ւ են կայուն զարգացման սկզբունքները համարվում գլոբալ քաղաքացիության հիմք **(Կայուն զարգացում)**

Համալիր առաջադրանքներ (անվանում)	Թիրախային հասկացություններ և ենթահասկացություններ	Հարցեր/ ենթահարցեր	Հանգուցային հարցեր
1.Տեղեկատվական բուկլետի/սյալայդշոուի ստեղծում քաղաքացիության հայեցակարգի զարգացման տարբեր փուլերում քաղաքացիություն ստանալու, այդ թվում՝ կանանց ու տղամարդկանց հավասարության հնարավորությունների մասին,	**Ժողովրդավարություն** Մարդու իրավունքներ Ժողովրդավարական սկզբունքներ	**Մարդու և քաղաքացու իրավունքներ,** **Ենթահասկացություն**. Գենդերային հավասարություն	• Ինչպե՞ս պատկերեմ բուկլետում/սյալդշոուում քաղաքացիության հայեցակարգի փոփոխությունները (այդ թվում՝ կանանց իրավական կարգավիճակը) ըստ պատմական ժամանակաշրջանի։ • Ինչպե՞ս բացատրեմ ընթերցողին/ունկնդրին գենդերային հավասարության պահպանման նշանակությունը ժողովրդավարական պետությունում։
2. Հոդվածի պատրաստում Վրաստանում գործող գենդերային կարծրատիպերի և համապատասխան խախտումների մասին իրավունքների և ժողովրդավարության սկզբունքների տեսանկյունից	**Ժողովրդավարություն** Մարդու իրավունքներ Ժողովրդավարական սկզբունքներ	**Մարդու և քաղաքացու իրավունքներ,** **Ենթահասկացություն.** Գենդերային հավասարություն	Ինչպե՞ս պատկերեմ **հոդվածում** Վրաստանում առկա գենդերային կարծրատիպերը և դրանց ազդեցությունը մարդու իրավունքները և ժողովրդավարական սկզբունքները պահպանելու վրա։
3.Կազմակերպության **առաքելության տեքստի** պատրաստում արժեքների, նպատակների, ընտրված գլոբալ խնդիրների լուծման ճանապարհների և քաղաքացիական մասնակցության ձևերի մասին։	**Քաղաքացիական մասնակցություն** Կամավորություն	**Գլոբալացում** **Ենթահարցեր.** Միջազգային կազմակերպություն-«Համաշխարհային քաղաքացի»	Ինչպե՞ս պատկերեմ **առաքելության տեքստում** միջազգային կազմակերպության նպատակը և այս նպատակին հասնելու քաղաքացիական մասնակցության ընտրված ձևերի, ռազմավարությունների և ակտիվությունների նպատակահարմարությունը։
4. Գլոբալ քաղաքացու **«Կամավորի օրագրի»** ստեղծում հանրային կարիքներին ուղղված կամավորական ակտիվությունների մասին։	**Քաղաքացիական մասնակցություն** Կամավորություն	**Գլոբալացում** **Ենթահարց.** Կամավորություն առանց սահմանների (Դավինիայի պատմությունը)	Ինչպե՞ս ներկայացնեմ իմ **«Կամավորության օրագրում»** միջազգային հանրության կարիքներին և հետաքրքրություններին ուղղված կամավորական ակտիվության նկարագրությունը, աջակիցների հավաքագրման ձևերը։
5.Լրագրային հոդվածի ստեղծում կայուն զարգացման ընտրված բաղադրիչի (մարդ, մոլորակ, բարեկեցություն), այլ բաղադրիչների հանդեպ և հասակակիցների համար համապատասխան խորհուրդներ տալու մասին։	**Կայուն զարգացում** Կայուն զարգացման գլոբալ նպատակները	**Կայուն զարգացում** **Ենթահարց.** Կայուն զարգացման բաղադրիչներ (մարդ, մոլորակ, բարեկեցություն)	• Ինչպե՞ս ներկայացնեմ հոդվածում կայուն զարգացման ընտրված բաղադրիչների նշանակությունը, կապը այլ բաղադրիչների հետ և կոնկրետ խորհուրդներ ընթերցողի համար։

6.**Հրավիրատոմսի պատրաստում**, որը հասցեատիրոջ մոտ կառաջացնի միջոցառմանը պատկանելիության զգացում և նաև այնպիսի կանոններ կառաջարկի, որոնք բազմազգ հանրությունում հոգ կտանեն հումանիտար հարաբերությունների մասին:	**Հասարակություն** **Մարդու պահանջմունքներն ու կարիքները, Սոցիալ-էմոցիոնալ ունակություններ,**	**Սոցիալ-էմոցիոնալ ունակություններ** **Ենթահարց.** Պատկանելիության զգացում	• Ինչպե՞ս կազմեմ հրավիրատոմս, որը հասցեատերերի/ունկնդիրների մոտ կառաջացնի/կամրապնդի միջազգային միջոցառումների հանդեպ պատկանելիության և ներողամիտ խմբերի հանդեպ էմպաթիայի զգացումը: • Ինչպե՞ս պատկերեմ նամակում անհրաժեշտ սոցիալ-էմոցիոնալ ունակություններով կազմված կանոնները, որոնք բազմազգ հանրության մեջ ապահովում են մարդասիրական հարաբերություններ:
7.Ռեպորտաժի պատրաստում խաղաղության մոլորակից, որտեղ նկարագրված կլինի շրջակա միջավայրը, որտեղ զինված հակամարտություններ չեն լինի և այլ հակամարտություններ լուծում են նախնական փուլում ասերտիվ հաղորդակցության և մեդիացիայի ճանապարհով:	**Հասարակություն** **Սոցիալ-էմոցիոնալ ունակություններ**	**Գլոբալացում և հաղորդակցություն** **Ենթահարց.** հակամարտության բացահայտում և կառավարում	• Ինչպե՞ս ներկայացնեմ **ռեպորտաժում** դրական խաղաղության առավելությունը և կոնֆլիկտի արդյունավետ կառավարման հնարավորությունները: • Ինչո՞ւ է կարևոր մեդիայի ոչ ագրեսիվ քաղաքականությունը անձնավորության և հանրության զարգացման համար:
8.**Մինիդասագրքի** պատրաստում, որտեղ տրված կլինեն մեդիագրագիտության և հատկապես տեղեկության տեսակավորման համար անհրաժեշտ խորհուրդներ և մարդու անհատական զարգացման համար դրանց կարևորության բացատրությունը:	**Հասարակություն** Մարդու պահանջմունքներ և կարիքներ, Հասարակական խմբեր-մեդիա	**Գլոբալացում և հաղորդակցություն** **Ենթահարց.** Տեղեկության տեսակավորում	• Ինչպե՞ս պատկերեմ **մինիդասագրքում** մեդիագրագիտության և և հատկապես, տեղեկության տեսակավորման համար անհրաժեշտ խորհուրդները և բացատրեմ դրանց նշանակությունը անձնավորության զարգացման համար:

Թեմայի շրջանակներում արդյունքի հասնելու ցուցիչները՝ ըստ թիրախային հասկացությունների.

Հասարակություն- աշակերտը պետք է կարողանա.

- վերլուծել մարդու անհատական զարգացման և գլոբալ քաղաքացի ձևավորվելու համար էական գործոնները (նույնականություն, ինքնավերլուծություն, ինքնատիրապետում, սոցիալական գիտակցություն, հարաբերությունների ունակություն, որոշում կայացնելու համար պատասխանատվություն, էմպաթիա, ասերտիվություն, կոնֆլիկտի ոչ բռնության մեթոդներով կառավարում, գրագիտություն և թվային իրավասություններ),

Ժողովրդավարություն- աշակերտը պետք է կարողանա.

- կապել մարդու սոցիալական ունակությունները և գլոբալ քաղաքացիության էական բաղադրիչները ժողովրդավարության սկզբունքներին (հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, պատասխանատվություն, ներառականություն, ոչ բռնապետական մեթոդների կիրառում, հանդուրժողականություն),

Քաղաքացիական մասնակցություն- աշակերտը պետք է կարողանա.

- գլոբալ քաղաքացու տեսանկյունից առանձնացնել ակտուալ խնդիրները և ընտրել դրանք լուծելու ճանապարհները (այդ թվում՝ որոնել համագործակցության ճանապարհներ տարբեր հետաքրքրությունների տեր խմբերի և պետական հաստատությունների հետ, խաղաղ ճանապարհով լուծել կոնֆլիկտը, գտնել և բացահայտել ապատեղեկատվությունը),

Կայուն զարգացում- աշակերտը պետք է կարողանա

- կապել գլոբալ քաղաքացիության էական բնութագրիչները կայուն զարգացման սկզբունքներին։

Թիրախային հասկացություն. ժողովրդավարություն **Առաջադրանք**			**Ընտրե՛ք որևէ մեկը**
Երկարաժամկետ նպատակ **Թիրախային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ**	**Հարց.** Մարդու և քաղաքացու իրավունքներ **Ենթահարց.** Գենդերային հավասարություն **Ենթահարցեր.** Մարդու իրավունքներ Ժողովրդավարության սկզբունքներ	**Հանգուցային հարց/հարցեր** • Ինչպե՞ս պատկերեմ բուկլետում/սյալդշոուում քաղաքացիության հայեցակարգի փոփոխությունները (այդ թվում՝ կանանց իրավական կարգավիճակը) ըստ պատմական ժամանակաշրջանի: • Ինչպե՞ս բացատրեմ ընթերցողին/ունկնդրին գենդերային հավասարության պահպանման նշանակությունը ժողովրդավարական պետությունում:	**Միջանկյալ ուսումնական նպատակ** **Համալիր առաջադրանքի պայմանը**
Ժողովրդավարություն (մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ) **<u>Արդյունքներ.</u>** (Քաղ.միջ.1,2,3,4) 1.Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար, սեփական արժեքներով և իրավունքներով,	**Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ռեսուրսներ, ակտիվություններ).** **I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը** **Քայլ 1.** Ինչպե՞ս պետք է արտահայտեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ : **Ենթահարց.** Առաջադրանքի պայմանը **Ռեսուրս.** Դասագիրք, էջ 6-8 (ընտրե՛ք առաջադրանքը) **Ակտիվություն.** Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին առաջադրանքի տեքստը և պայմանը ընկալելու համար, նաև ըստ աշակերտների փորձի, հնարավոր է կատարված պրակտիկայի կիրառում: **Հարցեր.** • Ինչի՞ն է վերաբերվում առաջադրանքը: Իրակա՞ն է, թե՞ երևակայական դրա պայմանը: • Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում «քաղաքացիության փորձագետ»: Ի՞նչ պետք է իմանա նա: • Ի՞նչ նյութ է պահանջվում ձեզանից ստեղծել: • Ի՞նչ կարող եք/գիտեք սրա հետ կապված: • Ի՞նչ գիտելիք և ունակություններ են հարկավոր ձեզ, որ կարողանաք կատարել այս առաջադրանքը:		**Առաջադրանք 1.** **Համալիր առաջադրանքի պայման** Պատկերացրեք, որ Վրաստանի տարածքում ծնված Զեզվան և Մզիան իրենց պատմական ժամանակաշրջանից ճանապարհորդել են «ժամանակի գնացքով» և բնակվել այլ պատմական ժամանակաշրջանում: Գնացքը 4 կանգառ ունի. 1. Աթենք (մ. թ. ա. VII-V դդ.), 2. Հռոմ (մ. թ. ա. I դար), 3. Անգլիա (XIII դար), 4. Վրաստան (2022 թվական):

2. Մարդն ունի սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կոլեկտիվ իրավունքներ, Վրաստանի սահմանադրությունը և միջազգային փաստաթղթերը (հռչակագրեր, կոնվենցիաներ) իրականացնում են այս իրավունքների պաշտպանում, 3. Ժողովրդավարական հասարակությունում/ պետության մեջ մարդու իրավունքների գլխավոր արժեքներն են; 4. Ժողովրդավարությունը հիմնվում է հիմնային սկզբունքների վրա	**Ռեսուրս.** 1. Բուկլետ ստեղծելու ծրագիր https://www.youtube.com/watch?v=ysS3Cq9AseI 2. Բուկլետի նյութական նմուշներ, 3. Սլայդ շոուի ստեղծում (սկսնակների համար) https://www.youtube.com/watch?v=ZnLNGQyp_OE 4. Աշակերտների փորձը (նրանց փորձը ևս մեր ռեսուրսն է) **Ենթահարց.** Բուկլետ **Ակտիվություն.** Հարց-պատասխան կատարվելիք արդյունքի՝ բուկլետի/սլայդ շոուի մասին, **Հարցեր.** • Ի՞նչ է բուկլետը: Երբևէ ստեղծե՞լ եք: • Ի՞նչ բաղադրիչներից են կազմված. **(տեքստ, դիտակտիկ նյութ):** • Ինչպիսի՞ն է նրա կազմությունը **(վերնագիր, ներածություն, հիմնական մաս՝ ենթահարցեր, եզրահանգում, անհրաժեշտ խորհուրդներ և կոնտակտային տեղեկություն. . .):** • Ինչպե՞ս կարող ենք պատրաստել բուկլետ **(նյութական, էլեկտրոնային):** **Ենթահարց.** Սլայդ շոու **Հարցեր.** • Ի՞նչ է սլայդ շոուն: Երբևէ պատրաստե՞լ եք: • Ի՞նչ բաղադրիչներից է կազմված **(տեքստ, դիտակտիկ նյութ):** • Ինչպիսի՞ն է շնորհանդեսի կազմությունը **(ողջույնի խոսք, վերնագիր, նպատակի ծանոթացում, հիմնական մաս և ամփոփում-հրաժեշտ):** • Ո՞ր ծրագրերն եք օգտագործում սլայդշոուի համար: • Միջինը քանի՞ սլայդ շոուից պետք է կազմված լինի շնորհանդեսի ֆայլը, որ ընկալելի լինի **(10-12):**	Զեզվան և Մզիան ցանկանում են իջնել այն կանգառում, որտեղ նրանց քաղաքացիությունը՝ ընդունելի, իսկ իրավունքները հավասար և պաշտպանված կլինեն: Պատկերացրե՛ք նաև, որ դուք քաղաքացիության փորձագետ եք և Զեզվային ու Մզիային պետք է խորհուրդ տաք՝ որ կանգառում արժե իջնել և ինչո՞ւ: Դիտողականության համար պատրաստեք **բուկլետ/սլայդ շոու,** որտեղ քաղաքացիության այս փուլերի (կանգառների) բաղադրիչները կլինեն պատկերված Զեզվայի ու Մզիայի հետաքրքրություններից ելնելով: **Աշխատության մեջ/աշխատության շնորհանդեսի ժամանակ ընդգծված կերպով ներկայացրեք.** • Ինչպե՞ս է ապահովում ժողովրդավարական արժեքների պաշտպանումը մարդու ազատությունը, հավասարությունը, արժեքները: • Ո՞ր «կանգառում» ինչ սպասելիքներ կարող են

(հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, կառավարության բաժանում, արդար ընտրություններ, պատասխանատվություն, ներառականություն, ոչ բռնապետական մեթոդներով գործել, հանդուրժողականություն), առանց դրանց պաշտպանության չի կարող գոյություն ունենալ ժողովրդավարական պետությունը:	**Ակտիվություն.** Մտավոր գրոհ, եթե հարկ կհամարեք, կարող եք հանձնարարել պրակտիկ առաջադրանք (բուկլետի պլանի պատրաստելու, սլայդ շոու ստեղծելու վերաբերյալ): Սրանից հետո **համաձայնության եք գալիս առաջադրանքը ներկայացնելու պայմանների և ժամկետների մասին**: **Ամփոփում**. Աշակերտները կարող են տրված երկու նյութից ընտրել իրենց համար առավել ընդունելին, նրանք են որոշելու՝ բուկլետը նյութական ձևով ներկայացնե՞լ, թե՞ էլեկտրոնային (եթե, իհարկե չունեք կոնկրետ մանկավարժական նպատակ): **II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը** **Քայլ 1. Ինչպես է ժողովրդավարության սկզբունքների պաշտպանությունը ապահովում մարդու ազատությունը, հավասարությունը, արժանապատվությունը: Ո՞ր «կանգառում» ի՞նչ սպասելիքներ կարող են ունենալ Զեզվան ու Մզիան (Կ. պատկ. 1.4)** **Երաշխավորություն ուսուցչին.** Այս երաշխավորությունը պետք է հաշվի առնել բոլոր համալիր առաջադրանքների վրա աշխատելիս: Համալիր առաջադրանքի ենթահարցից են բխում շեշտադրումները, որոնցով գործում են քեյսերը, տեսական նյութը, անցկացվում են ակտիվություններ, և վերջում տեղի է ունենում գնահատում: **Ռեսուրս.** Դասագիրք, ի՞նչ է նշանակում լինել քաղաքացի, էջ 18-19 (նախորդ գիտելիքի ակտիվացում) **Երաշխավորություն ուսուցչին.** Այս պարագրաֆի ուսումնասիրությունը հիմնականում ծառայում է նախնական գիտելիքի ակտիվացմանը (քաղաքացիության էություն, ժողովրդավարության սկզբունքներ), օժանդակում է ակտիվութանը և շեղակի կապ ունի առաջադրանքի հետ): **Ակտիվություն**. Աշխատե՛ք խմբերով, էջ 9 Բաժանե՛ք ներքևում տրված տեղեկությունները հայտնի մարդկանց մասին, ծանոթացե՛ք և արե՛ք դատողություն. **Հարցեր.** • Ելնելով տեղեկատվությունից, ո՞ր քաղաքացիական տեսակետի կրող և աջակցող էր այս անձնավորությունը:	ունենալ Զեզվան ու Մզիան (Կ. պատկ. 1. 4): • **Ինչպիսի՞ն են քաղաքացիություն ստանալու հնարավորությունները և քաղաքացիների իրավունքները:** • **Ո՞ր իրավական փաստաթղթերով է կարգավորվում այս գործընթացը: Ինչպե՞ս կկապեք այս հնարավորությունը քաղաքացիություն որոնողների (Զեզվայի ու Մզիայի) իրավիճակի հետ: (Կ.պատկ. 2)** • Ինչպե՞ս է ապահովում հասարակությունը/պետությունը մարդու իրավունքների պաշտպանությունը առաջադրանքում տրված քաղաքացիության փուլերում: Ինչպիսի՞ն են պաշտպանության միջոցները/մեխանիզմները: **(Կ. պատկ. 2. 3.)** Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ **Հավելված 5, էջ 99-100** Համալիր առաջադրանքին

	Անվանեք կոնկրետ փաստարկներ։ • Ի՞նչ վերաբերմունք է ցույց տալիս նրանցից յուրաքանչյուրը մարդու և քաղաքացու իրավունքների/պարտականությունների հանդեպ։ Հիմնավորեք։ • Ինչպիսի՞ն է նրանց տեսակետը գենդերային, սոցիալական հավասարության, բազմազանության վերաբերյալ։ • Հիշե՛ք նման անձնավորություններ կյանքից, գրականությունից, ի՞նչ ունեն ընդհանուր։ Ինչպե՞ս են հարմարվում նրանք գենդերային հավասարության թեմային։ **Ակտիվություն**. Արե՛ք դատողություն, էջ 14 Ձեր կարծիքով, հնարավո՞ր է քաղաքացիական անվանել հետևյալ գործողությունները։ Օգտագործեք սխեման՝ Ժողովրդավարության սկզբունքները (էջ 16) և ներքևում բերված իրավիճակները համապատասխանեցրեք ժողովրդավարության սկզբունքներին։ **Ակտիվություն.** Աշխատե՛ք զույգերով, էջ 16 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 16 **Ակտիվություն.**Արե՛ք դատողություն, էջ 17 **Երաշխավորություն ուսուցչին.** Վերջին 4 ակտիվությունը ծառայում են ժողովրդավարության սկզբունքների մասին գիտելիքի ակտիվացմանը և հնարավոր է՝ ոչ բոլորը կատարեն, բայց համոզվելու համար, թե ինչպես են կապում աշակերտները ժողովրդավարության սկզբունքները կյանքի հետ, կարևոր նշանակություն ունեն նրանց կողմից հիշատակված իրավիճակները, որոնք վերաբերվում են մարդու ազատությանը, հավասարությանն ու արժանիքներին։ Նաև կարևոր է՝ ընդհանրացնեն այս սկզբունքների պահպանման կապը պետության ժողովրդավարության որակի հետ։ **Ակտիվություն.** Ամփոփիչ բանավեճ (դասագրքում չկա)։ **Հարցեր.** • Ձեր կարծիքով, ինչպե՞ս է ապահովում ժողովրդավարության սկզբունքների պաշտպանությունը քաղաքացու ազատությունը, հավասարությունը, արժանիքները։ • Թվարկեք՝ քաղաքացու ո՞ր իրավունքներն են պաշտպանված։	կցված է բուկլետի ենթադրական նմուշ **Հավելված 2. էջ 96** **Այս նմուշը աշակերտների համար հասանելի չպետք է լինի։** Ուսուցիչը այն կարող է կիրառել համալիր առաջադրանքների շնորհանդեսին հետադարձ կապ տրամադրելու ժամանակ, նաև զարգացնող գնահատման մեջ երաշխավորությունները կոնկրետացնելիս։

- Ի՞նչ պարտականությունների առաջ է կանգնեցնում նրան քաղաքացիությունը։
- Ի՞նչ է նշանակում լինել ակտիվ քաղաքացի։
- Այս իրավունքների ու սկզբունքների իրականացման գործընթացում ի՞նչ արգելքների կարող են հանդիպել կանայք ու աղջիկները գենդերային կարծրատիպերի պատճառով։
- **Ինչպե՞ս կլինի պաշտպանված Զեզվայի ու Մզիայի արժանապատվությունը, եթե նրանք իջնեն Վրաստանի կանգառում։**

Ամփոփում. Ժողովրդավարության սկզբունքները ներկայացնում են հիմք ինչպես տեղական, այնպես էլ միջազգային փաստաթղթերի համար, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին: Միջազգային փաստաթղթերը և դրանց ուղեկցող տեղական օրենքները պաշտպանում են կանանց և աղջիկների իրավունքները: Բայց հաճախ օրենքից ավելի պինդ գործում են կարծրատիպերը: Ի՞նչ կարելի է անել իրավիճակը փոփոխելու համար:

Ռեսուրս. Դասագիրք, Կարող եմ պաշտպանել իրավունքները, էջ 19-27

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 19
Հարցեր.
Ծանոթացե՛ք ներքևում տրված «Դժվար ընտրություն» իրավիճակին, պատասխանե՛ք հարցերին.

- Ի՞նչ կոնկրետ և հանրային խնդիր/խնդիրներ են ընդգծվում տրված իրավիճակում: Ի՞նչն է մատնանշում այս խնդիրների մասին **(գենդերային կարծրատիպեր, կանանց և աղջիկների իրավունքների խախտում, աշխատանքային օրենսգրքի խախտում, ընտանեկան բռնություն. . .)**
- Ոտնահարվո՞ւմ են, թե՞ ոչ մարդու, քաղաքացու իրավունքները: Եթե այո, ապա ո՞րը, և բերեք փաստարկներ։
- Ո՞ւմ կողմից են ոտնահարվում այս իրավունքները: Ինչպիսի՞ն է հասարակության/պետության դերը նման իրավիճակում: Հիմնավորե՛ք։
- Ժողովրդավարության ո՞ր սկզբունքը/սկզբունքներն են խախտում այս խնդիրները։
- Ո՞ր մակարդակում են ի հայտ գալիս գենդերային կարծրատիպերը **(անհատի, ընտանիքի, հասարակության, պետության, գլոբալ մակարդակում)։**
- Ի՞նչն եք համարում գենդերային կարծրատիպերի սկիզբը **(հետամնաց ավանդույթներ, կրթության, գիտակցության ցածր մակարդակ)։**
- Պատկերացրե՛ք ձեզ այս իրավիճակի որևէ հերոսի դերում, խոսե՛ք ձեր զգացումների մասին և պաշտպանե՛ք ձեր տեսակետը։

- Ձեր կարծիքով, ի՞նչ լծակներ կան նման իրավիճակներից պաշտպանվելու համար։

	(Խորհրդատվություն գենդերային թեմայի ուղղությամբ աշխատող փաստաբանի, ոչ կառավարական կազմակերպության, ինքնակառավարման մարմնին կից գործող գենդերային հանձնախմբի հետ (երբ աշխատավայրում ասել են՝ կին չենք ուզում) խորհրդատվություն, համապատասխան օրենքի պարզաբանում. . .) • Ի՞նչ խորհուրդ կտաս Մարիամին, որը կանգնած է լուրջ երկընտրանքի առաջ։ • Մտածեք իրավիճակի շարունակության ձեր տարբերակը։ • **Ինչպե՞ս կկիրառեք ստացած տեղեկությունը և եզրահանգումները ձեր առաջադրանքի արդյունքում, որպեսզի Զեզվային ու Մզիային ցույց տաք Վրաստանում գենդերային հավասարության իրական պատկերը։** **Երաշխավորություն ուսուցչին.** առաջադրանքի ենթահարցի վրա սկսում եք աշխատել այս իրավիճակի վերաբերյալ բանավեճով։ Աշակերտներին լրացուցիչ հարցերով բերում եք եզրահանգման, որ Վրաստանում գենդերային հավասարությունը պաշտպանված է իրավական նորմերով, բայց հասարակության մեջ դեռևս հաղթահարված չեն գենդերային կարծրատիպերը, ինչը հաճախ խնդիրներ է ստեղծում իրավական նորմերի պահպանման տեսակետից։ Դրա համար հարկավոր է հասարակությանը տեղեկացնել, բարձրացնել գիտակցությունը, հանրայնացնել դրական օրինակները։ **Ակտիվություն.** Վերհիշեք, էջ 21 **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 21-24 **Հարցեր.** Ձեր կարծիքով, ինչի՞ մասին է խոսում այս պատմությունը և նրա հետագա զարգացումը։ ○ Ինչպե՞ս կընթանային գործողությունները, եթե գոյություն չունենային միջազգային փաստաբանությունը կամ իրավապաշտպան կազմակերպությունները։ ○ Ո՞ր տեղական և միջազգային կազմակերպությունների մասնակցությունն է առանձնանում այս պատմության մեջ։ ○ Ձեր կարծիքով, ինչո՞ւ է դառնում անհրաժեշտ դիմել Ստրասբուրգի դատարան, երբ մեր երկիրը ժողովրդավարական պետություն է, և կանոնադրությունը ներառում է նման հարցեր։ ○ Ի՞նչն է շարժում եվրոպական դատարանին նման որոշումներ կայացնելիս։ ○ Ի՞նչն է շարժում փաստաբանական կազմակերպություններին։ ○ Ինչպե՞ս է տեղի ունենում որոշումը ավարտին հասցնելը։ • Վերահսկվո՞ւմ են, թե՞ ոչ միջազգային կազմակերպությունների կողմից որոշումները ավարտին հասցնելու հարցերը։	

	Ինչպե՞ս կկիրառեք ստացված տեղեկությունը և եզրահանգումները համալիր առաջադրանքը կատարելիս: **Ակտիվություն.** Մոդելավորում, էջ 26-27 (այս ակտիվությունը կատարելը ցանկալի է, ոչ՝ պարտադիր): **Քայլ 2. Ինչպիսի՞ն են քաղաքացիություն ստանալու հնարավորությունները և քաղաքացիների իրավունքները: Ո՞ր իրավական փաստաթղթերով է կարգավորվում այս գործընթացը: Ինչպե՞ս կկապեք այս հնարավորությունը քաղաքացիություն փնտրողների (Զեզվայի ու Մզիայի) իրավիճակի հետ: (Կ. պատկ. 2)** **Ռեսուրս.** Դասագիրք, «Քաղաքացիության հայեցակարգի փոփոխությունները», էջ 28-37 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 31 **Ակտիվություն.** Դատողությո՛ւն արեք, էջ 36 **Հարցեր.** • Հիշե՛ք հուշարձաններ համաշխարհային և Վրաստանի պատմությունից, որոնք վերաբերվում էին մարդու իրավունքներին: • Անցկացրե՛ք զուգահեռներ նշված հուշարձանների միջև: Փորձե՛ք գտնել նմանություններ և տարբերություններ նրանց միջև: • Հիշե՛ք պատմական իրադարձություններ (ապստամբություններ, հեղափոխություններ և այլն), որտեղ հիմնական պահանջները իրավունքների ընդունմանը կամ պաշտպանությանն էին վերաբերվում: • Դատողություն արե՛ք նման իրադարձությունների նշանակության մասին (ապստամբություն, ցույց, հանրահավաք, հեղափոխություն և այլն) մարդու իրավունքների ճանաչման տեսակետից: **Ռեսուրս.** Դասագիրք, Վրաստանի քաղաքացիություն, էջ 38-47 **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 38 **Հարցեր.** • Ինչպե՞ս եք պատկերացնում այս պատմության շարունակության հնարավոր տարբերակները առանց քաղաքացիության: Շարունակեք Էլենեի պատմությունը:	

	• Հաշվի առե՛ք, որ Հունաստանը Եվրամիության անդամ երկիր է և այնտեղ գործում է առանց այցեհրավերի ռեժիմը: Հիշե՛ք, ի՞նչ նկատի ունի այն: • Ինչո՞ւ Էլենեին անհրաժեշտ եղավ նման պայմաններում անօրինական մուտք գործել երկիր: • Սպառնո՞ւմ է, թե՞ ոչ Էլենեին թրաֆիկինգի վտանգ: • Ի՞նչ կարող ենք եզրակացնել ելնելով այս պատմությունից: • Հիշու՞մ եք այլ անօրինական իրավիճակներ: Այնտեղ ինչպե՞ս են զարգացել իրադարձությունները: • Թրաֆիկինգի խնդիրը միայն մեր քաղաքացիներին է անհանգստացնո՞ւմ: • Ո՞ր տեսակի հանցագործություններին է պատկանում թրաֆիկինգը: **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 42 **Ակտիվություն**. Աշխատանք տեքստի վրա (անհատական) Ծանոթացե՛ք «Վրաստանի քաղաքացիությանը» և պատրաստեք տեղեկություն Զեզվայի ու Մզիայի համար, կիրառելով հետևյալ հարցերը. • ի՞նչ հնարավորություններ ունեն Զեզվան ու Մզիան , որ ստանան Վրաստանի քաղաքացիություն: • Ձեր կարծիքով, ինչի՞ հիման վրա է հնարավոր նրանց շնորհել Վրաստանի քաղաքացիություն: Ինչո՞ւ եք այդպես կարծում: • Ինչպե՞ս կլինեն պաշտպանված նրանց իրավունքները: • Ո՞վ չի կարող դառնալ Վրաստանի քաղաքացի: **Երաշխավորություն ուսուցչին.** Սա մի տեսակ սիմուլացիայի՝ նմանակման գործընթաց է աշակերտների պատկերացումներին, ստեղծագործականությանը, քննադատական մտածողությանը հետևելու համար: Քանի որ Զեզվայի ու Մզիայի իրավիճակը միայն ենթադրություն է, այս հարցին կոնկրետ պատասխան չկա: Գլխավորն այն է, որ աշակերտները դատողություն անեն քաղաքացիություն ստանալու հնարավորությունների մասին: Կարող ենք օգտագործել խթանիչ հարցեր. հասնո՞ւմ է, թե ոչ նրանց քաղաքացիություն ի ծնե: Ունե՞ն նրանք առանձնահատուկ ծառայություն Վրաստանի համար, և այլն: Աշակերտներին տանք հնարավորություն բանավիճեն տարբերվող տեսանկյուններից, կիրառեն փաստարկներ. . . **Ամփոփում.** Վրաստանի քաղաքացիություն ստանալու կարգը կարգավորվում է սահմանադրությամբ և օրենքներով, խիստ սահմանված գործընթացով:	

	Առաջադրանք. Դասագրքում տրված «Քաղաքացիության հայեցակարգի փոփոխությունները» պարագրաֆից, էջ 28-37, ընտրե՛ք քաղաքացիության հայեցակարգի զարգացման 2 փուլ և առանձին թերթի վրա պատրաստեք տեղեկատվական տեքստ յուրաքանչյուր փուլի վերաբերյալ: **Հարցեր.** • Որտե՞ղ, ո՞ր պատմական միջավայրում է այս փուլը զարգացել: • Ո՞ւմ և ինչպե՞ս էր շնորհվում քաղաքացիություն: • Ի՞նչ արտոնություններ ունեին, ի՞նչ իրավունքներ: • Ի՞նչ պարտականություններ ունեին: • Քաղաքացիությունը ինչքանո՞վ էր հանդիսանում մարդու արժանիքները պաշտպանելու երաշխիք: Ինչո՞ւ ես մտածում այդպես: • Ի՞նչ իրավունքներ ունեին կանայք: • Գործո՞ւմ էր, թե՞ ոչ որևէ իրավական փաստաթուղթ: • Համեմատի՛ր քո կողմից պատրաստված երկու հայեցակարգերը: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ ունեն: **Քայլ 3. Ինչպե՞ս է ապահովում հասարակությունը/պետությունը մարդու իրավունքների պաշտպանությունը առաջադրանքում տրված քաղաքացիության փուլում: Ինչպիսի՞ն են պաշտպանության միջոցները/մեխանիզմները (Կ. պատկ. 2.3):** **Ռեսուրս.** Դասագիրք, Քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները, էջ 47-55 **Ակտիվություն. Աշխատեք զույգերով, էջ 48** **Ակտիվություն. Աշխատեք խմբերով, էջ 48** **Ակտիվություն. Աշխատեք խմբերով, էջ 52** **Ակտիվություն. Աշխատեք խմբերով, էջ 53** **Ամփոփում.** Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում էջ 48-ում տրված խմբային աշխատանքի 2-րդ իրավիճակի վրա, որը վերաբերվում է կանանց ու աղջիկների հանդեպ դիսկրիմինացիային/խտրականությանը, անցկացնում ենք զուգահեռներ այսօրվա կանոնադրության և իրական իրավիճակների միջև:	

	Ցուցում. Այս ակտիվությունը ամփոփելիս ուշադրություն ենք դարձնում այն բանի վրա, որ մարդու իրավունքները պաշտպանում է անհատի իրավունքները, ի տարբերություն «երրորդ սերնդի» իրավունքներից, որոնց ի հայտ գալը կապված է գլոբալ խնդիրների հետ (էկոլոգիական, հումանիտար. . .)։ «Երրորդ սերնդի» իրավունքները պատկանում են համերաշխության, այսինքն՝ կոլեկտիվ իրավունքներին՝ խաղաղ, առողջ և էկոլոգիապես մաքուր միջավայրում ապրելու, ինքնորոշման և այլ իրավունքներ։ Կոլեկտիվ իրավունքները անհատի իրավունքներից անբաժան են, ինչը նշանակում է, որ կոլեկտիվ իրավունքները չպետք է հակադարձեն անհատի իրավունքներին, չպետք է ոտնահարվի նրա ազատությունը և արժանապատվությունը, չպետք է սահմանափակվի նրա իրավական կարգավիճակը։ Սրա հիշեցումը արդարացի կլինի նման համատեքստ ունեցող այլ համալիր առաջադրանքների ժամանակ ևս։ **Ռեսուրս** 1. Դասագիրք, «Քաղաքացիության հայեցակարգի փոփոխությունները», էջ 28-37, 2. Աշակերտների կողմից պատրաստված տնային աշխատանքներ։ **Ակտիվություն. Կառավարելի** պրակտիկա տանը մշակված տեղեկության հիման վրա, քաղաքացիության հայեցակարգի զարգացման ժամանակագծի կառուցում։ Գրատախտակին գծված ժամանակագծի վրա ուսուցիչը գծել է փուլերը/թվականները։ Աշակերտները ներկայացնում են իրենց առաջադրանքն ու թերթը փակցնում են համապատասխան փուլին։ **Ցուցում.** Ժամանակագծի վրա նշել ենք նաև «2022 թվական՝ Վրաստան», այս փուլի տեղեկությունը քաղաքացիության և իրավունքների պաշտպանության մասին մտավոր գրոհի միջոցով համառոտ տեղափոխում ենք գրատախտակի վրա։ **Ակտիվություն.** Բանավեճ **Հարցեր.** • Ինչպե՞ս կբավարարվեն Զեզվայի ու Մզիայի հետաքրքրությունները (քաղաքացիություն, իրավունքների պաշտպանություն, հավասարության ապահովում) յուրաքանչյուր փուլում։ • Որտե՞ղ, ո՞ր կանգառում առավելագույնս կլինեն պաշտպանված նրանց հետաքրքրությունները։ Ինչո՞ւ եք այդպես կարծում։ • **Ինչպե՞ս կպատկերեք բուկլետում/սլայդ շոուում առաջադրանքում նշված ժամանակաշրջանի քաղաքացիության հայեցակարգային տեսակետները։ Ինչպե՞ս կպատրաստեք դիտակտիկ նյութ։**	

	Երաշխավորություն ուսուցչին. Կարող եք աշակերտների մոտ անցկացնել սիմուլյացիա՝ նմանակում և պատմեք, որ մի աշակերտ, օրինակ, թերթը ծալել է երկու մասի և ստացված 4 էջերի վրա բաժանել է կանգառները: Սա Ձեզ պետք կգա միայն այն դեպքում, եթե աշակերտները դժվարանան առաջարկել հետաքրքիր գաղափարներ: Այս ակտիվությունից հետո աշակերտները արդեն պատրաստ կլինեն ինքնուրույն կատարել առաջադրանքը: Եվս մի անգամ ուշադրությունը սևեռում ենք այն բանի վրա, որ գնահատման չափանիշների մասին մտածելը նրանց կտա հնարավորություն, որ իրենք լինեն իրենց առաջադրանքի առաջին գնահատողները, և այդ հարցում նրանց կօգնեն չափանիշները: Ծանոթացնում ենք նաև դիագնոստիկ՝ ախտորոշիչ հարցերին՝ **Հավելված 1**, էջ 96, որոնք անհրաժեշտ կլինեն որպես առաջադրանքի շնորհանդեսի պլան: Իսկ ուսուցչին կօգնեն շնորհանդեսի ժամանակ հետևել գնահատման համար կարևոր պահերին ու դրա հիման վրա պատրաստել զարգացնող գնահատում: **Ինչ վերաբերում է զարգացնող գնահատմանը.** ենթահարցի (գենդերային հավասարություն) վրա կողմնորոշվելով՝ պետք է ստուգել աշակերտի գիտելիքը Ազգային ուսումնական պլանի թիրախային հասկացության՝ «Ժողովրդավարության» վերաբերյալ, կիրառելով Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիան:		
Երկարաժամկետ նպատակ **Թիրախային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ**	**Հարց.** Մարդու և քաղաքացու իրավունքներ **Ենթահարց.** Գենդերային հավասարություն **Ենթահասկացություններ.** Մարդու իրավունքներ Ժողովրդավարություն սկզբունքներ	**Հանգուցային հարց/հարցեր** • Ինչպե՞ս պատկերեմ **հոդվածում** Վրաստանում առկա գենդերային ռազմավարություններն ու դրանց ազդեցությունը մարդու իրավունքների ու ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության վրա:	**Միջանկյալ ուսումնական նպատակ** **Համալիր առաջադրանքի պայման**
Ժողովրդավարություն ***(մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր,***	**Համալիր առաջադրանքի վրա աշխատելու փուլերը** (ռեսուրսներ, ակտիվություններ) **Քայլ 1.** Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ: **Ռեսուրս.** Դասագիրք, էջ 7-9 (ընտրե՛ք առաջադրանքը)		**Առաջադրանք 2** **Համալիր առաջադրանքի պայման**

ժողովրդավարության սկզբունքներ) **<u>Արդյունքներ.</u>** (Քաղ. միջ. 1,2,3,4) 5. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար, սեփական արժեքներով ու իրավունքներով: 6. Մարդը ունի քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կոլեկտիվ իրավունքներ, Վրաստանի սահմանադրությունն ու միջազգային փաստաթղթերը (դեկլարացիները, կոնվենցիաները) ապահովում են այս իրավունքների պաշտպանությունը,	**Ակտիվություն.** Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին՝ առաջադրանքի տեքստը ընկալելու և պայմանը հասկանալու համար: Աշակերտի փորձից ելնելով կարելի է կիրառել աշակերտի մասնակցությամբ իրականացված պրակտիկա: **Հարցեր.** • Ինչի՞ն է վերաբերում առաջադրանքը: Ի՞նչ է պահանջում ձեզանից այս առաջադրանքի կատարումը: • Ի՞նչ գիտեք, ի՞նչ կարող եք անել այս ուղղությամբ: • Ի՞նչ է նշանակում գենդերային կարծրատիպ: • Էլ ի՞նչ գիտելիք ու ունակություններ են հարկավոր, որպեսզի կարողանաք կատարել այս առաջադրանքը: **Ռեսուրս.** **1. Ինչպես ստեղծենք հոդված:** 2. Ինչպես է գրվում հոդվածը https://www.living-democracy.com/ge/textbooks/volume3/part-3/unit-7/student-handout-6/ 3. **Ինչպե՞ս գրենք հոդված**: Տե՛ս՝ **Հավելված 4, էջ 98** **Ակտիվություն.** Հարց-պատասխան **Հարցեր.** • Ի՞նչ է հոդվածը: • Ի՞նչ մասերից է բաղկացած հոդվածը: • Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ ունեն հոդվածը և տեղեկությունը/նորությունը: • Ի՞նչ նպատակ ունի հոդվածը: • Ի՞նչ արդյունքի կարող ենք հասնել այս հոդվածը հանրայնացնելով: • Ինչպե՞ս եք ծրագրում ձեր արդյունքը: • Ինչպիսի՞ կազմություն կունենա այն: • Ի՞նչ պետք է հաշվի առնեք, որ ձեր արդյունքը ավելի հետաքրքրություն առաջացնի, համոզիչ երևա:	Պատկերացրեք, որ լրագրող եք և պետք է պատրաստեք հոդված թերթի համար (200-250 բառ), որտեղ կպատկերեք Վրաստանում առկա գենդերային կարծրատիպերը և նրանց ազդեցությունը ժողովրդավարության սկզբունքների վրա: Հոդվածում կարող եք կիրառել հաջորդ էջում տրված տեղեկությունն ու երիտասարդների կարծիքները: Տե՛ս՝ հավելված 3, էջ 97 **Աշխատության մեջ/ աշխատության շնորհանդեսի ժամանակ ընդգծված տեսքով ներկայացրեք.** • Հոդվածում քննարկված իրավիճակներում ինչպես են պաշտպանված/խախտված ժողովրդավարության սկզբունքները, ազատությունը, հավասարությունը, մարդու արժանիքները, ի՞նչ ազդեցություն է թողնում այն ժողովրդավարության որակի վրա: **(Կ. պատկ. 1, 4)**

7. Ժողովրդավարական հասարակությունում/ պետությունում մարդու իրավունքները գլխավոր արժեքներ են: 8. Ժողովրդավարությունը հիմնվում է հիմնային սկզբունքների վրա (հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, կառավարության բաժանում, արդար ընտրություններ, պատասխանատվություն ոչ բռնապետական մեթոդներ, հանդուրժողականություն), առանց որոնց պաշտպանության ժողովրդավարական	• Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի հոդվածը արտաքնապես ձևավորենք: Սրանից հետո գալիս ենք համաձայնության առաջադրանքի ներկայացման պայմանների ու ժամկետների մասին: **II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը** **Քայլ 1. Հոդվածում քննարկված իրավիճակներում ինչպե՞ս են պաշտպանված/խախտված ժողովրդավարության սկզբունքները, ազատությունը, հավասարությունը, մարդու արժեքները, ի՞նչ ազդեցություն է թողնում այս ամենը ժողովրդավարության որակի վրա (Կ. պատկ. 1, 4):** **Երաշխավորություն ուսուցչին.** Այս երաշխավորությունը նախատեսված է բոլոր համալիր առաջադրանքների վրա աշխատելու համար: Համալիր առաջադրանքի ենթահարցից բխում են շեշտադրումներ, որոնցով մշակվում են քեյսերը, տեսական նյութերը, անցկացվում են ակտիվությունները և վերջում տեղի է ունենում գնահատում: **Ռեսուրս.** Դասագիրք, Ի՞նչ է նշանակում լինել քաղաքացի: էջ 19-18 (նախորդ գիտելիքի ակտիվացում): **Երաշխավորություն ուսուցչին.** Այս պարագրաֆի ուսումնասիրությունը հիմնականում ծառայում է նախորդ գիտելիքի (քաղաքացիության իմաստ, ժողովրդավարության սկզբունքներ) ակտիվացմանը և անուղղակի կապով կապված է առաջադրանքի հետ: **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 9 Բաժանեք ներքևում տրված հայտնի մարդկանց մասին տեղեկությունները, ծանոթացեք և արեք դատողություն: **Հարցեր.** • Ելնելով տեղեկությունից, ինչպիսի՞ քաղաքացիական տեսակետի կրող և նպաստող էր այս անձնավորությունը: Անվանե՛ք որոշակի փաստարկներ: • Ի՞նչ վերաբերմունք էր ցուցադրում նրանցից յուրաքանչյուրը մարդու և քաղաքացու իրավունքների/պարտականությունների հանդեպ: Հիմնավորե՛ք: • Ինչպիսի՞ն է նրանց տեսակետը գենդերային, սոցիալական հավասարության, բազմազանության վերաբերյալ:	• Ինչպե՞ս է պաշտպանում/խախտում հասարակությունը/ պետությունը նման իրավիճակներում քաղաքացու իրավունքները: Ինչպիսի՞ն են այս իրավունքների իրավական հիմքերը, միջոցները/լծակները: **(Կ. պատկ. 2,3)** **Խորհուրդ.** Բացի դասագրքում տրված տեղեկությունից, ցանկալի է կիրառեք ձեզ ծանոթ իրավիճակներ: Իրավիճակները նկարագրելիս փոխեք նույնականացման տվյալները (անուն, ազգանուն, հասցե. . .): Կարող եք կիրառել դիդակտիկ նյութեր (լուսանկար, նկար, դիագրամ. . .) Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ **հավելված 5, էջ 99-100**

պետություն չի կարող գոյություն ունենալ:	• Հիշեք նման անձանց կյանքից, գրականությունից: Ի՞նչ ընդհանրություն ունեն: Ինչպե՞ս են վերաբերվում նրանք գնեդերային հավասարության թեմային: **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 14 Ձեր կարծիքով, քաղաքացիական կարո՞ղ է անվանվել այս գործողությունը: Կիրառեք «Ժողովրդավարության սկզբունքներ» սխեման (էջ 16) և ներքևում բերված իրավիճակները համապատասխանեցրեք ժողովրդավարության սկզբունքներին: **Ակտիվության. Աշխատեք զույգերով, էջ 16** **Ակտիվություն. Աշխատեք խմբերով, էջ 16** **Ակտիվություն. Արեք դատողություն, էջ 17** **Երաշխավորություն ուսուցչին.** վերջին 4 ակտիվությունը ծառայում են ժողովրդավարության սկզբունքների մասին գիտելիքի ակտիվացմանը և կարելի է բոլորը չկատարել, բայց որպեսզի համոզվենք, թե ինչպես են աշակերտները կապում ժողովրդավարության սկզբունքները կյանքի հետ, կարևոր նշանակություն ունեն նրանց կողմից հիշատակված իրավիճակները, որոնք կապված են մարդու ազատության, հավասարության ու արժանիքների հետ: Իսկ այնուհետև վերլուծեն, ինչ նշանակություն ունի այս սկզբունքների պաշտպանությունը պետության ժողովրդավարության որակը սահմանելու համար: **Ակտիվություն.** Ամփոփիչ բանավեճ (դասագրքում չկա): **Հարցեր.** Ձեր կարծիքով, ինչպե՞ս է ապահովում ժողովրդավարության սկզբունքների պաշտպանումը քաղաքացու ազատությունը, հավասարությունը, արժեքները: • Թվարկեք, ի՞նչ իրավունք-պարտականություններ ունի Վրաստանի քաղաքացին: • Ի՞նչ է նշանակում լինել ակտիվ քաղաքացի: • Այս իրավունքների ու պարտականությունների իրականացման գործընթացում ի՞նչ խոչընդոտների կարող են հանդիպել կանայք ու աղջիկները կարծրատիպերի պատճառով: **Ամփոփում.** Ժողովրդավարության սկզբունքները հիմք են հանդիսանում մարդու իրավունքներին վերաբերող ինչպես տեղական, այնպես էլ միջազգային փաստաթղթերի համար: Միջազգային փաստաթղթերն ու տեղական օրենքները	

	պաշտպանում են կանանց և աղջիկների իրավունքները, բայց նրանց հանդեպ խտրականությունը, միևնույն է, շարունակվում է: Ի՞նչ պետք է փոխել այս ուղղությամբ: **Ռեսուրս.** Դասագիրք, Կարող եմ պաշտպանել իրավունքներ, էջ 19-27 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 19 **Հարցեր.** Ծանոթացե՛ք ներքևում տրված «Դժվար ընտրություն» իրավիճակին, պատասխանե՛ք հարցերին. • Ի՞նչ կոնկրետ և հասարակական խնդիր/խնդիրներ են ի հայտ գալիս տվյալ իրավիճակում: Ի՞նչն է մատնանշում այս խնդիրների մասին **(գենդերային կարծրատիպեր, կանանց ու աղջիկների իրավունքների խախտում, աշխատանքային օրենսգրքի խախտում, ընտանեկան բռնություն. . .):** • Ոտնահարվո՞ւմ են, թե՞ ոչ քաղաքացու իրավունքները: Եթե այո, ապա որո՞նք և անվանեք փաստարկներ: • Ո՞ւմ կողմից են ոտնահարվում այս իրավունքները: Ինչպիսի՞ն է հասարակության/պետության դերը նման իրավիճակներում: Հիմնավորե՛ք: • Ժողովրդավարության ո՞ր սկզբունքը/սկզբունքներն են խախտում այս խնդիրները: • Ի՞նչ մակարդակում են ի հայտ գալիս գենդերային կարծրատիպերը **(անհատի, ընտանիքի, հասարակության, պետության, գլոբալ մակարդակում):** • Ըստ ձեզ, ո՞րն է գենդերային կարծրատիպերի սկիզբը **(հնացած ավանդույթները, կրթության, գիտակցության ցածր մակարդակը):** • Պատկերացրե՛ք ձեզ այս իրավիճակների հերոսներից մեկի դերում, պատմե՛ք ձեր զգացումների մասին, պաշտպանե՛ք ձեր տեսակետը: • Ձեր կարծիքով, ի՞նչ լծակներ կան նման իրավիճակից պաշտպանվելու համար **(խորհրդակցություն գենդերային թեմայով աշխատող փաստաբանի, ոչ կառավարական կազմակերպության, ինքնակառավարման մարմնին կից գործող գենդերային հանձնախմբի հետ (երբ աշխատավայրում ասել են՝ կին չենք ուզում), պարզաբանումը համապատասխան օրենքում. . .):** • Ի՞նչ խորհուրդ կտայիք Մարիամին, ով կանգնած է լուրջ երկընտրանքի առջև: Հիմնավորե՛ք: • Մտածեք իրավիճակի շարունակության ձեր տարբերակը:	

	Ինչպե՞ս կկիրառեք ստացված տեղեկությունը և եզրահանգումները ձեր հոդվածում, որպեսզի ընթերցողը տեսնի Վրաստանում գենդերային հավասարության իրական պատկերը: Երաշխավորություն ուսուցչին. Այս իրավիճակի քննարկումով աշակերտների ուշադրությունը կսևեռեք առաջադրանքի ենթահարցի՝ գենդերային հավասարության վրա աշխատելուն: Աշակերտներին լրացուցիչ հարցերով բերում ենք գենդերային հավասարության «ոչ օրինակների» առանձնացմանը, ինչը նրանց կօգնի գալ այն եզրահանգմանը, որ գենդերային հավասարությունը Վրաստանում պաշտպանված է իրավական նորմերով, բայց հասարակությունում գենդերային կարծրատիպերը դեռևս հաղթահարված չեն, ինչը հաճախ ստեղծում է խնդիրներ: Դրա համար անհրաժեշտ է իրազեկել հասարակությանը, բարձրացնել գիտակցությունը, հանրայնացնել դրական օրինակները: **Ակտիվություն.** Հիշե՛ք, էջ 21 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 21-24 **Հարցեր.** Ձեր կարծիքով, ինչի՞ մասին է խոսում այս պատմությունը և նրա հետագա զարգացումը: • Ինչպե՞ս կընթանային իրադարձությունները, եթե գործեին միջազգային փաստաբանությունը կամ իրավապաշտպան կազմակերպությունները: • Ո՞ր տեղական և միջազգային կազմակերպությունների մասնակցությունն է առանձնանում այս պատմությունների մեջ: • Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհրաժեշտ դառնում դիմել Ստրասբուրգի դատարան, երբ մեր երկիրը ժողովրդավարական պետություն է, և օրենսդրությունը հաշվի է առնում նման հարցերը: • Ի՞նչն է դրդում եվրոպական դատարանին ընդունել նման որոշում: • Ի՞նչն է դրդում փաստաբանության ուղղորդիչ կազմակերպությանը: • Ինչպե՞ս է տեղի ունենում որոշումը ավարտին հասցնելու գործընթացը: • Վերահսկվո՞ւմ են, թե՞ ոչ միջազգային կազմակերպությունների կողմից որոշումները ավարտին հասցնելու հարցերը: **Ինչպե՞ս կկիրառեք ստացած գիտելիքները և եզրահանգումները համալիր առաջադրանքը կատարելիս:** **Ակտիվություն.** Մոդելավորում, դասագիրք, էջ 26-27 **Առաջադրանք.** Տանը ծանոթացե՛ք «Քաղաքացիության հայեցակարգի փոփոխություններ» պարագրաֆին (էջ 28-37) և պատրաստե՛ք շնորհանդես՝ «Կանանց և տղամարդկանց իրավունքները տարբեր պատմական փուլերում»:	

	Քայլ 2. Ինչպե՞ս է պաշտպանում/խախտում հասարակությունը/պետությունը այս իրավիճակներում քաղաքացու իրավունքները: Ինչպիսի՞ն են այս իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը, միջոցները/լծակները: (Կ. պատկ. 2,3) **Ռեսուրս.** Աշակերտների շնորհանդեսներ: **Ակտիվություն.** Շնորհանդես **Ակտիվություն.** Բանավեճ **Հարցեր.** • Ո՞ր պատմական փուլում են ակտիվացել կանանց իրավունքները: • Ինչո՞ւմ էին արտահայտվում այս իրավունքները: • Որտեղի՞ց են սկիզբ առնում կանանց հանդեպ խտրական կարծրատիպերը: • Անցյալի փորձից, տղամարդկանց հանդեպ ո՞ր խտրական կարծրատիպերն են սկիզբ առնում: • **Ինչպե՞ս կկիրառեք ձեր հոդվածում ստացած տեղեկությունն ու եզրահանգումները:** **Ռեսուրս.** Դասագիրք, Վրաստանի քաղաքացիություն, էջ 38-47 **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 38 **Հարցեր.** • Ինչպե՞ս եք պատկերացնում այս պատմության շարունակության հավանական տարբերակները առանց քաղաքացիության: Շարունակե՛ք Էլենեի պատմությունը: • Նկատի ունեցեք, որ Հունաստանը Եվրամիության անդամ երկիր է և այստեղ գործում է առանց այցեհրավիրային ռեժիմ: Հիշե՛ք, ի՞նչ է նշանակում դա: • Ինչո՞ւ անհրաժեշտ եղավ Էլենեին նման պայմաններով մուտք գործել երկիր: • Սպառնո՞ւմ է. թե՞ ոչ Էլենեին թրաֆիկինգի վտանգ: • Ի՞նչ կարող ենք եզրակացնել այս պատմությունից: • Հիշո՞ւմ եք այլ նմանատիպ իրավիճակներ: Դրանցում ինչպե՞ս են զարգացել իրադարձությունները: Թրաֆիկինգի խնդիրը միայն մեր երկրի քաղաքացիների՞ն է անհանգստացնում: • Ո՞ր տեսակի հանցագործությունների թվին է պատկանում թրաֆիկինգը:	

	Ակտիվություն. Արե՛ք դատողություն, էջ 46 **Ռեսուրս.** Դասագիրք, Քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները, էջ 48-49 **Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 42** **Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերով, էջ 42** **Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերով, էջ 46** **Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերով, էջ 47** **Ամփոփում.** Հատուկ ուշադրություն ենք դարձնում «Մաիայի երազանքին» (էջ 40, աշխատե՛ք խմբերով) և վերջին խմբային աշխատանքին, որը վերաբերում է կանանց հանդեպ խտրականությանը, անցկացնում ենք զուգահեռներ այսօրվա օրենսդրության ու իրական իրավիճակների միջև։ Այս ակտիվությունը ամփոփելիս՝ աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում ենք այն բանի վրա, որ մարդու իրավունքները պաշտպանում են անհատի իրավունքները, ի տարբերություն «երրորդ սերնդի» իրավունքների, որոնց առաջացումը կապված է գլոբալ խնդիրների հետ (էկոլոգիական, մարդասիրական.. .)։ «Երրորդ սերնդի» իրավունքներին պատկանում են համերաշխության, այսինքն՝ կոլեկտիվ իրավունքները՝ խաղաղ, առողջ ու էկոլոգիապես մաքուր միջավայրում ապրելու, ինքնորոշության և այլ իրավունքներ։ Կոլեկտիվ իրավունքները անհատի իրավունքներից բաժանված չեն, ինչը նշանակում է, որ կոլեկտիվ իրավունքները չպետք է հակասեն անհատի իրավունքներին, չպետք է ոտնահարեն նրա ազատությունն ու արժանապատվությունը, չպետք սահմանափակեն նրա իրավական կարգավիճակը։ Այս ամենը կարելի է հիշեցնել նման համատեքստ ունեցող այլ համալիր առաջադրանքների ժամանակ։ **Երաշխավորություն ուսուցչին.** Այս ակտիվությունը ավարտելուց հետո աշակերտները արդեն պատրաստ են ինքնուրույն կատարել առաջադրանքը։ Պարզ է, մեկ անգամ կրկին աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում ենք այն բանի վրա, որ գնահատման չափանիշների մասին մտածելը նրանց հնարավորություն կտա լինելու սեփական առաջադրանքի առաջին գնահատողը, և դրանում կօգնեն գնահատման չափանիշները։	

	Ծանոթացնում ենք նաև դիագնոստիկ՝ ախտորոշիչ հարցերին, տե՛ս՝ **Հավելված 1,** էջ 95, որոնք կարելի է օգտագործել որպես առաջադրանքի շնորհանդեսի պլան։ Իսկ ուսուցչին կօգնի շնորհանդեսի ժամանակ ուշադրություն դարձնել գնահատման համար կարևոր պահերի վրա, և սրա հիման վրա պատրաստել զարգացնող գնահատական։ Դիագնոստիկ հարցերը բոլոր առաջադրանքների համար ընդհանուր են։ **Ինչ վերաբերում է զարգացնող գնահատմանը.** Ենթահասկացության վրա (գենդերային հավասարություն) կողմնորոշվելով՝ պետք է ստուգվի աշակերտի գիտելիքը Ազգային ուսումնական պլանի «Ժողովրդավարություն» թիրախային հասկացության վերաբերյալ։	

Թիրախային հասկացություն- Քաղաքացիական մասնակցություն .			**Ընտրե՛ք առաջադրանքներից մեկը**
Երկարաժամկետ նպատակ Թիրախային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ	**Հարց** • **Գլոբալացում** **Ենթահարց. Մ**իջազգային կազմակերպություն. «Համաշխարհային քաղաքացի» **Ենթահասկացություն.** Կամավորություն	**Հանգուցային հարց/հարցեր** • Ինչպե՞ս պատկերեմ **առաքելության տեքստում** միջազգային կազմակերպության նպատակը և այս նպատակին հասնելու քաղաքացիական մասնակցության ընտրված ձևի, ռազմավարության և ակտիվությունների նպատակահարմարությունը:	**Միջանկյալ ուսումնական նպատակ** **Համալիր առաջադրանքի պայման**
Քաղաքացիական մասնակցություն **<u>Արդյունքներ</u>.** (Քաղ. միջ. 2,4) 1. Ժողովրդավարական հասարակությունը քաղաքացիական հասարակություն է, որը կազմված է ակտիվ քաղաքացիներից: 2. Քաղաքացիական մասնակցությունը հանրային կարիքների/երկրի մասին հոգ տանելու հնարավորություն է: 3. Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով (սոցիալական նախագծերի պլանավորում-անցկացման, կամավորական գործունեությամբ, փաստաբանությամբ,	**Համալիր առաջադրանքի կատարման փուլերը** (ռեսուրսներ, ակտիվություններ) **I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը** **Քայլ I.** Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ: **Ռեսուրս.** Կազմակերպության առաքելության նմուշ https://transparency.ge/ge/misia **Երաշխավորություն ուսուցչին.** Այս նյութի մասին լրացուցիչ տեղեկությունը տե՛ս՝ **Հավելված 7, էջ 103:** **Հարցեր,** • Հասկանալի՞ է առաջադրանքի պայմանը: Ի՞նչ է պահանջվում ձեզանից: • Ի՞նչ է նշանակում առաքելությունը: • Ի՞նչ եք կարծում, ի՞նչ տեղեկություն պետք է լինի կազմակերպության առաքելությունում: • Ինչի՞ մասին է ցույց տալիս առաջադրանքի պայմանը, գնահատման չափանիշները, ի՞նչ պետք է ներկայացնեք առաքելության տեքստում: • Ինչպե՞ս եք պատկերացնում առաքելության տեքստի պլանը: **Որպես կանոն,** աշակերտներին **առաջին փուլի** վերջում հիշեցնում ենք, որ պետք է ներկայացնեն առաջադրանքը և **կազմակերպության առաքելությունը** կարող են պատրաստել ձեռագրի	**Առաջադրանք 1** **Համալիր առաջադրանքի պայման** Պատկերացրեք, որ դուք՝ որպես գլոբալ քաղաքացի, ցանկանում եք ստեղծել միանգամայն նոր միջազգային կազմակերպություն, որը կհոգա գլոբալ խնդիրներից որևէ մեկի լուծման մասին: Ձևակերպեք այս կազմակերպության հիմնական **առաքելությունը** (մոտավորապես 300 բառ), որտեղ ներկայացված կլինի ձեր

լոբբիացմամբ) հոգ են տանում հասարակական խնդիրների լուծման մասին: Այդ ժամանակ նրանք համագործակցում են միմյանց, հասարակական կառույցների, ոչ կառավարական կազմակերպությունների, պետական մարմինների հետ: 4.Քաղաքացիական մասնակցության ընթացքում կարևոր է հաշվի առնել այլ մարդկանց հետաքրքրությունները: 5.Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնության գործողությունները:	տեսքով կամ էլեկտրոնային տարբերակով: Հիշեցնում ենք ախտորոշիչ հարցերի մասին **(Հավելված 1, էջ 95),** որոնք պետք է հաշվի առնեն շնորհանդեսը պատրաստելիս: **II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը** **Քայլ 1.Ինչքանո՞վ են ակտիվ ձեր համախոհները, ո՞ր գլոբալ կարիքին/խնդրին եք կապում ձեր գործունեությունը և ինչո՞ւ եք կարծում, որ սա կարևոր է (Կ.պատկ. 1,2):** **Ակտիվություն.** Մտավոր գրոհ (նախորդ գիտելիքի ակտիվացում) **Հարցեր.** • Ի՞նչ է գլոբալացումը: • Անվանեք կոնկրետ օրինակ, որով ինքներդ եք ընկալում գլոբալացումը: • Ինչո՞վ է պայմանավորված գլոբալացման գործընթացը: Ի՞նչն է արագացրել: • Ինչպե՞ս եք հասկանում «Աշխարհը փոքրացել է» արտահայտությունը: **Ռեսուրս.** Դասագիրք, «Մի՛ բարձրացրու ցցապատ», էջ 58 **Ակտիվություն.** Արեք դատողություն, էջ 58 **Հարցեր.** այստեղ ներկայացված և ձեզ ծանոթ այլ պատմություններից ելնելով՝ • ինչպիսի՞ն է կամավորների դերը հասարակության, երկրի կյանքում: • Ովքե՞ր են դառնում կամավորներ: Ինչո՞ւ: • Ի՞նչ հմտություններ պետք է ունենա մարդը, ով ցանկանում է կամավորություն անել: • Ի՞նչ օգուտ կարող է տալ կամավորը իր գործունեությամբ: • Եղե՞լ եք կամավոր կամ ինչպե՞ս եք պատկերացնում ձեզ այդ դերում: • Մասնակցե՞լ եք կամավոր-լուսավորականների վարժանքների: Ինչպե՞ս կգնահատեք դրանց արդյունավետությունը: • Ի՞նչ եք կարծում, կամավորը մենա՞կ, թե՞ այլոց հետ է կարող իրականացնել իր մտահղացումը: • Տրված պատմության մեջ կամավորության ո՞ր ձևն է կիրառված: Ինչի՞ն է անդամագրված պատմողի եղբայրը:	կազմակերպության նպատակը և դրա իրականացման ճանապարհները (միջազգային կազմակերպություն-ների որ փորձից կօգտվեք, ինչ նորություն կունենաք): **Աշխատության/աշխա-տության շնորհանդեսի մեջ ընդգծված կերպով ներկայացրեք.** • Ինչքանո՞վ են ակտիվ ձեր համախոհները, ո՞ր գլոբալ կարիքին/խնդրի՞ն եք կապում ձեր գործունեությունը և ինչո՞ւ եք կարծում, որ սա կարևոր է:

	• Որո՞նք են այս կազմակերպության նպատակները։ Տեղային կարիքների վրա են հիմնվո՞ւմ, թե՞ գլոբալ։ • Դուք և ձեր հասակակիցները ի՞նչ կցանկանայիք իմանալ կամավորության և գլոբալ քաղաքացիության մասին։ • Ի՞նչ կապ եք տեսնում գլոբալացման ու գլոբալ քաղաքացիության միջև։ **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 61 **Ակտիվություն.** Աշխատեք զույգերով, էջ 64 **Երաշխավորություն ուսուցչին.** Վերևում տրված բոլոր ակտիվությունների մանրամասն պայմանը, հարցերը տրված են աշակերտի գրքում։ Այս ակտիվությունները կատարելուց հետո ամփոփումն իրականացնում ենք բանավեճի տեսքով։ **Ակտիվություն.** Բանավեճ **Հարցեր.** • Ձեր կարծիքով, կյանքի որ ոլորտներին է վերաբերվում գլոբալացումը **(քաղաքականություն, տնտեսություն, անվտանգություն, սոցիալական ոլորտ, արվեստ, անձնական հարաբերություններ, հասարակություն. . .)**։ • Ի՞նչ ընդհանուր խնդիրներ ունի միջազգային հանրությունը **(բնական կատակլիզմներ, կլիմայական փոփոխություններ, խմելու ջրի խնդիր, համաճարակներ, ՄԻԱՎ, զինված հակամարտություններ, պատերազմներ, միջազգային հանցագործություններ (թրաֆիկինգ, կանանց ու աղջիկների շահագործում, երեխաների աշխատանք, կիբերհանցագործություններ) խտրականություն, աղքատություն. . .)**։ • Ի՞նչ կարիքներ ու պահանջմունքներ ունեն մարդիկ։ • Ի՞նչ ընդհանուր կարիքներ ունեն տարբեր մարդիկ **(առողջություն, բարեկեցություն, ընտանիք, կրթություն, անվտանգություն, ընդունված լինելու զգացում. . .)**։ • Վերևում թվարկած խնդիրներից ո՞րն է ավելի շատ սահմանափակում նրանց կարիքների ու պահանջների բավարարումը։ • Ի՞նչ եք կարծում, գլոբալացումը նպաստո՞ւմ է, թե՞ ոչ այս խնդիրների առաջացմանը կամ լուծմանը։ Ինչո՞ւ։ • Այս խնդիրներն անհանգստացնո՞ւմ են քաղաքացիներին պետության, համայնքի մակարդակով։ • Ի՞նչ են անում քաղաքացիները, եթե պետությունը չի լուծում/չի կարողանում լուծել խնդիրները։ • Ի՞նչ կարող են անել քաղաքացիները գլոբալ խնդիրները լուծելու համար։	**(Կ. պատկ. 1,2)** • Ինչո՞ւ եք կարծում, որ միջազգային կազմակերպությունը այս խնդիրը լուծելու ամենարդյունավետ ձևն է։ Ո՞ւմ աջակցության հույսը ունեք, ո՞ւմ հետ եք պատրաստվում համագործակցել։ Ինչպե՞ս։ Ինչո՞ւ։ **(Կ. պատկ. 3)** • Ձեր գործունեության մեջ ինչպե՞ս հաշվի կառնեք այլ մարդկանց հետաքրքրությունները։ Ձեր գործողությունները ոչ բռնապետական կլինե՞ն, թե՞ ոչ։ **(Կ. պատկ. 4, 5)** **Խորհուրդ.** Ցանկության դեպքում, կարող եք

		պատրաստել կազմակերպության
	• Դուք ունեցե՞լ եք ձեր մասնաբաժինը նման խնդիրները լուծելու/նվազեցնելու գործում: Ինչպե՞ս: • Էլ ի՞նչ է հնարավոր անել: • **Բանավեճի արդյունքում ստացած գիտելիքից ու եզրահանգումներից ո՞րը կկիրառեք առաջադրանքը կատարելիս և ինչպե՞ս:** **Երաշխավորություն ուսուցչին.** ա) Ցանկալի է՝ աշակերտների անվանած գլոբալ խնդիրները գրել ֆլիպչարտի կամ այլ մեծ չափի թղթի վրա, որը կլրացնեք և կկիրառեք հաջորդ դասին: բ) Աշակերտներին հանձնարարել կարդալ դասագրքում տրված, էջ 66-70, **Հյու Էվանսի հոդվածը՝ «Միջազգային կազմակերպություն «Աշխարհի քաղաքացի»:** **Առաջադրանք**. Ուշադրությամբ ծանոթացեք դասագրքի 66-70 էջերում տրված Հյու Էվանսի «Միջազգային կազմակերպություն «Աշխարհի քաղաքացի» հոդվածին, ըստ դրա պատրաստվեք բանավեճի՝ հաջորդ դասի համար: **Քայլ 2. Ինչո՞ւ եք կարծում, որ միջազգային կազմակերպությունը այս խնդիրը լուծելու ամենարդյունավետ ձևն է: Ո՞ւմ աջակցության հույսը ունեք, ո՞ւմ հետ եք պատրաստվում համագործակցել: Ինչպե՞ս: Ինչո՞ւ (Գ. պատկ. 3):** **Ռեսուրս.** Դասագիրք, «Գլոբալ քաղաքացի», էջ 66-70 **Ակտիվություն**. Արե՛ք դատողություն, էջ 66 **Հարցեր.** • Աշխարհում սեփական տեղի նորովի ընկալումը ինչպե՞ս է տրամադրում մարդուն ծայրաստիճան աղքատության, կլիմայական փոփոխությունների, գենդերային հավասարության և այլ խնդիրների դեմ պայքարելու: • Ի՞նչ է նշանակում գլոբալ քաղաքացի: • Ինչպիսի՞ն էին գլոբալ քաղաքացու դերն ու հնարավորությունները ըստ հոդվածի: • Ինչպե՞ս է ծառայում գլոբալ քաղաքացու տեսակետը և գործունեությունը ժողովրդավարության սկզբունքներին: • Ինչպե՞ս կարճ կձևակերպեք «Աշխարհի քաղաքացի» կազմակերպության առաքելությունը: • Ի՞նչ նոր և հետաքրքրի բան կար ձեզ համար այս հոդվածում: Ինչո՞ւ: • **Ստացած գիտելիքից ու եզրահանգումներից ո՞րը կկիրառեք առաջադրանքը կատարելիս և ինչպե՞ս:**	տարբերանշանն ու կարգախոսը: • Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ **Հավելված 6,** էջ 101-102:

	Ակտիվություն. Աշխատեք խմբերով, էջ 71, **Աշխարհի քաղաքացիության «Երիցուկ»:** **Երաշխավորություն ուսուցչին.** Աշակերտները բաժանվում են 4 խմբի, նրանց բաժանում ենք նախօրոք պատրաստված «Երիցուկի» մեկական թերթ, որի վրա գրված է խմբի հարցը **(Խումբ 1.** Գլոբալ խնդիրներն ու նրանց արդյունքները**,** **խումբ 2.** Ինչպիսի՞ քաղաքացիներն են հոգ տանում այս խնդիրների մասին ու ինչ մոտիվացիայով, **խումբ 3**. Քաղաքացիական մասնակցության ինչ ձևերի, ակտիվությունների են դիմում քաղաքացիները, **խումբ 4**. Ակտիվության իրականացման ինչ գործիքներ ու լծակներ են կիրառված**):** Աշակերտների թվից ելնելով կարող եք ստեղծել 5-րդ խումբը և ավելացնեք «թերթիկը»՝ «Ում հետ են համագործակցում գլոբալ քաղաքացիները»: **Առաջին փուլում** յուրաքանչյուր խումբ Հյու Էվենսի հոդվածի հիման վրա (կարող են ավելացնել նաև իրենց կարծիքները) թղթի վրա գրում են համապատասխան ցուցակը: Քննարկելու և գրելու համար նրանց տրվում է 10 րոպե: **Երկրորդ փուլում** «Երիցուկի թերթերը» պետք է 2 րոպեով փոխանցվեն հաջորդ խմբին իրենց տարբերակները ավելացնելու համար: «Թերթերն» այսպես շրջանաձև պտտվում են, մինչև վերադառնում են «մայր» խմբին, նրանց նորից տրվում է 1 րոպե, որ ծանոթանան լրացումներին և անեն շնորհանդես: Հնարավոր է, խմբերն ունենան տարբերվող կարծիքներ, ինչի համար կտրվի շփման հնարավորություն: Շնորհանդեսից հետո խմբերը իրենց թերթերը ամրացնում են «Երիցուկի սրտին», որը «Աշխարհի քաղաքացիության «Երիցուկ» գրությամբ նախօրոք փակցված է գրատախտակին: Այս ռեսուրսը ցանկալի է փակցնել նախքան առաջադրանքը վերջացնելը, քանի որ պարունակում է առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ համակարգված տեղեկատվություն: **Ակտիվություն.** Ամփոփիչ բանավեճ **Հարցեր.** • Այսօր ստացած գիտելիքից ու եզրահանգումներից ո՞րը կկիրառեք առաջադրանքը կատարելիս և ինչպե՞ս: **Քայլ 3. Ինչպե՞ս հաշվի կառնեք ձեր գործունեության մեջ այլ մարդկանց հետաքրքրությունները, ոչ բռնապետական կլինե՞ն, թե՞ ոչ ձեր գործողությունները: (Կ. պատկ. 4,5)** **Ռեսուրս.** Դասագիրք, «Գլոբալ քաղաքացի», «Սա հետաքրքիր է», էջ 72	

	Ակտիվություն. Աշխատանք տեքստի վրա և վերլուծություն **Հարցեր.** • Ո՞վ է Դավինիան։ • Քաղաքացիական ակտիվության ո՞ր ձևին է դիմում նա։ • Ի՞նչ ռեսուրսներ ուներ Դավինիան կամավորական գործունեություն ծավալելու համար։ • Ինչպե՞ս է կարողացել հասնել նման արդյունքի և գտնել վստահություն ու ճանաչում։ • Ո՞վ էր աջակցում նրա նախաձեռնություններին։ • Ընդունո՞ւմ եք այն կարծիքը, որ նման մարդիկ կան բոլոր երկրներում ու ցանկացած սոցիալական խմբերում։ Ինչո՞վ կբացատրեք սա։ • Հնարավո՞ր է, մոտ ապագայում դուք էլ լինեք նրանց շարքերում։ • Ի՞նչ կանեիք։ Ո՞ր խնդրի մասին հոգ կտանեիք և ինչպե՞ս։ • Ի՞նչ նմանություն և տարբերություն կա Դավինիայի և Հյու Էվանսի գործունեության միջև։ • Նրանցից որևէ մեկը համախոհների հավաքներին կամ այլ ակտիվությունների ժամանակ կիրառո՞ւմ է բռնության մեթոդներ։ Ինչո՞ւ։ • **Այս բանավեճը կօգնի՞ առաջադրանքը կատարելիս։ Ինչպե՞ս։** **Ռեսուրս.** Դասագիրք, էջ 74 **Ակտիվություն.** Աշխատանք խմբերով Նայեք 74-րդ էջում տրված ֆոտոկոլաժին և պատասխանեք հետևյալ հարցերին. • Քաղաքացիական մասնակցության ո՞ր ձևն է ներկայացված։ Ի՞նչ են բողոքարկում հավաքվածները։ • Այս հավաքները ինքնաբուխ/ինքնուրույն բնույթ են կրո՞ւմ, թե՞ կազմակերպված են։ • Ո՞ր արժեքների ոտնահարումն է մարդկանց ստիպել բողոքարկել։ • Պատերազմների ժամանակ խախտվո՞ւմ են, թե՞ ոչ մարդկանց իրավունքները, ժողովրդավարության սկզբունքները։ Բերեք օրինակներ։ • Պատերազմ սկսողները միայն հարձակման օբյեկտի վերածված բնակչության իրավունքներն են ոտնահարո՞ւմ, թե՞ իրենց քաղաքացիներինը ևս։ Ինչո՞ւ։ • Այս դեպքում խախտվո՞ւմ են, թե՞ ոչ պատերազմի կանոնները, որոնց վերաբերյալ համաձայնության է եկել միջազգային հանրությունը։	

	Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերով, էջ 75 **Ռեսուրս**. Գլոբալ քաղաքացիության համար կրթությունից օգտվելու սխեմա, էջ 76 **Ակտիվություն.** Ինքնուրույն աշխատանք **Հարցեր**. • Ծանոթացեք սխեմայի վահանակների վրա տրված կետերին ու անվանեք՝ ո՞րն եք համարում առավել կարևոր և ինչո՞ւ: • Ի՞նչ եք կարծում, անհրաժե՞շտ է, թե՞ ոչ գլոբալ քաղաքացիության համար կրթությունը: Հիմնավորեք ձեր կարծիքը: • Անհրաժե՞շտ է, թե՞ ոչ թվային գրագիտությունը: • Դուք ձեզ զգո՞ւմ եք այս գործընթացի մասնակից: Բերեք օրինակներ: • Ինչպե՞ս կօգնի ձեզ այս թեմայի ուսումնասիրությունը գլոբալ քաղաքացիության հնարավորությունների, գործիքների, լծակների ու ռազմավարությունների ընկալման հարցում: • **Ե՞րբ և որտե՞ղ պետք կգան այս գիտելիքն ու հմտությունները:** • **Այս համալիր առաջադրանքի կատարումը ձեզ համար կլինի՞ փոքր փորձառություն գլոբալ քաղաքացիության ճանապարհին:** **Երաշխավորություն ուսուցչին.** Ամփոփելու համար ևս մի անգամ աչքի ենք անցկացնում դասարանում ստեղծված ռեսուրսների տեսքով ներկայացված տեղեկությունը (գլոբալ խնդիրների ցուցակ, «Երեքնուկ») և մոդելավորման համար Դուք և աշակերտները բարձրաձայն «մտածում եք» գլոբալ խնդիրը ընտրելու, կազմակերպության նպատակների, ռազմավարությունների, ակտիվությունների, աջակիցների, Ձեր սպասելիքների մասին: Այս ակտիվությունները ավարտելուց հետո աշակերտները արդեն պատրաստ են ինքնուրույն կատարել առաջադրանքը: Ուշադրությունը կենտրոնացնում եք այն բանի վրա, որ գնահատման չափանիշների մասին մտածելը նրանց հնարավորություն կտա լինելու իրենց սեփական առաջադրանքի առաջին գնահատողները: Ծանոթացնում եք ախտորոշիչ հարցերին **(Հավելված 1, էջ 95),** որոնք պետք կգան շնորհանդեսի ռեֆլեքսիայի և ուսանում-ուսուցման համար:	

Երկարաժամկետ նպատակ **Թիրախային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ**	**Հարց** • **Գլոբալացում** **Ենթահարց.** Կամավորություն առանց սահմանների (կամավոր Դավինիայի պատմությունը) **Ենթահասկացություն** Կամավորություն	**Հանգուցային հարց/հարցեր** • Ինչպե՞ս պատկերեմ իմ **«Կամավորի օրագրում»** միջազգային հանրության կարիքներին ու հետաքրքրություններին համապատասխան կամավորության նկարագրությունը, աջակիցների հավաքման ձևերը:	**Միջանկյալ ուսումնական նպատակ** **Համալիր առաջադրանքի պայման**
Քաղաքացիական մասնակցություն **<u>Արդյունքներ</u>.** (Քաղ. միջ. 2,4) 6. Ժողովրդավարական հանրությունը քաղաքացիական հասարակություն է, որը բաղկացած է ակտիվ քաղաքացիներից: 7. Քաղաքացիական մասնակցությունը հանրային կարիքների/երկրի մասին հոգ տանելու հնարավորություն է: 8. Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով (սոցիալական նախագծերի պլանավորման-անցկացման, կամավորական	**Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը** (ռեսուրսներ, ակտիվություններ): **Քայլ I. Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ:** **Ռեսուրս. «**Ազատության օրագրեր», https://www.radiotavisupleba.ge/z/1057 : Աշակերտների անձնական փորձը: **Ակտիվություն.** Հարց-պատասխան, բանավեճ **Հարցեր**. • Ի՞նչ է պահանջում առաջադրանքը ձեզանից: Ի՞նչ նյութ պետք է ստեղծեք: • Ի՞նչ հարցեր պետք է ներկայացնեք ընդգծված կերպով: • Ի՞նչ է օրագիրը: • Որևէ մեկդ կարդացե՞լ եք օրագիր: • Դուք գրե՞լ եք օրագիր: • Ի՞նչ կարող է նկարագրել մարդը օրագրում: • Ինչպիսի՞ կազմություն կարող է ունենալ օրագիրը **(օրագրում տեղի է ունենում գրառումների բաժանումը ըստ օրերի, թվերի):** • Ինչի՞ն կարող է վերաբերվել օրագրի բովանդակությունը **(օրագրի մեջ կարող ենք փոխանցել մեզ հետ պատահած պատմությունները, դատողությունները, էմոցիաները, երազանքները. . . Կարճ ասած, օրագիրը բովանդակային առումով ամբողջովին անսահմանափակ է, այնտեղ կարող ենք գրել ամեն ինչ, ինչի մասին մտածում ենք. . .):**	Առաջադրանք 2 **Համալիր առաջադրանքի պայման** Պատկերացրեք, որ դուք դարձել եք Դավինիայի (տե՛ս՝. աշակերտի գիրք, էջ 72) հետնորդը և ձեր ժամանակն ու հնարավորությունները ցանկանում եք կամավոր կիրառել աշխարհի տարբեր մարդկանց օգնելու համար: Ձեր գործունեությունը արդեն որոշակի արդյունքներ ունի: Պատրաստեք **«Կամավորի օրագիր»՝** կամավորի գրառումներ **(200-250 բառ),** որտեղ կպատմեք ձեր գործունեության

գործունեությամբ, փաստաբանությամբ, շահարկմամբ) հոգ են տանում հասարակական խնդիրները լուծելու մասին: Այս ընթացքում նրանք համագործակցում են միմյանց հետ, հասարակական կառույցների, ոչ կառավարական կազմակերպությունների, պետական մարմինների հետ: 9. Քաղաքացիական մասնակցության ժամանակ կարևոր է հաշվի առնել այլ անձանց հետաքրքրությունները: 10. Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնության գործողությունները:	• **Ի՞նչ լեզվով ու ի՞նչ ձևով ենք գրում օրագիրը (ձևը նույնպես սահմանափակ չէ, քանի որ կարող է լինել սովորական շարադրանք, կարող է լինել բանաստեղծություն. . .):** • **Տրված համալիր առաջադրանքում ի՞նչ ունենք սահմանված: Ինչի՞ն պետք է վերաբերվի մեր օրագիրը: Ի՞նչ բովանդակություն է պարունակելու այն:** • **Այս օրագիրը իրակա՞ն, թե՞ երևակայական պատմության մասին կլինի:** • **Ի՞նչ է անհրաժեշտ, որ մեզ պատկերացնենք գլոբալ քաղաքացու դերում, ով անում է անհրաժեշտ կամավորություն (մեր փորձը, ուրիշների փորձի իմացությունը և ընկալումը, կամավորության իմաստի իմացություն ու երևակայության ունակություն):** • **Ինչպե՞ս կօգնեն առաջադրանքի պայմանն ու գնահատման չափորոշիչները բովանդակության շրջանակը սահմանելիս (գնահատման չափորոշիչները մի տեսակ հուշում, պլան կլինեն առաջադրանքի համար):** **II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը** **Քայլ 1. Ո՞ր կարիքի, խնդրի հետ է կապված այս ակտիվությունը և ինչո՞ւ եք որոշել, որ սա կարևոր է: Ինչպիսի՞ արդյունավետությամբ կարողացաք ակտիվ մարդկանց ձեր գաղափարի շուրջը հավաքել (Կ. պատկ. 1,2):** **Ակտիվություն. Մտավոր գրոհ (նախորդ գիտելիքի ակտիվացում)** **Հարցեր.** • **Ի՞նչ է գլոբալացումը:** • **Անվանե՛ք կոնկրետ օրինակ, որով ինքներդ եք ընկալում գլոբալացումը:** • **Ինչո՞վ է պայմանավորված գլոբալացման գործընթացը: Ի՞նչն է արագացրել:** • **Ինչպե՞ս եք հասկանում «Աշխարհը փոքրացել է» արտահայտությունը:** **Ռեսուրս. Դասագիրք, «Մի՛ բարձրացրու ցցապատ», էջ 58-65** **Ակտիվություն. Արեք դատողություն, էջ 58** **Հարցեր.** Այստեղ տրված և ձեզ հայտնի ծանոթ այլ պատմություններից ելնելով՝	տպավորիչ արդյունքների մասին: **Աշխատության/ աշխատության շնորհանդեսի մեջ ընդգծված կերպով ներկայացրեք.** • Ինչո՞ւ համարեցիք քաղաքացիական մասնակցության ընտրված ձևը՝ կամավորությունը, այս խնդրի վրա աշխատելու ամենաարդյունավետ ճանապարհը: Ո՞ւմ աջակցությունն եք ստացել, ո՞ւմ հետ համագործակցել: • Ո՞ր կարիքի, խնդրի հետ է կապված այս ակտիվությունը և ինչո՞ւ եք որոշել, որ սա կարևոր է: Ինչպիսի՞ արդյունավետությամբ կարողացաք ակտիվ մարդկանց ձեր գաղափարի շուրջը հավաքել: **(Կ. պատկ. 1,2):**

	Ինչպիսի՞ն է կամավորների դերը հասարակության, երկրի կյանքում։ • Ովքե՞ր են դառնում կամավորներ։ Ինչո՞ւ։ • Ի՞նչ հմտություններ պետք է ունենա մարդը, ով ցանկանում է կամավորություն անել։ • Ի՞նչ օգուտ կարող է տալ կամավորը իր գործունեությամբ։ • Եղե՞լ եք կամավոր կամ ինչպե՞ս եք պատկերացնում ձեզ այդ դերում։ • Մասնակցե՞լ եք կամավոր-լուսավորականների վարժանքներին։ Ինչպե՞ս կգնահատեք դրանց արդյունավետությունը։ • Ի՞նչ եք կարծում, կամավորը մենա՞կ, թե՞ այլոց հետ կարող է իրականացնել իր մտահղացումը։ • Տրված պատմության մեջ կամավորության ո՞ր ձևն է կիրառված։ Ինչի՞ն է անդամագրված պատմողի եղբայրը։ • Որո՞նք են այս կազմակերպության նպատակները։ Տեղայի՞ն, թե՞գլոբալ կարիքների վրա են հիմնվում։ • Դուք և ձեր հասակակիցները ի՞նչ կցանկանայիք իմանալ կամավորության և գլոբալ քաղաքացիության մասին։ • Ի՞նչ կապ եք տեսնում գլոբալացման ու գլոբալ քաղաքացիության միջև։ **Ակտիվություն.** Արեք դատողություն, էջ 61 **Ակտիվություն**. Աշխատեք խմբերով, էջ 62 **Ակտիվություն**. Աշխատեք զույգերով, էջ 64 **Ակտիվություն.** Բանավեճ **Հարցեր**. • Ձեր կարծիքով, կյանքի ո՞ր ոլորտներին է վերաբերվում գլոբալացումը **(քաղաքականություն, տնտեսություն, անվտանգություն, սոցիալական ոլորտ, արվեստ, անձնական հարաբերություններ, հասարակություն. . .)**։ • Ի՞նչ ընդհանուր խնդիրներ ունի միջազգային հանրությունը **(բնական կատակլիզմներ, կլիմայական փոփոխություններ, խմելու ջրի խնդիր, համաճարակներ, ՄԻԱՎ, զինված հակամարտություններ, պատերազմներ, միջազգային հանցագործություններ (թրաֆիկինգ, կանանց ու աղջիների շահագործում, երեխաների աշխատանք, կիբերհանցագործություններ) խտրականություն, աղքատություն. . .)**։ • Ի՞նչ կարիքներ ու պահանջմունքներ ունեն մարդիկ։ • Ի՞նչ ընդհանուր կարիքներ ունեն տարբեր մարդիկ **(առողջություն, բարեկեցություն, ընտանիք, կրթություն, անվտանգություն, ընդունված լինելու զգացում. . .)**։	• Ինչո՞ւ համարեցիք քաղաքացիական մասնակցության ընտրված ձևը՝ կամավորությունը, այս խնդրի վրա աշխատելու ամենաարդյունա-վետ ճանապարհը։ Ո՞ւմ աջակցությունն եք ստացել, ո՞ւմ հետ համագործակցել։ • Ո՞ր սպասելիքը չի արդարացել և ձեր կարծիքով, ինչո՞ւ **(Կ. պատկ . 3)**։ • Ինչպե՞ս եք ձեր ակտիվության մեջ հաշվի առել այլ անձանց շահերը, և կամավո՞ր էր նրանց մասնակցությունը **(Կ. պատկ. 4,5)**։

	• Վերևում թվարկված խնդիրներից ո՞րն է ավելի շատ սահմանափակում նրանց կարիքների ու պահանջների բավարարումը: • Ի՞նչ եք կարծում, գլոբալացումը նպաստո՞ւմ է, թե՞ ոչ այս խնդիրների առաջացմանը կամ լուծմանը: Ինչո՞ւ: • Այս խնդիրները անհանգստացնո՞ւմ են քաղաքացիներին պետության, համայնքի մակարդակով: • Ի՞նչ են անում քաղաքացիները, երբ պետությունը չի լուծում/չի կարողանում լուծել խնդիրները: • Ո՞վ, ինչպիսի՞ մարդիկ են սկսում մտածել և հոգալ գլոբալ խնդիրների մասին: • Ի՞նչ կարող են անել քաղաքացիները գլոբալ խնդիրները լուծելու համար: • Դուք ունեցե՞լ եք ձեր մասնաբաժինը նման խնդիրները լուծելու/նվազեցնելու գործում: Ինչպե՞ս: • Էլ ի՞նչ է հնարավոր անել: • **Բանավեճի արդյունքում ստացած գիտելիքից ու եզրահանգումներից ո՞րը կկիրառեք առաջադրանքը կատարելիս և ինչպե՞ս:** **Երաշխավորություն ուսուցչին.** ա) Ցանկալի է՝ աշակերտների անվանած գլոբալ խնդիրները գրել ֆլիպչարտի կամ այլ մեծ չափի թղթի վրա, որը կլրացնեք և կկիրառեք հաջորդ դասին: բ) Աշակերտներին հանձնարարել կարդալ դասագրքում տրված (էջ 66-70), **Հյու Էվանսի հոդվածը՝ «Միջազգային կազմակերպություն- «Աշխարհի քաղաքացի»:** **Առաջադրանք**. Ուշադրությամբ ծանոթացեք դասագրքի 66-70 էջերում տրված Հյու Էվանսի «Միջազգային կազմակերպություն- «Աշխարհի քաղաքացի» հոդվածին, ըստ դրա հաջորդ դասի համար պատրաստվեք բանավեճի : **Քայլ 2. Ինչո՞ւ եք կարծում, որ միջազգային կազմակերպությունը այս խնդիրը լուծելու ամենարդյունավետ ձևն է: Ո՞ւմ աջակցության հույսը ունեք, ո՞ւմ հետ եք պատրաստվում համագործակցել: Ինչպե՞ս: Ինչո՞ւ (Կ. պատկ. 3):** **Ռեսուրս.** Դասագիրք, «Գլոբալ քաղաքացի», էջ 66-70 **Ակտիվություն**. Արե՛ք դատողություն, էջ 66 **Հարցեր.** • Աշխարհում սեփական տեղի նորովի ընկալումը ինչպե՞ս է տրամադրում մարդուն ծայրաստիճան աղքատության, կլիմայական փոփոխությունների, գենդերային հավասարության և այլ խնդիրների դեմ պայքարելու համար:	• Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ **հավելված 6,** էջ 101-102

- Ի՞նչ է նշանակում գլոբալ քաղաքացի։
- Ինչպիսի՞ն էին գլոբալ քաղաքացու դերն ու հնարավորությունները ըստ հոդվածի։
- Ինչպե՞ս է արձագանքում գլոբալ քաղաքացու տեսակետը և գործունեությունը ժողովրդավարության սկզբունքներին։
- Ինչպե՞ս կարճ կձևակերպեք «Աշխարհի քաղաքացի» կազմակերպության առաքելությունը։
- Ի՞նչ նոր և հետաքրքիր բան կար ձեզ համար այս հոդվածում։ Ինչո՞ւ։
- **Ստացած գիտելիքից ու եզրահանգումներից ո՞րը կկիրառեք առաջադրանքը կատարելիս և ինչպե՞ս։**

Ակտիվություն. Աշխատեք խմբերով, էջ 71, **Աշխարհի քաղաքացիության «Երիցուկ»:**

Երաշխավորություն ուսուցչին. Աշակերտները բաժանվում են 4 խմբի, նրանց բաժանում ենք նախօրոք պատրաստված «Երիցուկ» մեկական թերթ, որի վրա գրված է խմբի հարցը **(Խումբ 1.** Գլոբալ խնդիրներն ու նրանց արդյունքերը**,**

խումբ 2. Ինչպիսի քաղաքացիներն են հոգ տանում այս խնդիրների մասին ու ինչ մոտիվացիայով,
խումբ 3. Քաղաքացիական մասնակցության ինչ ձևերի, ակտիվությունների են դիմում քաղաքացիները,
խումբ 4. Ակտիվության իրականացման ինչ գործիքներ ու լծակներ են կիրառված**):** Աշակերտների թվից ելնելով կարող եք ստեղծել 5-րդ խումբը և ավելացնել «թերթիկը»՝ «Ում հետ են համագործակցում գլոբալ քաղաքացիները»։

Առաջին փուլում յուրաքանչյուր խումբ Հյու Էվենսի հոդվածի հիման վրա (կարող են ավելացնել նաև իրենց կարծիքները) թղթի վրա գրում են համապատասխան ցուցակը։ Քննարկելու և գրելու համար նրանց տրվում է 10 րոպե։
Երկրորդ փուլում «Երիցուկի» թերթերը պետք է 2 րոպեով փոխանցեն հաջորդ խմբին իրենց տարբերակները ավելացնելու համար։ «Թերթերն» այսպես շրջանաձև պտտվում են, մինչև վերադառնում են «մայր» խմբին, նրանց նորից տրվում է 1 րոպե, որ ծանոթանան լրացումներին և անեն շնորհանդես։ Հնարավոր է, խմբերն ունենան տարբերվող կարծիքներ, ինչի համար կտրվի շփման հնարավորություն։ Շնորհանդեսից հետո խմբերը իրենց թերթերը ամրացնում են «Երիցուկի սրտին»։ Այս ռեսուրսը ցանկալի է փակցնել նախքան առաջադրանքը վերջացնելը, քանի որ պարունակում է առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ համակարգված տեղեկատվություն։

	Ակտիվություն. Ամփոփիչ բանավեճ **Հարցեր.** • Այսօր ստացած տեղեկատվությունը և եզրահանգումները ինչպե՞ս կօգնեն գլոբալ քաղաքացիության կտրվածքում ներկայացնեք ձեր կամավորական գործունեությունը ապագայում, և «օրագրում» արտացոլեք այս տիպի գործունեության կարևոր տեսանկյունները: **Քայլ 3. Ինչպե՞ս էիք ձեր գործունեության մեջ նախատեսել այլ մարդկանց հետաքրքրությունները և կամավորակա՞ն էր, արդյոք, նրանց մասնակցությունը: (Կ. պատկ.4,5):** **Ռեսուրս.** Դասագիրք, «Գլոբալ քաղաքացի», «Սա հետաքրքիր է», էջ 72 **Ակտիվություն.** Աշխատանք տեքստի վրա և վերլուծություն **Հարցեր.** • Ո՞վ է Դավինիան: • Քաղաքացիական ակտիվության ո՞ր ձևին է դիմում նա: • Ի՞նչ ռեսուրսներ ուներ Դավինիան կամավորական գործունեություն ծավալելու համար: • Ինչպե՞ս է կարողացել հասնել նման արդյունքի և գտնել վստահություն ու ճանաչում: • Ո՞վ էր աջակցում նրա նախաձեռնություններին: • Ընդունո՞ւմ եք այն կարծիքը, որ նման մարդիկ կան բոլոր երկրներում ու ցանկացած սոցիալական խմբերում: Ինչո՞վ կբացատրեք սա: • Հնարավո՞ր է, որ մոտ ապագայում դուք էլ լինեք նրանց շարքերում: • Ի՞նչ կանեիք: Ո՞ր խնդրի մասին հոգ կտանեիք և ինչպե՞ս: • Ի՞նչ նմանություն և տարբերություն կա Դավինիայի ու Հյու Էվանսի գործունեության միջև: • Նրանցից որևէ մեկը համախոհների հավաքներին կամ այլ ակտիվությունների ժամանակ կիրառո՞ւմ է բռնության մեթոդներ: Ինչո՞ւ: • **Այս բանավեճը կօգնի՞ առաջադրանքը կատարելիս: Ինչպե՞ս:** **Ռեսուրս.** Դասագիրք, էջ 74 **Ակտիվություն.** Աշխատանք խմբերով Նայեք 74-րդ էջում տրված ֆոտոկոլաժին և պատասխանեք հետևյալ հարցերին. • Քաղաքացիական մասնակցության ո՞ր ձևն է ներկայացված: Ի՞նչ են բողոքարկում հավաքվածները:	

	• Քաղաքացիական մասնակցության ո՞ր ձևի հետ գործ ունենք: Ի՞նչն են բողոքարկում հավաքվածները: • Այս հավաքները ինքնաբուխ/ինքնուրույն բնույթ են կրո՞ւմ, թե՞ կազմակերպված են: • Ո՞ր արժանիքների ոտնահարումն է մարդկանց ստիպել բողոքարկել: • Պատերազմների ժամանակ խախտվո՞ւմ են, թե՞ ոչ մարդկանց իրավունքները, ժողովրդավարության սկզբունքները: Բերեք օրինակներ: • Պատերազմը սկսողները միայն հարձակման օբյեկտի վերածված բնակչության իրավունքներն են ոտնահարո՞ւմ, թե՞ իրենց քաղաքացիներինը ևս: Ինչո՞ւ: • Այս դեպքում խախտվո՞ւմ են, թե՞ ոչ պատերազմի կանոնները, որոնց վերաբերյալ համաձայնության է եկել միջազգային հասարակությունը: **Երաշխավորություն ուսուցչին.** Գլոբալ քաղաքացիության հարցերի վրա աշխատելիս չէինք կարող շրջանցել Ռուսաստան-Ուկրաինայի պատերազմը, բայց այս հարցի վրա աշխատելիս էլ պետք է լինենք չափավոր, չկիրառենք ատելության լեզու և աշակերտներից էլ պահանջենք, որ պաշտպանեն այս կանոնները: Տե՛ս հավելված 8, էջ 104-106: **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 75 **Ռեսուրս**. Գլոբալ քաղաքացիության համար կրթությունից օգտվելու սխեմա, էջ 76 **Ակտիվություն.** Ինքնուրույն աշխատանք **Հարցեր**. • Ծանոթացեք սխեմայի վահանակների վրա տրված կետերին ու անվանեք, ո՞րն եք համարում առավել կարևոր և ինչո՞ւ: • Ի՞նչ եք կարծում, անհրաժե՞շտ է, թե՞ ոչ գլոբալ քաղաքացիության համար կրթությունը: Հիմնավորեք ձեր կարծիքը: • Անհրաժե՞շտ է, թե՞ ոչ թվային գրագիտությունը: • Ինչպե՞ս կօգնի ձեզ այս թեմայի ուսումնասիրությունը գլոբալ քաղաքացիության հնարավորությունների, գործիքների, լծակների ու ռազմավարությունների ընկալման հարցում: • **Ե՞րբ և որտե՞ղ պետք կգան այս գիտելիքն ու հմտությունները:** • **Այս համալիր առաջադրանքի կատարումը ձեզ համար կլինի՞ փոքր փորձառություն գլոբալ քաղաքացիության ճանապարհին:** **Երաշխավորություն ուսուցչին.** Ամփոփելու համար ևս մի անգամ աչքի ենք անցկացնում դասարանում ստեղծված ռեսուրսների տեսքով ներկայացված տեղեկությանը (գլոբալ խնդիրների	

	ցուցակը, «Երիցուկ») և մոդելավորման համար Դուք և աշակերտները բարձրաձայն «մտածում եք» գլոբալ խնդիրը ընտրելու, կամավորների հնարավոր նպատակների, ակտիվությունների, ռազմավարությունների, ակտիվությունների, աջակիցների, ձեր սպասելիքների, ձեր զգացմունքների մասին, ինչը պետք է արտացոլվի օրագրային գրառումներում։ Այս ակտիվությունները ավարտելուց հետո աշակերտները արդեն պատրաստ են ինքնուրույն կատարել առաջադրանքը։ Ուշադրությունը սևեռում եք այն բանի վրա, որ գնահատման չափանիշների մասին մտածելը նրանց հնարավորություն կտա, որ իրենք լինեն սեփական առաջադրանքի առաջին գնահատողները։ • Ծանոթացնում եք ախտորոշիչ հարցերին **(Հավելված 1, էջ 95),** որոնք պետք կգան շնորհանդեսի ռեֆլեքսիայի և ուսանում-ուսուցման համար։	

Թիրախային հասկացություն. Կայուն զարգացում			
Երկարաժամկետ նպատակ **Թիրախային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ**	**Հարց.** Կայուն զարգացում **Ենթահարց.** Կայուն զարգացման բաղադրիչներ (մարդ, մոլորակ, բարեկեցություն) **Ենթահասկացություն.** Կայուն զարգացման գլոբալ նպատակներ	**Հանգուցային հարց/հարցեր** Ինչպե՞ս ներկայացնեմ **հոդվածում** կայուն զարգացման իմ կողմից ընտրված բաղադրիչի նշանակությունը, կապը այլ բաղադրիչների հետ ու ընթերցողի համար կոնկրետ խորհուրդները:	**Միջանկյալ ուսումնական նպատակ** **Համալիր առաջադրանքի պայման**
Կայուն զարգացում **<u>Արդյունքներ. 3</u>** **Միջնակարգ աստիճան** 1. Ռեսուրսները օգտագործելիս կարևոր է հաշվի առնել հանրության հետաքրքրություններն ու ապագայի հեռանկարը: 2. Տեղային գործողություններին հետևում են գլոբալ	**Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը** (ռեսուրսներ, ակտիվություններ) **I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը** **Քայլ 1.** Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ: **Ռեսուրս.** Դասագիրք, Համալիր առաջադրանք, էջ 78 **Ակտիվություն.** Ծանոթություն համալիր առաջադրանքի պայմանին՝ բովանդակությունը և գնահատման չափանիշները ընկալելու համար: **Հարցեր.** • Ինչի՞ն է վերաբերվում առաջադրանքը: Ի՞նչ է ձեզանից պահանջվում այս առաջադրանքը կատարելու համար: • Կարո՞ղ եք հիմա ընտրել հոդվածի թեման: Ինչո՞ւ: • Էլ ի՞նչ գիտելիք ու ունակություններ են անհրաժեշտ, որ կարողանաք կատարել այս առաջադրանքը: • Անձամբ դուք ինչի՞ հիման վրա եք ընտրում ընթերցելիք հոդվածը **(վերնագրի, ծավալի, տեսողական հավելվածների, տառաչափի. . .):**	Առաջադրանք 1 **Համալիր առաջադրանքի պայմանը** Դպրոցի պատի թերթի/կայքի համար, որը նվիրված է կայուն զարգացման նպատակներին, պատրաստեք **հոդված** (200-250 բառ)**:** Թեմայի համար ընտրեք բաղադրիչներից մեկը. 1. Կայուն սոցիալական զարգացում (մարդիկ), 2. շրջակա միջավայրի կայուն զարգացում (մոլորակ), 3. կայուն տնտեսական զարգացում (բարեկեցություն): Հոդվածում պատկերեք ընտրված կայուն

արդյունքները *(օրինակ՝ շրջակա միջավայրի մասին հոգ տանելը առաջին հայացքից սկսվում է աննշան գործողություններով (օր. `աղբը չգցել գետնին, հրաժարվել պոլիէթիլենային տոպրակներից):*	**Ռեսուրս.** **1.** Ինչպե՞ս է գրվում հոդվածը https://www.livingdemocracy.com/ge/textbooks/volume-3/part-3/unit-7/student-handout-6/ 2. Ինչպե՞ս գրենք հոդված: **Հավելված 4, էջ 98:** **Ակտիվություն. Հարց-պատասխան** **Հարցեր.** • Պատրաստե՞լ եք երբևէ հոդված: Ի՞նչն է լավ ստացվել: Ինչո՞ւմ եք դժվարացել: • Ի՞նչ մասերից է բաղկացած հոդվածը: • Ի՞նչ ընդհանուր և տարբերվող բնութագրիչներ ունեն հոդվածն ու տեղեկատվությունը/նորությունը **(տեղեկատվությունը պետք է պարունակի միայն փաստեր, իսկ հոդվածը՝ անալիզ, տեսակետներ):** • Ո՞րն է հոդվածի նպատակը **(որոշակի հարցի/խնդրի ներկայացում և վերլուծություն):** • Ի՞նչ արդյունքի կարելի է հասնել այս հոդվածը հանրայնացնելով: • Ինչպե՞ս եք պլանավորում ձեր աշխատանքը: • Ինչպիսի՞ կառուցվածք կունենա այն: • Ի՞նչ պետք է հաշվի առնեք, որ ձեր աշխատանքը հետաքրքրություն առաջացնի, համոզիչ լինի: • Ի՞նչ կարող են կիրառել հոդվածը դիդակտիկ ձևով զարդարելու համար: **Երաշխավորություն ուսուցչին.** Եթե ժողովրդավարության թիրախային հասկացության մասին դուք կատարել եք համալիր առաջադրանք, որի արդյունքը հոդվածն էր, ապա այս առաջադրանքի վրա աշխատելու առաջին փուլում մանրամասնություններ հարկավոր չեն և կակտիվացնեք աշակերտների նախնական գիտելիքը հետևյալ հարցերով. ի՞նչը կարողացաք անել լավ այն ժամանակ: Ինչո՞ւմ դժվարացաք: Հիմա ի՞նչը հաշվի կառնեք: Ի՞նչ խորհուրդ կտաք նաև ուրիշներին:	զարգացման բաղադրիչի իմաստն ու կարևորությունը, հարաբերությունը այլ բաղադրիչների հետ և որոշակի խորհուրդներ հասակակիցներին: **Աշխատության/աշխատությա ն շնորհանդեսի մեջ ընդգծված կերպով ներկայացրեք.** • Ի՞նչ նշանակություն ունեն ընտրված բաղադրիչը, այլ բաղադրիչների հետ դրա հարաբերությունը հասարակության տեղային ու գլոբալ անվտանգության համար **(Կ. պատկ. 1):** • Ինչպե՞ս կարող ենք (ընտրված բաղադրիչի համաձայն) մեր տեղային գործողություններով ազդեցություն գործել գլոբալ արդյունքների վրա **(Կ. պատկ. 2):**

	II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը **Քայլ 1.** Ի՞նչ նշանակություն ունեն ընտրված բաղադրիչը, այլ բաղադրիչների հետ դրա հարաբերությունը հասարակության տեղային ու գլոբալ անվտանգության համար **(Կ. պատկ.1)**: **Ակտիվություն.** Մտավոր գրոհ (նախնական գիտելիքի ակտիվացում) **Հարցեր**. • Ձեզ համար ի՞նչ են նշանակում կայում զարգացման նպատակները մի նախադասությամբ: • Այս նպատակների վերաբերյալ միջազգային հանրությունը ե՞րբ է եկել համաձայնության: • Քանի՞ տարի է մնացել մինչև 2030 թվականը, փոխվե՞լ է ինչ-որ բան դեպի լավը: • Ի՞նչ անելիք ունենք մնացած ժամանակահատվածում և նաև հետագայում: **Ռեսուրս.** Դասագիրք, «Կրթություն կայուն զարգացման համար», էջ 79-85 **Ակտիվություն.** Արեք դատողություն, էջ 79 **Հարցեր.** • Թվարկեք գյուղում առկա խնդիրները և կապեք դրանք կայուն զարգացման նպատակներին: • Իրավիճակի հերոսների ո՞ր վարքն է համապատասխանում կայուն զարգացմանը և ո՞րը՝ ոչ: • Բնակչությունը փորձո՞ւմ է դիմակայել առկա մարտահրավերներին: Ինչպե՞ս: • Ինչո՞ւ չի կարողացել գյուղը սահմանել ճիշտ հեռանկար հատկացված գումարը օգտագործելու համար: • Դուք ի՞նչ խորհուրդ կտաք գյուղի բնակչությանը: Ինչպե՞ս պետք է վարվեն, որ մի կողմից ստացված օգուտը մյուս կողմից ռիսկեր ու վտանգ չբերի: • Ինչպիսի՞ դեր ունի պետությունը այս գյուղի հետ կապված: • Ինչպիսի՞ն են գյուղի բնակիչների ապագա նպատակները՝ ուսման ցանկություն, շահույթի ստացում, առողջության պահպանում, էկոլոգիական խնդիրների լուծում, աղքատության հաղթահարում և այլն: • **Ի՞նչ կապ ունեն նրանց անձնական նպատակները կայուն զարգացման նպատակների, համապատասխանաբար՝ միջազգային հանրության նպատակների ու ձգտումների հետ:** **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 82 **Հարցեր.** Ի՞նչ երկընտրանքի առաջ են կանգնած իրավիճակի հերոսները: • Ինչո՞ւ նրանք չեն կարող բոլոր ցանկությունները կատարել միաժամանակ:	ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները. Ակնարկ https://www.youtube.com/watch?v=Pnwi5zwN69E https://www.youtube.com/watch?v=vI_kA0g3B3o Կայուն զարգացում Զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ **Հավելված 9**, էջ 107-108

	• Ինչպիսի՞ որոշում կկայացնեիք դուք հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները: • Հիշեք նման օրինակներ ձեր քաղաքի, գյուղի, համայնքի կամ երկրի առօրյայից, երբ տարակարծության պատճառով անլուծելի է մնացել այս կամ այն կոնկրետ հարցը: **Ռեսուրս.** Դասագիրք, Վենի դիագրամ, էջ 83, **Հավելված 2,** էջ 159-167 **Ակտիվություն.** Բանավեճ **(Դասագրքում տրված են Վենի դիագրամն ու տեղեկությունը, բայց չկան բանավեճի համար նախատեսված հարցեր):** **Հարցեր.** • Նախորդ խմբային աշխատանքի ընթացքում քննարկված իրավիճակներում ինչո՞ւ էր դժվար որոշում կայացնելը: • Ի՞նչ կապ եք տեսնում գրքում տրված Վենի դիագրամի ու առօրյա իրավիճակների միջև: • Կայուն զարգացման հայեցակարգի երեք ուղությունները ի՞նչ կապ ունեն միմյանց հետ և ինչո՞վ են հակադարձում իրար: • Բերեք յուրաքանչյուր ուղղությունը պատկերող որոշակի օրինակներ: • Որպեսզի հոգ տանենք մոլորակի մասին, ինչպե՞ս պետք է զարգացնենք տնտեսությունը, սոցիալական ոլորտը, մոլորակի հանդեպ հոգատարությունը: • Յուրաքանչյուր ուղղության տեսակետից, ի՞նչ կապ կա մարդու ներկա կարիքների ու ապագայի հեռանկարի միջև: • Ի՞նչ ելք եք տեսնում հաշվեկշիռ գտնելու համար: • Անհրաժե՞շտ է, թե՞ ոչ անընդհատ կրթվել կայուն զարգացման համար, որպեսզի կարողանանք գտնել ու պահպանել այս հաշվեկշիռը: • **Ինչպե՞ս կկիրառեք ստացված տեղեկությունը, փորձը և եզրահանգումները համալիր առաջադրանքի թեման ընտրելու և կատարելու համար:** **Առաջադրանք.** Ծանոթացեք պարագրաֆի վերջում տրված օգտակար տեսա-ռեսուրսներին, պատրաստեք **տեղեկատվական տեքստ/նյութ** (100-150 բառ) ընտրված կայուն զարգացման ուղղության վերաբերյալ, որին կավելացնեք ձեզ համար ծանոթ օրինակներ, իրավիճակներ **(Դասագրքում տրված են հղումները, բայց չկա առաջադրանքի հրահանգը):** ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներ- ակնարկ www.shorturl.at/lJQRT ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներ մասին www.shorturl.at/wELY6	

	Ի՞նչ կարող ենք անել գլոբալ նպատակներին հասնելու համար www.shorturl.at/xFLNX Ցուցաբերի՛ր ակտիվություն՝ փոխի՛ր աշխարհը www.shorturl.at/vSZ69 **Քայլ 2. Ինչպե՞ս կարող ենք (ընտրված բաղադրիչի համաձայն) մեր տեղային գործողություններով ազդեցություն գործել գլոբալ արդյունքների վրա (Կ. պատկ. 2):** **Ռեսուրս.** Աշակերտների կողմից պատրաստված տեղեկատվական նյութը **Ակտիվություն**. Առաջադրանքի ներկայացում, բանավեճ **Հարցեր.** • Ի՞նչ առանձնահատուկ կարևորություն ունի կայուն զարգացման յուրաքանչյուր բաղադրիչը: • Անվանե՛ք, դուք ինչպե՞ս եք կապված այս բաղադրիչների հետ: Ի՞նչ տեսակետից ունեք հարաբերություն՝ դրակա՞ն, բացասակա՞ն: Դատողություններ արե՛ք ձեր առօրյայից օրինակներով: • Ինչպե՞ս են ազդում նրանք միմյանց վրա: • Ի՞նչ կապ կա անհատի տեղային գործողությունների ու կայուն զարգացման այս բաղադրիչների իրականացման միջև: • Տեղային որոշումները այս դեպքում նույնպես ազդո՞ւմ են գլոբալ որոշումների վրա: Բացատրեք, ինչո՞ւ: • **Մտածեք, ինչպե՞ս կկիրառեք ստացված տեղեկությունն ու փորձը համալիր առաջադրանքի նյութի մեջ:** **Ռեսուրս.** Կայուն զարգացման նպատակների ցուցանակներ, էջ 159-167 **Ակտիվություն**. Աշխատեք խմբերով, էջ 84 **Ամփոփում**. Գրատախտակին միմյանցից հեռու գրում ենք կայուն զարգացման **հայեցակարգի երեք բաղադրիչները** և աշակերտներին խնդրում ենք մեզ կամ աշակերտներից մեկին թելադրել, որ բաղադրիչն է համապատասխանում նպատակին (գրանցում ենք համարը), որի մասին նրանք խոսել են: Այստեղ կարող է առաջանալ նաև երկիմաստություն, ինչը ցույց է տալիս, որ այս բաղադրիչների միջև նույնպես չկան անանցանելի սահմաններ: **Ռեսուրս.** Աշխարհի փրկության դասագիրք, էջ 86-90 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով Բաժանե՛ք ներքևում տրված խորհուրդները, դուրս գրեք.	**դուրս**

	• 5 բան, որ միշտ անում եք և 5 բան, որ չեք անում/չեք կարողանում անել։ • 2 բան, որը ըստ ձեզ չեք կարողանա անել և ինչո՞ւ։ • Ի՞նչ կավելացնեիք կամ կհանեիք այս խորհուրդներից։ **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 89 **Հարցեր.** • Ինչո՞ւ են ձեր թվարկածները երբեմն համապատասխանում միմյանց, երբեմն՝ ոչ։ • Սուբյեկտիվ վերաբերմունքը սահմանո՞ւմ է, թե՞ ոչ մեր վարքը։ • Ո՞ր կանոնն է գործում. «Չգիտեմ ու չեմ անում», «Չեմ մտածել ու չեմ անում», «Ուրիշները չեն անում ու ես էլ չեմ անի», «Ես գիտեմ ու հոգ եմ տանում ապագա սերունդների մասին»։ • Ինչպե՞ս պետք է վարվենք, որ այս վերաբերմունքը ցանկալի կերպով փոխվի։ • Աշխարհի փրկության դասագրքի ո՞ր կոչերն են համապատասխանում ձեր համալիր առաջադրանքին։ • Ձեր բաղադրիչի ուղղությամբ ի՞նչ են բաց թողել այս դասագրքի հեղինակները։ • Ինչպե՞ս կձևակերպեիք այդ խորհուրդը, եթե ավելացնեիք, ո՞ր մասում կտեղադրեիք։ • **Ինչպե՞ս կկիրառեք ստացած տեղեկությունը, փորձը և եզրահանգումները համալիր առաջադրանքը կատարելիս**։ • **Ինչպե՞ս կօգնեն աշխարհի փրկության դասագրքի խորհուրդները հոդվածը պատրաստելիս։** **Երաշխավորություն ուսուցչին**. 91-րդ էջում տրված «Քննարկումներ» ակտիվությունը մի տեսակ ամփոփում է գլոբալացման հարցերը, որում, ինչ խոսք, նկատի են առնվում նաև կայուն զարգացման նպատակները, դրա համար Դուք պետք է որոշեք՝ այս քննարկումները անցկացնել որպես առաջադրանքի հետ անուղղակի կապ ունեցող ակտիվություն, թե՞ անկախ, որպես հարցերի 2 բլոկի (գլոբալացում և կայուն զարգացում) ամփոփիչ ակտիվություն։ Հնարավոր է այս հարցի շուրջ աշխատել նաև բանավեճի կամ տնային աշխատանքի ձևաչափով։	

Թիրախային հասկացություն – Քաղաքացիություն		Ընտրե՛ք որևէ մեկը	
Երկարաժամկետ նպատակ **Թիրախային հասկացություն և նրա հետ կապված կայուն պատկերացումներ**	**Հարց.** Սոցիալ-էմոցիոնալ ունակություններ **Ենթահարց.** • Պատկանելիության զգացում **Ենթահասկացություններ.** Մարդու պահանջմունքներ և կարիքներ, Սոցիալ-էմոցիոնալ ունակություններ	**Հանգուցային հարց/հարցեր** • Ինչպե՞ս կազմեմ հրավիրատոմս, որը հասցեատերերի/ունկնդիրնե-րի մոտ կառաջացնի/կամրապնդի միջազգային միջոցառումների հանդեպ պատկանելիության և ներողամիտ խմբերի հանդեպ էմպաթիայի զգացումը: • Ինչպե՞ս պատկերեմ նամակում անհրաժեշտ սոցիալ-էմոցիոնալ ունակություններով կազմված կանոնները, որոնք բազմազգ հանրության մեջ ապահովում են մարդասիրական հարաբերություններ:	**Միջանկյալ ուսումնական նպատակ** **Համալիր առաջադրանքի պայման**
Հասարակություն (անձնավորություն, անհատ և սոցիալացում) **<u>Արդյունքներ.</u>** **բազային աստիճան.** **1, 2** 1. **Մարդը անձնավորություն է** .	**Համալիր առաջադրանքի փուլերը** (ռեսուրսներ, ակտիվություններ). **Քայլ 1.** Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ: **Ռեսուրս**. Դասագիրք, էջ 92 **Ակտիվություն.** Ծանոթացնել՝ առաջադրանքի պահանջը, առաջադրանքի տեքստը ընկալելու և պայմանը ըմբռնելու համար: Աշակերտների փորձառության համաձայն, հնարավոր է ուղղորդված պրակտիկայի կիրառումը նույնպես: **Ռեսուրս**. Հրավիրատոմսի պատրաստման կարգը, **Հավելված 11, էջ 111**	**Առաջադրանք 1** **Համալիր առաջադրանքի պայմանը** Պատկերացրեք, որ դուք միջազգային բարեգործական միջոցառումներից մեկի կազմակերպիչ եք և արդեն գիտեք, որ

սեփական աշխարհայացքով (գաղափարներով, արժանիքներով) և ձգտումներով, նա ունի սեփական անձի ազատ զարգացման իրավունք։ 2. Մարդը ունի տարբեր (ֆիզոլոգիական, անվտանգության, սոցիալական կապերի և այլ) պահանջմունքներ, առանց որոնց բավարարման նա չի կարող անհատապես զարգանալ։ 3. Այլ մարդկանց/սոցիալական խմբերի/ինստիտուտների հետ հարաբերությունները նպաստում են մարդու անհատական զարգացմանը։ 4. Ասսերտիվությունը (մարդու՝ սեփական կարծիքը ուրիշներին չվիրավորելով հստակ արտահայտելու ունակությունը) նպաստում է անհատի և սոցիումի	**Ակտիվություն.** Արե՛ք դատողություն **Հարցեր.** • Ինչի՞ն է վերաբերվում առաջադրանքը։ Ի՞նչ է պահանջվում ձեզանից առաջադրանքը կատարելու համար։ • Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «միջազգային բարեգործական միջոցառումը»։ • Ինչպիսի՞ն է նամակի հասցեատերերի կազմը։ • Ինչպե՞ս կարելի է այս մարդկանց ընդհանուր հետաքրքրությունները օգտագործել բարեհաճ միջավայր ստեղծելու համար։ • Ի՞նչ նյութ պետք է պատրաստեք։ • Ի՞նչ գիտելիք ու ունակություններ են անհրաժեշտ, որպեսզի կարողանաք կատարել այս առաջադրանքը։ **Երաշխավորություն ուսուցչին.** Շնորհանդեսի ախտորոշիչ հարցեր Տե՛ս՝ **Հավելված 1, էջ 95** **II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը** **Քայլ 1. Ո՞ր աշխարհայացքի, արժեքների կամ/և ձգտումների հիման վրա պլանավորվեց բարեգործական միջոցառումը, կայացան դրա կանոնները և ինչո՞ւ (Կ. պատկ. 1,3.)։** **Ռեսուրս.** Դասագիրք, Անհատի զարգացում և գլոբալ միջավայր, էջ 93-99 **Ակտիվություն**. Աշխատեք զույգերով, էջ 87 **Հարցեր**. • Ի՞նչ եք մտածում, ինչո՞ւ էր Սոփոն տխուր։ Ինչո՞ւ էր իրեն մենակ զգում։ • Նրա և նրա հասակակիցների ո՞ր կարիքներն էին սահմանափակվել կովիդմեկուսացման պայմաններում։ Ի՞նչ էր պահպանվել նրանց մոտ **սոցիալիզացման համար։** • Ինչպե՞ս է ազդում երկարաժամկետ մեկուսացումը անհատի, հատկապես՝ երիտասարդների վրա։ Ինչո՞ւ։	հյուրերի շարքում տարբեր ռասսայի, ազգության, կրոնի, տարիքային խմբի քաղաքագետներ, բիզնեսմեններ, դիվանագետներ և արվեստի ոլորտի ներկայացուցիչներ պետք է լինեն։ Միջոցառումը պարունակում է գործնական մաս (երեխաների նկարների բարեգործական ցուցահանդես-վաճառք) և ընթրիք՝ զվարճալի ծրագրով։ Հյուրերի համար պատրաստեք **հրավիրատոմսեր** (200-250 բառ), որով նրանց մոտ կառաջացնեք պատկանելիության զգացում միջազգային բարեգործական միջոցառման հանդեպ։ Նամակը կարող է պարունակել

ներդաշնակ հարաբերություններին:	• Ի՞նչ նախապայման կար նրա համար, որ Սոփոն կենդանիների պաշտպանների հետ հարաբերություններ սկսեր (պատկանելիության պահանջ, ընդհանուր հետաքրքրություններ…) • Ընդհանրապես ի՞նչ նախադրյալներ են անհրաժեշտ, որ անձը իրեն զգա միջազգային հասարակության մաս: • Ի՞նչը արագացրեց Սոփոյի որոշումը՝ դառնալ միջազգային հանրության անդամ: Ինչո՞ւ եք մտածում այսպես: Ի՞նչը նպաստեց, որ Սոփոյի մոտ առաջանար նրանց հանդեպ պատկանելիության զգացում (ֆիլմ, դեպք, ուժեղ էմոցիաներ, հետադարձ կապ կազմակերպության կողմից…): • Ինչպե՞ս ազդեց այս որոշումը Սոփոյի տրամադրվածության վրա: Ինչո՞ւ: Այս խմբի հանդեպ պատկանելությունը ինչպե՞ս է ազդում նրա անձի վրա: • Կապե՛ք այս պատմությունը ձեր անձնական փորձին, ի՞նչ ընդհանրություններ գտաք, ի՞նչ տարբերություններ: • Մտածե՛ք, եթե մարդն իր համայնքում, քաղաքում, երկրում չունի ակտիվ քաղաքացիական տեսակետ, չի ընդունում/չի կարողանում ընդունել բազմազանությունը, համերաշխ չէ, կարո՞ղ է դառնալ գլոբալ քաղաքացի: Ինչո՞ւ: **Երաշխավորություն ուսուցչին.** Աշակերտներին տանք հնարավորություն արտահայտել իրենց կարծիքները և հաստատել փաստարկներով: Ե՛վ այս, և՛ մյուս ակտիվություններում ուշադրություն դարձնենք ենթահարցին (պատկանելության զգացում), հենց դրան ենք կապում տրված իրավիճակները, ինչը կօգնի մեզ աշխատել ենթահասկացության վրա: Սա թիրախային հարցի կայուն պատկերացումների վրա դուրս գալու հիմքն է: Օրինակ. աշակերտը հասկացել է, որ Սոփոն ուներ սոցիալական կապերի պահանջ և այդ պատճառով էր տխուր: Տեսել է ֆիլմ և նրան ցնցել է մարդու անզգույշ վարքի արդյունքը: Հանդիպել է վիրավոր թռչնի, ուժեղացել է էմոցիան, ցանկացել է ինչ-որ մեկի հետ կիսվել այդ էմոցիայով (գրել է մեսենջերում), նրանց կողմից ստացել պատասխան հետաքրքրություն և կարեկցանք: Սոփոն իրեն զգացել է նրանց պատկանող/նրանցից մեկը, առաջացել է պատկանելության զգացում այս հասարակական խմբի հանդեպ, կազմակերպության կողմից՝ ընդունվածություն: Կազմակերպության անդամ դառնալով Սոփոն բավարարել է համախոհներ գտնելու պահանջմունքը,ինչն էլ հետագայում նպաստել է անհատապես զարգացմանը (նոր գիտելիք, ունակություններ, ակումբների ստեղծում…):	նրբանկատորեն մատուցված տեղեկություն հրավերքի նպատակի մասին (ընտրեք որևէ մեկը՝ օգնել որբ երեխաների, կովիդի կանխարգելման համար գումարի հավաքում, կրթության աջակցություն. . .) և հրավերքին հագնվելու, վարքի, հարաբերություններ, մենյուի ու զվարճալի ծրագրի մասին: **Աշխատության/ աշխատության շնորհանդեսի ժամանակ ընդգծված կերպով ներկայացրեք.** • Ի՞նչ աշխարհայացքի, արժեքների կամ/և ձգտումների հիման վրա է

	Ակտիվություն. Աշխատեք զույգերով, էջ 95 **Հարցեր.** • Ո՞ր խմբի հանդեպ պատկանելության մասին է խոսում Վաժա Փշավելան ներքևում տրված տեքստում։ • Ընդունո՞ւմ եք կարծիքը, որ «ամեն իսկական հայրենասեր աշխարհաքաղաքացի է այնպես, ինչպես ամեն գիտակից աշխարհաքաղաքացի (և ոչ մեզ բնորոշ) հայրենասեր է»։ Ինչո՞ւ եք մտածում այսպես։ • Այս կարծիքները այսօր էլ պահո՞ւմ են իրենց ակտուալությունը։ Բերեք կյանքից վերցված օրինակներ համապատասխան փաստարկներով, երբ անձնավորությունը և՛ հայրենասեր է, և՛ գլոբալ քաղաքացի։ **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 98 **Հարցեր.** • Թվարկեք, ո՞ր կարիքներն ու պահանջմունքներն են միավորում գլոբալ քաղաքացիներին։ • 'Ո՞ր դեպքում կարող է մարդու մոտ առաջանալ միջազգային հանրության հանդեպ պատկանելության զգացում։ • Ո՞ր գործոնները/զգացումները/գործողությունները կարող են հանդիսանալ խթան տեղայինից դեպի գլոբալային տեղափոխվելու համար։ Հիշեք օրինակներ կյանքից, գրականությունից, մեդիայից։ • Ինչպե՞ս կարող է միջավայրը ներգործել, որ անձի մոտ զարգանան գլոբալ քաղաքացու բնութագրիչներ (գիտելիք, ունակություն, վերաբերմունք)։ **Ակտիվություն.** Բանավեճ **(այս ակտիվությունը աշակերտի գրքում չկա)** **Հարցեր.** • Ի՞նչ եք կարծում, ինչ պետք է հաշվի առնի բարեգործական միջոցառման կազմակերպիչը, եթե ցանկանում է հյուրեր հրավիրել գլոբալ խնդիր լուծելու (դրամահավաք) համար։ • Ի՞նչը կարող է պայմանավորել այս մտահղացման հաջողությունը։ Ինչպիսի՞ մարդիկ են ընդունում նման որոշումներ, ի՞նչ աշխարհայացքի, արժեքների տեր անձինք։ • **Ինչպե՞ս կարող եք այս տեղեկությունը և եզրահանգումները կիրառել նամակում։** • **Համարո՞ւմ եք անհրաժեշտ նամակում նշել այն մասին, որ հասցեատիրոջը**	կազմակերպվել ընդունելության կարգը, և ինչո՞ւ **(Կ. պատկ. 1,3.):** • Ինչպե՞ս և ինչքանո՞վ են հաշվի առնված հրավերքի կազմակերպման մեջ հյուրերի և հասարակության կարիքներն ու պահանջմունքները, որպեսզի նրանց մոտ ամրապնդվի այս խմբի հանդեպ պատկանելության զգացումը։ (Կ.պատկ.2)։ • Ինչքանո՞վ կարևոր և բազմակողմանիորեն օգտակար կլինի յուրաքանչյուրի ներդաշնակ համագործակցությունը հրավիրված հասարակության

	համարում են գլոբալ քաղաքացի, ով պատասխանատվություն է կրում խնդիրները (քաղց, համաճարակ...) նվազեցնելու համար: • **Ինչպե՞ս կձևակերպեք այս ցուցումը մեկ-երկու նախադասությամբ:** **Երաշխավորություն ուսուցչին.** Հիշեցրեք աշակերտներին համաշխարհային քաղաքացի Հյու Էվանսի Նյու-Յորքի կենտրոնական այգում անցկացրած համերգի մասին, որի տոմսերը հնարավոր էր ձեռք բերել միայն գլոբալ քաղաքացու ինչ-որ գործողությամբ. . . Տե՛ս՝ էջ 68 **Ռեսուրս.** Դասագիրք, Ինչպես բացահայտենք ինքներս մեզ, էջ 100 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 100 **Ակտիվություն.** Աշխատե՛ք զույգերով, էջ 101 **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 102 **Հարցեր.** • Ո՞ր բացասական հանրային իրադարձության/ների մասին է խոսում դիզայները: • Այս վերաբերմունքը (տարբեր դրսևորումներով) ներկայացնո՞ւմ է խնդիր, թե՞ ոչ միջազգային հանրության համար: • Ինչպե՞ս է ծրագրում Դեմնա Գվասալիան հակադրվել բազմազանության անընդունելիությանը, սոցիալական անարդարությանը, կարծրատիպերին: • Ո՞ր հասարակական խմբին է պատկանում դիզայները (ելնելով տեքստից): • Ձեր կարծիքով, նրա մտահղացումը/արժեքները համապատասխանո՞ւմ են գլոբալ քաղաքացու արժեքներին: Կարո՞ղ ենք նրան համարել գլոբալ քաղաքացիների հասարակական խմբի անդամ: Ինչո՞ւ: • Դիզայները հոգ տանու՞մ է, թե՞ ոչ միջազգային հանրության այնպիսի կարիքների կարգավորման մասին, ինչպիսիք են բազմազանության ընդունվածությունը և կարծրատիպերից ազատումը: • Ի՞նչ եք կարծում, բոլոր տարածքներում կամ միջոցառումներին կարելի՞ է ցանկացած հագուստով ներկայանալ: Ո՞վ է սահմանել այս կանոնները: • Ռեստորանը (սեփական բիզնեսը) իրավունք ունի՞ սահմանել հագնվելու ոճ հյուրերի համար և վերահսկել այն: Ինչո՞ւ: • Կոնկրետ դեպքերում ո՞ր իրավունքներն են հակասում միմյանց:	համար (Կ.պատկ.4): Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ Հավելված 10, էջ 109-110 **Առաջադրանքի արտադրանքի հավանական նմուշը** դիտե՛ք. Հավելված 12, էջ 112-113: Պարզ է, այս նմուշը մինչև առաջադրանքի կատարումը հասանելի չպետք է լինի աշակերտներին: Ուսուցիչը կարող է այն օգտագործել հետադարձ կապի համար:

- Ըստ ձեզ, ո՞ր իրավունքն է ավելի կարևոր՝ սեփականությա՞ն, թե՞ տեղաշարժման: Հիմնավորեք:
- **Դեմնան ազդեցություն թողնո՞ւմ է, թե՞ ոչ այլոց «Ես հայեցակարգի» ձևավորման վրա:**
- **Ձեր կարծիքով, բազմաբնույթ հասարակությունից կազմված միջոցառմանը պե՞տք է կազմակերպիչը պահանջի, թե՞ ոչ հագնվելու որոշակի ոճ: Ինչպե՞ս: Ինչո՞ւ:**

Երաշխավորություն ուսուցչին. Այս իրավիճակը քննարկելիս աշակերտներին տվեք իրենց կարծիքներն արտահայտելու, փաստարկներով հիմնավորելու հնարավորություն: Սա երկընտրանքային իրավիճակ է, որտեղ միմյանց հակադրվում են անկախությունն ու կանոնը, սպառողի ընտրության իրավունքն ու արտադրողի՝ դեպի սպառողը կողմնորոշված լինելու իրավունքը . . . Այստեղ ճիշտ պատասխան գոյություն չունի, դրա համար աշակերտներին պետք է զգուշացնենք հարգանք ցուցաբերել միմյանց տարբերվող կարծիքների նկատմամբ:

Քայլ 2. Ինչպե՞ս և ինչքանո՞վ են հրավերքի կազմակերպական աշխատանքներում հաշվի

առնված հյուրերի և հասարակության կարիքներն ու պահանջմունքները, որպեսզի նրանց մոտ

խորանա այս խմբին իրենց պատկանելության զգացումը (Կ. պատկ. 2):

Ռեսուրս. Ինչպե՞ս է փոխում մեզ գլոբալ միջավայրը, էջ 104
Ակտիվություն. Արե՛ք դատողություն, էջ 104

Ակտիվություն. Արե՛ք դատողություն, էջ 106

Ակտիվություն. Արե՛ք դատողություն, էջ 107

Հարցեր.
- **Գլոբալ միջավայրը փոխում է մարդկանց, բայց կան անհատականություններ, որոնք ավելի ամուր են և հեշտությամբ չեն փոխվում, ինչպե՞ս պետք է վարվեք դուք՝ միջոցառման կազմակերպիչներդ, որպեսզի հաշվի առնեք բազմաբնույթ հասարակության տարբերվող կարիքները այնպես, որ ոչ ոքի չնեղացնեք:**
- **Ինչպիսի՞ կարծիք ունեք դուք հագնելու, վարքի, մենյուի, մշակութային ծրագրի տեսանկյունից:**

	Ռեսուրս. Դասագիրք, Հաջողության ճանապարհը դուրս է գալիս համարժեք ինքնագնահատման վրա, էջ 109 **Ակտիվություն.** Աշխատե՛ք զույգերով, էջ 109 **Ակտիվություն**. Արե՛ք դատողություն, էջ 112 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 113 Ի՞նչն է օգնում դեռահասին համարժեք գնահատման մեջ։ • Ի՞նչն է դրդում նրան կասկածել իր հնարավորություններին։ • Ի՞նչն է օգնում չափահասին ինքնավստահության ուժեղացման հարցում։ • Ինչո՞վ է պայմանավորված ինքնավստահության թուլացումը։ • Հնարավո՞ր է, թե՞ ոչ միշտ և ամեն ինչում լինել ինքնավստահ։ Ինչո՞ւ եք մտածում այդպես, բերեք օրինակներ։ • Հնարավո՞ր է, թե՞ ոչ, որ մարդը ապրի առանց սխալների։ Ինչո՞ւ։ • Ինչպե՞ս կարող ենք սխալը վերածել նոր հնարավորության։ • Ինչո՞ւ է մարդու համար կարևոր լինել ուրիշների կողմից ընդունված։ • **Այս բանավեճից արված եզրահանգումը ինչպե՞ս կպատկերեք ձեր նամակում։** **Առաջադրանք. էջ 113** Աշակերտները տանը պետք է պատրաստեն մի քանի երկու-երեք նախադասությամբ տեքստեր միջոցառման հագուկապի, վարքի, մենյուի և մշակութային ծրագրի մասին։Իսկ բանավոր բացատրեն, թե ինչու են ընտրել այս կարգը։ **Քայլ 3. Ինչքանո՞վ կարևոր և բազմակողմանիորեն օգտակար կլինի յուրաքանչյուրի ներդաշնակ համագործակցությունը հրավիրված հասարակության համար։ (Կ. պատկ.. 4)** **Ռեսուրս.** Դասագիրք, Էմոցիաների կառավարում, մասսաների/զանգվածների հոգեբանություն, էջ 114-119 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 114 **Ակտիվություն.** Հիշե՛ք, էջ 115 **Ակտիվություն.** Խաղ, էջ 115 **Երաշխավորություն ուսուցչին.**	

	Աշակերտներին դասագրքի 115-րդ էջում տրված է ակտիվություն՝ «Էմոցիաների բացահայտման» պայման։ Դուք փոքր արկղում/զամբյուղում տեղադրում եք այն միատեսակ քարտերը, որոնց վրա գրված են ներքևում թվարկված էմոցիաների ու մարմնի մասերի անունները, որոնցով պետք է արտահայտեն էմոցիաները (կարող եք ավելացնել կամ կրկնել էմոցիաները)։ Պետք է ունենաք աշակերտների թվով քարտեր։ Դերը ըմբռնելու համար տալիս եք 1-2 րոպե, և հետո յուրաքանչյուրը գալիս է, ցույց է տալիս էմոցիաները, իսկ դասարանը՝ գուշակում։ 1. Սեր-ձեռքեր 2. Սեր- դեմքի արտահայտություն 3. Կարոտ- ձեռքեր 4. Կարոտ- դեմքի արտահայտություն 5. Ջղայնություն- հոնքեր 6. Ջղայնություն- ձեռքեր 7. Զարմանք- ձեռքեր 8. Զարմանք- դեմքի արտահայտություն 9. Անհամբերություն- ձեռքեր 10. Անհամբերություն- ոտքեր 11. Տխրություն- դեմքի արտահայտություն 12. Տխրություն- ուսեր 13. Ուրախություն- ձեռքեր 14. Ուրախություն- դեմքի արտահայտություն 15. Վախ- ոտքեր 16. Վախ- ձեռքեր 17. Վիշտ- դեմքի արտահայտություն 18. Հպարտություն- ուսեր 19. Խռովություն- դեմքի արտահայտություն 20. Խռովություն- մարմին Ամփոփեք ակտիվությունը այն մասին դատողությամբ, թե ինչպես կարողացան էմոցիաներն արտահայտել մարմնի լեզվով և ինչպես գուշակեցին։ **Ակտիվություն.** Աշխատե՛ք զույգերով, էջ 116 **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 119 **Ակտիվություն.** Քննարկումներ, էջ 120	

	Ռեսուրս. Դասագիրք, Ինչո՞ւ պետք է լինենք էմպաթիկ, էջ 121 **Ակտիվություն.** Աշխատե՛ք խմբերով, էջ 121 **Ակտիվություն.** Արեք դատողություն, էջ 121 **Ակտիվություն.** Աշխատե՛ք զույգերով, էջ 122 **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 123 **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 123 **Ակտիվություն. Ծանոթություն տնային աշխատանքին-բանավեճ** **Հարցեր.** • Ո՞ր սկզբունքները հաշվի առնելով եք կազմել կանոնները։ • Ինչքանո՞վ են ժողովրդավարական այս կանոնները։ Հաշվի առնո՞ւմ է փոքրամասնությունների, կանանց, սահմանափակ կարողություններով անձանց հետաքրքրությունները։ • Հաշվի առե՞լ եք, ինչը կարող է ձեր հասցեատիրոջ մոտ առաջացնել դժգոհություն։ Ամփոփում. **Ստացած տեղեկությունները հաշվի առնելով, ինչպե՞ս կձևակերպեք հրավիրատոմսը, ի՞նչը և ինչպե՞ս կկիրառեք։**		
Երկարաժամկետ նպատակ **Թիրախային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ**	**Հարց.** Գլոբալիզացիա և հաղորդակցություն **Ենթահարց.** Հակամարտության կառավարում **Ենթահասկացություններ.** Մարդու պահանջներն ու կարիքները,	**Հանգուցային հարց/հարցեր.** • Ինչպե՞ս ներկայացնեմ ռեպորտաժում խաղաղության դրական առավելությունը և հակամարտության	**Միջանկյալ ուսումնական նպատակ**

	սոցիալ-էմոցիոնալ ունակություններ-հմտություններ	արդյունավետ կառավարման հնարավորությունները: • Ինչո՞ւ է նշանակալից մեդիայի ոչ ագրեսիվ քաղաքականությունը մարդու և հասարակության զարգացման համար:	**Համալիր առաջադրանքի պաման**
Հասարակություն (անձնավորություն, անհատ,հասարակություն և սոցիալացում) **<u>Արդյունքներ.</u>** **բազային աստիճան.** **1, 2** 1. Մարդը անձնավորություն է, սեփական աշխարհայացքով (գաղափարներով, արժանիքներով) և ձգտումներով, նա ունի սեփական անհատականության ազատ զարգացման իրավունք: 2. Մարդն ունի տարբեր (ֆիզոլոգիական, անվտանգության, սոցիալական կապեր և այլն) պահանջներ, առանց որոնց	**Համալիր առաջադրանքի մշակման փուլերը (ռեսուրսներ, ակտիվություններ).** **I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը** **Քայլ 1.** Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ: **Ռեսուրս.** Դասագիրք, էջ 125 **Ենթահարց.** Առաջադրանքի պայման **Ակտիվություն.** Աշխատանք տեքստի վրա (ծանոթացեք առաջադրանքի պայմանին) **Հարցեր.** • Ի՞նչ է պահանջում առաջադրանքը ձեզանից: • Հետաքրքի՞ր է, թե՞ ոչ այս առաջադրանքի կատարումը: • Երբևէ երազե՞լ եք նման մոլորակի մասին: • Ի՞նչ նյութ պետք է պատրաստեք: **Ենթահարց.** Ռեպորտաժ • Ի՞նչ է ռեպորտաժը: • Գրե՞լ, կարդացե՞լ, լսե՞լ եք ռեպորտաժներ **(ֆուտբոլի, ինչ-որ սպորտային մրցման մասին, ռեպորտաժ պատերազմական իրավիճակից, մարդաշատ վայրից):** • Ի՞նչ պետք է զգացնել տա մեզ ռեպորտաժը: • Ինչպե՞ս, գրելու ո՞ր միջոցներով է հասանելի ներկայության ազդեցությունը: • Պատկերացրեք, որ հիմա, մեր դասասենյակից պետք է վարեք ռադիոռեպորտաժ: Ի՞նչ և ինչպե՞ս կասեիք: • Ինչպիսի՞ կառուցվածք ունի ռեպորտաժը (վերնագիր, նախաբան, հիմնական մաս, վերջաբան): **Երաշխավորություն ուսուցչին.** Շնորհանդեսի ախտորոշիչ հարցեր (տե՛ս՝ Հավելված 1, էջ 95): Նախօրոք եկեք համաձայնության շնորհանդեսի ձևի մասին: **II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը** **Քայլ 1. Ինչպիսի՞ն է խաղաղության մոլորակի բնակիչների աշխարհայացքը, ի՞նչ ձգտումներ ունեն, հո չի՞ սահմանափակվում զարգացման ազատությունը (Կ.պատկ.1.):**	**Առաջադրանք 2.** **Համալիր առաջադրանքի պայման** Պատկերացրեք, որ լրագրող եք և ռեպորտաժ պատրաստելու համար ձեզ ուղարկել են խաղաղության մոլորակ, որտեղ չկան զինված հակամարտություններ ու պատերազմներ, այնտեղ ոչ ոք չի ծախսում գումար զենք պատրաստելու համար, քանի որ չկա դրա անհրաժեշտությունը: Մնացածը արդեն կախված է ձեր երևակայությունից:

բավարարման նա չի կարող անհատապես զարգանալ։ 3. Այլ մարդկանց/սոցիալական խմբերի/ինստիտուցիաների հետ հարաբերությունները նպաստում են մարդու անհատական զարգացմանը։ 4. Ասսերտիվությունը (մարդու՝ ուրիշներին չվիրավորելով սեփական կարծիքը հստակ արտահայտելու ունակությունը) նպաստում է անհատի և սոցիումի ներդաշնակ հարաբերություններին։	**Ակտիվություն.** Բանավեճ **Հարցեր.** • Վերջին շրջանում տեղի ունեցած գլոբալ խնդիրներից ո՞րը կանվանեք։ • Ի՞նչ է հետևում այս խնդրին, ինչպիսի՞ն են մարդկային, տնտեսական կորուստները, միջավայրի կորուստները պատերազմի ու զինված հակամարտությունների ժամանակ։ • Ինչպե՞ս կբացատրեք «Պատերազմում հաղթողներ չկան» արտահայտությունը։ • Պատերազմի ժամանակ մարդկանց ո՞ր իրավունքներն են սահմանափակվում։ • Մինչև պատերազմը նրանք ձեռքից ի՞նչ հնարավորություն են բաց թողնում։ • Պատկերացնո՞ւմ եք, թե՞ ոչ աշխարհը առանց այլ զինված հակամարտությունների։ • Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն կլինի կյանքն այսպիսի աշխարհում։ • Ո՞ր արժեքները կլինեն կարևոր միջավայրում, որտեղ չկան զինված հակամարտություններ ու պատերազմ։ • Ինչքանո՞վ կտրվի նման միջավայրում ապրողներին ինքնազարգացման (գիտություն, կրթություն, արվեստ, նորությունների ընկալում. . .) հնարավորություն։ **Ռեսուրս**. Դասագիրք, Հաղորդակցություն, էջ 126 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 126 **Ռեսուրս.** Դասագիրք, «Սա հետաքրքիր է», էջ 128 **Ակտիվություն.** Աշխատանք տեքստի վրա **Հարցեր**. • Հիշե՛ք հակամարտությունների զարգացման փուլերը։ Ի՞նչ դեր ունի հաղորդակցությունը այս գործընթացում։ • Կարո՞ղ են մարդիկ ճիշտ հաղորդակցություն կիրառելով խուսափել կոնֆլիկտից։ • Սխալ, ագրեսիվ հաղորդակցությունը կարո՞ղ է դառնալ կոնֆլիկտի պատճառ։ • Ինչո՞ւ է Եվրախորհուրդը աշխատակիցներին արգելել օգտագործել այս բառերը։ • Ցանկալի՞ է, թե՞ ոչ, որ նրանց հետևեն շարքային մարդիկ։ Ինչո՞ւ։ **Ռեսուրս**. Դասագիրք, էջ 130 **Ակտիվություն**. Աշխատե՛ք խմբերով- Ճանապարհորդություն օդապարիկով, ամփոփում **Հարցեր**. • Խմբային առաջադրանքի ընթացքում կոնֆլիկտ առաջացե՞լ է։ • Ինչպե՞ս կարողացան բանախոսները միմյանց ու դասարանին համոզել։ • Հաղորդակցությունը ունի՞ կոնֆլիկտը կարգավորելու ուժ։	Պատրաստեք **ռեպորտաժ** (250-300 բառ), որտեղ կնկարագրեք՝ ինչպես են ապրում խաղաղության մոլորակի բնակիչները, ինչպես են հաղորդակցվում, ունե՞ն, թե՞ ոչ այլ տեսակի հակամարտություններ։ Ինչպե՞ս է աշխատում նրանց մեդիան, օգտագործում են, թե՞ ոչ սոցիալական ցանցեր։ **Աշխատության/ աշխատության շնորհանդեսի ժամանակ ընդգծված կերպով ներկայացրեք.** • Ինչպիսի՞ն է խաղաղության մոլորակի բնակիչների աշխարհայացքը, ի՞նչ ձգտումներ ունեն, սահմանափակվում է, թե՞ ոչ զարգացման ազատությունը **(Կ. պատկ. 1.):**

	Երաշխավորություն ուսուցչին. Այս ակտիվությունը մի տեսակ հիմք է ստեղծում կոնֆլիկտի համար, ինչպես է ընթանում գործընթացը (խաղաղ, թե ագրեսիվորեն), ըստ այդմ կարող եք ավելացնել բանավեճի հարցերը։ **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 131 **Քայլ 2. Ինչպե՞ս են հաշվի առնված խաղաղության մոլորակի բնակիչների կարիքներն ու պահանջները։ Կարողանո՞ւմ են, թե՞ ոչ ինքնաիրացվել (Կ. պատկ. 2.)։** **Ռեսուրս.** Դասագիրք, Հակամարտությունները բազմաբնույթ միջավայրում, էջ 132 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 132 **Ռեսուրս**. Աղյուսակ հարաբերությունների ոճի/ձևի մասին, էջ 133 **Ակտիվություն**. Աշխատանք տեքստի վրա, բանավեճ **Հարցեր**. • Ի՞նչ եք կարծում, աղյուսակում տրված որ վարքի տեր անձինք են կարողանում բավարարել իրենց կարիքներն ու պահանջները։ • Ագրեսիվ վարքի տեր մարդը ո՞ւմ հաշվին է կարողանում «ինքնաիրացվել»։ • Արդա՞ր է նման վերաբերմունքը։ • Ասերտիվ ունակությունները ձեռքբերովի՞ են, թե՞ բնածին։ • Անհրաժե՞շտ է, այս տեսակետից էլ վերահսկենք մեր վարքը։ **Ռեսուրս**. Դասագիրք, Հակամարտությունները բազմաբնույթ հասարակությունում, էջ 134 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 134 **Ակտիվություն**. Աշխատեք զույգերով, էջ 136 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 137 **Ակտիվություն.** Բանավեճ (այս ակտիվությունը չկա աշակերտի դասագրքում) **Հարցեր**. • Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկրի վրա ընդամենը 26 օր խաղաղ։ Ի՞նչ կասեք այս վիճակագրության մասին։խաղաղ։ Ի՞նչ կարող եք ասել այս վիճակագրության մասին։	• Ինչպե՞ս են հաշվի առնված խաղաղության մոլորակի բնակիչների կարիքներն ու պահանջները։ Կարողանո՞ւմ են, թե՞ ոչ ինքնաիրացվել **(Կ. պատկ. 2.)։** • Ինչպե՞ս են հաղորդակցվում խաղաղության մոլորակի բնակիչները միմյանց, տարբեր խմբերի հետ։ Նրանց հարաբերությունը ներդաշնա՞կ է, թե՞ ոչ (բերեք օրինակներ)։ Գոյություն ունի՞ և ակտի՞վ է, թե՞ ոչ հասարակությունը, և ի՞նչն է մտահոգում նրան։ (Կ. պատկ. 3. 4.)։

	• Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդկությունը քանի՞ կազմակերպություն և միջազգային դաշինք է ստեղծել: Ի՞նչ արդյունք կա: • Ի՞նչ ելք եք տեսնում: Խաղաղության կառուցումը, դրական խաղաղությունը ունե՞ն հեռանկար: Ի՞նչ է անհրաժեշտ դրա համար: • **Այս տեղեկությունները, ձեր եզրահանգումները ինչպե՞ս կկիրառեք առաջադրանքը կատարելիս:** • **Ի՞նչ եք կարծում, ձեր ռեպորտաժի հերոսները կարո՞ղ են լինել ամբողջովին հակառակ տրամադրվածության, վարքի, հաղորդակցության ունակությունների տեր անձինք: Կունենա՞ն բռնության բառապաշար և աշխարհայացք: Ինչո՞ւ:** • **Մեր մոլորակի «ոչ» օրինակները ձեզ կօգնե՞ն, թե՞ ոչ ցանկալի իրավիճակ ներկայացնելու հարցում:** • **Ինչպե՞ս կկիրառեք ձեր ռեպորտաժում դրական խաղաղության հայեցակարգը:** **Քայլ 3. Ինչպե՞ս են հաղորդակցվում խաղաղության մոլորակի բնակիչները միմյանց, տարբեր խմբերի հետ: Նրանց հարաբերությունը ներդաշնա՞կ է, թե՞ ոչ (բերեք օրինակներ): Գոյություն ունի՞ և ակտի՞վ է, թե՞ ոչ հասարակությունը, և ի՞նչն է մտահոգում նրան: (Կ.պատկ.3.4.):** **Հարցեր.** (լրացուցիչ) • Նախորդ ակտիվություններում խաղաղության երկխոսության (էջ 137-138) մասնակիցները կարո՞ղ են լինել ձեր ռեպորտաժի հերոսները: • Մտածեք, ո՞ր բնութագրիչները կթողնեք, ի՞նչը կփոխեք: **Ռեսուրս**. Դասագիրք, Թվային մեդիա. Հնարավորություններ և ռիսկեր, էջ 139 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 139 **Ակտիվություն**. Հիշե՛ք, էջ 133 **Ակտիվություն**. Քննարկումներ, էջ 142 **Երաշխավորություն ուսուցչին.** Քննարկումներում առանձնացված բանաձևերից երկու բանաձևերն էլ իրավունք ունեն գոյություն ունենալ: Սա մեդիայի երկբնույթն է:	• Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ **հավելված 10, էջ 109-110**

	Մի կողմից այն, որպես քաղաքացիական հասարակության մաս, ստանձնում է անկողմնակալ տեղեկատվության մատուցողի, իշխանությանը վերահսկողի, անօրինությունը բացահայտողի, կարիքավոր խմբերին փաստաբանություն ցուցաբերողի բեռը և զիջում է «ամբիոնը» ժողովրդին ու կառավարությանը հաղորդակցության համար և այլն, բայց մյուս կողմից՝ մեդիան ունի ծախսեր ու պետք է կիսի շուկայի կանոնները. լինի վաճառելի, գտնի գովազդ: Այստեղ ի հայտ են գալիս առք ու վաճառքի ռիսկերը, ինչը երբեմն բարեխիղճ բիզնեսից անցնում է կոռումպացված սխեմայի: Մեդիան ստեղծում է հասարակական տրամադրվածություն և սա մեծ գայթակղություն է քաղաքագետների ու բիզնեսի, մեղսագործ աշխարհի համար: Այս ակտիվությունը ամփոփելիս միացրեք առաջին և չորրորդ խմբի փաստարկները, որ ավելի ընդգծեք մեդիայի՝ որպես քաղաքացիական հասարակության մի մասի **դերը և մատնանշեք նաև այն, որ ռեպորտաժում կարող են մեդիան ակտիվ հասարակական խումբ ներկայացնել:** **Ակտիվություն.** Արե՛ք դատողություն, էջ 142 **Ակտիվություն**. Հիշե՛ք, էջ 146 **Ակտիվություն**. Աշխատե՛ք խմբերով, էջ 146 **Ակտիվություն.**Ամփոփիչ բանավեճ **Հարցեր**. • Վերջին երեք ակտիվություններում խոսքը վերաբերվում էր տրոլներին և հաքերներին, ի՞նչ կասեք այս հակադրումների մասին: • Գլոբալ աշխարհի համար հատկանշական է կռվի միջոցները փոխելը: Ինչպե՞ս կգնահատեք տրոլների գործունեությունը: Հաքերների գործունեությո՞ւնը: • Հարաբերությունների ո՞ր տեսակին է պատկանում այս հարաբերությունը: **Երաշխավորություն ուսուցչին**. Ամփոփելու համար կարող եք կիրառել ձեր մասնակցությամբ իրականացրած պրակտիկան և աշակերտներին խնդրեք վերջացնել սկսված պարբերությունները. «Առավոտյան ժամը 8-ն է, դուրս եմ գալիս: Մաքուր փողոցը լի է ծաղիկներով: Հանկարծ բացվում է պատուհաններից մեկը և. . . »: «Խաղալիքների արտադրամասում եմ: Բոլորը իրենց գործն են անում: Նույն տեղում արտադրանքի ցուցահանդես է՝ ոչ մի հրացան և ատրճանակ, բոլորն աշխատում են ջանադրաբար ու համակ ուշադրությամբ:	

	Բոլորի դեմքին ժպիտ կա։ Երաժշտության ձայնը հետզհետե ավելանում է, բոլորը կտրվում են աշխատանքից և. . . »։ «Քաղաքի կենտրոնում կլոր շինություն կա։ Գրված է «Բժշկության տուն»։ Ընդամենը երեք-չորս մարդ հանդիպեց ներսում։ Հաճելի միջավայր է, կանաչապատ, հանգիստ երաժշտությամբ։ Զրուցեցի երկու ծերերի հետ. . . » «Հրապարակում մեծ տեղեկատվական վահանակ է տեղադրված։ Կարդում եմ. «Լրագրողները բնակչությանը 2 օր միայն դրական նորություններ, 2 օր կրթական հաղորդումներ կմատուցեն։ Իսկ բնակչությունը ի պատասխան դրան. . . .» Այս ակտիվությունը անցկացվում է բանավոր և կակտիվացնի աշակերտների ստեղծագործական ունակությունները։ Չէ՞ որ տվյալ առաջադրանքը մեծ մասամբ նրանց երևակայությունից է կախված։		
Երկարաժամկետ նպատակ **Թիրախային հասկացություն և նրա հետ կապված կայուն պատկերացումներ**	**Հարց/ենթահարցեր** Գլոբալացում և հաղորդակցություն **Ենթահարց.** Տեղեկության տեսակավորում **Ենթահասկացություններ.** Մարդու պահանջներն ու կարիքները, Հասարակական խմբեր՝ մեդիա	**Հանգուցային հարց/հարցեր** Ինչպե՞ս պատկերեմ մինիդասագրքում մեդիագրագիտության և հատկապես, տեղեկության տեսակավորման համար անհրաժեշտ խորհուրդները և բացատրեմ դրանց նշանակությունը մարդու անձի զարգացման համար։	**Միջանկյալ ուսումնական նպատակ** **Համալիր առաջադրանքի պայման**
Հասարակություն (անձնավորություն, անհատ և սոցիալացում) **<u>Արդյունքներ.</u>** **բազային աստիճան.** **1, 2**	**Համալիր առաջադրանքի փուլերը** (ռեսուրսներ, ակտիվություններ). **Քայլ 1.** Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ սեփական գիտելիքս ուսումնասիրվող հարցի վերաբերյալ։ **Ռեսուրս**. Դասագիրք, էջ 125 **Ակտիվություն.** Աշխատանք համալիր առաջադրանքի տեքստի վրա (Ծանոթացեք առաջադրանքի պայմանին) **Հարցեր.** • Ի՞նչ է պահանջում առաջադրանքը ձեզանից։ • Հետաքրքի՞ր է, թե՞ ոչ այս առաջադրանքը կատարելը։		**Առաջադրանք 3.** **Համալիր առաջադրանքի պայմանը** Եվս մեկ անգամ ծանոթացեք վերջին պարագրաֆում տրված ուղերձին մեր մոլորակի ութ

1.Մարդը անձնավորություն է՝ սեփական աշխարհայացքով (գաղափարներով, արժանիքներով) և ձգտումներով, նա ունի սեփական անձի ազատ զարգացման իրավունք: 2. Մարդն ունի տարբեր (ֆիզոլոգիական, անվտանգության, սոցիալական կապեր և այլ) պահանջներ, առանց որոնց բավարարման նա չի կարող անհատապես զարգանալ: 3. Այլ մարդկանց/սոցիալական խմբերի/ինստիտուտների հետ հարաբերությունները նպաստում են մարդու անհատական զարգացմանը: 4. Ասսերտիվությունը (մարդու՝ ուրիշներին չվիրավորելով սեփական կարծիքը հստակ արտահայտելու ունակությունը) նպաստում է անհատի և սոցիումի ներդաշնակ հարաբերություններին:	• Ի՞նչ է առաջադրանքի նյութը: • Ինչպե՞ս եք պատկերացնում 250-300 բառից կազմված դասագիրքը: **Երաշխավորություն ուսուցչին.** Աշակերտներին բացատրում ենք, որ սա պետք է լինի պրակտիկ խորհուրդների տեքստ և համաձայնության եք գալիս այս խորհուրդների շնորհանդեսի շուրջ (կամ էլեկտրոնային ձևով, կամ նյութական): Շնորհանդեսի ախտորոշիչ հարցերը տե՛ս՝ **Հավելված , էջ 95:** **II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը** **Քայլ 1. Ի՞նչ ազդեցություն ունի սոցիալական մեդիան մարդու, հասարակության աշխարհայացքի, արժեքների, ձգտումների վրա և ինչո՞ւ (Կ. պատկ. 1.):** **Ռեսուրս**. Դասագիրք, Թվային մեդիա. Հնարավորություններ ու ռիսկեր, էջ 139 **Ակտիվություն**. Արե՛ք դատողություն, էջ 139 **Հարցեր**. Ինչպիսի՞ն է սոցիալական ցանցերի դերը Լիկայի մասնագիտական հաջողության մեջ: • Ի՞նչ ազդեցություն են թողել նոր տեխնոլոգիաները նրա անհատակության, կարիերայի վրա: • Ձեր կարծիքով, նրա մասնագիտությունը գլոբալ մասնագիտությո՞ւն է: Ինչո՞վ կհիմնավորեք ձեր կարծիքը: • Ո՞ր գործոններն են ապահովել Լիկայի ինքնավստահությունը: **Ակտիվություն**. Հիշեք, էջ 141 **Ակտիվություն**. Արեք դատողություն, 143 **Ակտիվություն**. Հիշեք, էջ 146 **Ակտիվություն.** Աշխատեք խմբերով, էջ 146 **Հարցեր.** • Վերջին երեք ակտիվության մեջ խոսքը վերաբերում է տրոլներին ու հաքերներին, ի՞նչ կասեք այս հակամարտության մասին:	միլիարդերորդ բնակչի համար: Հատկապես նրա 6-րդ կետին, որտեղ ծով տեղեկության հասանելիությունը հանդիսանում է թվային դարաշրջանի առավելությունը, բայց ոչինչ չի ասվում այն ռիսկերի մասին, որը առաջացնում է տեղեկատվության օվկիանոսը սպառողի համար: Օգնիր մոլորակի նոր բնակչին և պատրաստիր մեդիագրագիտության **մինի դասագիրք** (250-300 բառ), որը նրան կօգնի կողմնորոշվել տեղեկատվության օվկիանոսում: Չմոռանա՛ս հիշեցնել թվային մեդիայի հնարավորությունների ու ռիսկերի մասին և բացատրիր նրանց հանդեպ մեդիագրագիտության

	• Ինչպե՞ս կգնահատեք տրոլների, հաքերների գործունեությունը։ • **Ռեսուրս**. Դասագիրք, Հաղորդակցություն, էջ 126 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 126 **Ռեսուրս.** Դասագիրք, «Սա հետաքրքիր է», էջ 128 **Ակտիվություն.** Աշխատանք տեքստի վրա **Հարցեր**. • Հիշեք հակամարտությունների զարգացման փուլերը։ Ի՞նչ դեր ունի հաղորդակցությունը այս գործընթացում։ • Կարո՞ղ են մարդիկ ճիշտ հաղորդակցություն կիրառելով խուսափել կոնֆլիկտից։ • Սխալ, ագրեսիվ հաղորդակցությունը կարո՞ղ է դառնալ կոնֆլիկտի պատճառ։ • Ինչո՞ւ է Եվրախորհուրդը աշխատակիցներին արգելել օգտագործել այս բառերը։ • Ցանկալի՞ է, թե՞ ոչ, որ նրանց հետևի նաև մեդիան։ Ինչո՞ւ։ • Ինչպե՞ս կարող է մեդիայի միջոցով տարածված ոչ օբյեկտիվ տեղեկությունը նպաստել կոնֆլիկտին։ **Քայլ 2. Ինչպե՞ս է ստեղծում/սահմանափակում թվային մեդիան սպառողի օբյեկտիվ տեղեկատվությունը և համապատասխանաբար ճիշտ որոշում կայացնելու հնարավորությունը և. սահմանափակում անհատապես զարգացման հնարավորությունը։ (Կ. պատկ. 2.)** **Ռեսուրս.** Դասագիրք, էջ 142 **Ակտիվություն**. Քննարկումներ, էջ 142 **Երաշխավորություն ուսուցչին.** Քննարկումներում առանձնացված բանաձևերից երկու բանաձևերն էլ իրավունք ունեն գոյություն ունենալ։ Սա մեդիայի երկբնույթն է։ Մի կողմից այն, որպես քաղաքացիական հասարակության մաս, ստանձնում է անկողմնակալ տեղեկատվության մատուցողի, իշխանությանը վերահսկողի, անօրինությունը բացահայտողի, կարիքավոր խմբերին փաստաբանություն ցուցաբերողի բեռը և զիջում է «ամբիոնը» ժողովրդին ու կառավարությանը հաղորդակցության համար և այլն, բայց մյուս կողմից՝ մեդիան ունի ծախսեր ու պետք է կիսի շուկայի կանոնները. լինի վաճառելի, գտնի գովազդ։ Այստեղ ի հայտ են գալիս առք ու վաճառքի ռիսկերը, ինչը երբեմն բարեխիղճ բիզնեսից անցնում է կոռումպացված սխեմայի։ Մեդիան ստեղծում է հասարակական տրամադրվածություն և սա մեծ գայթակղություն է քաղաքագետների ու բիզնեսի, մեղսագործ աշխարհի համար։ Այս ակտիվությունը ամփոփելիս միացրեք առաջին և չորրորդ խմբի փաստարկները, որ ավելի ընդգծեք մեդիայի՝ որպես քաղաքացիական հասարակության մի մասի դերը և մատնանշեք նաև այն, որ ռեպորտաժում կարող են մեդիան ակտիվ հասարակական խումբ ներկայացնել։	ունակության կարևորության մասին։ **Աշխատության մեջ/շնորհանդեսի ընթացքում ընդգծված կերպով ներկայացրեք.** • Ի՞նչ ազդեցություն ունի սոցիալական մեդիան մարդու, հասարակության աշխարհայացքի, արժեքների, ձգտումների վրա և ինչո՞ւ (**Կ. պատկ. 1.)** • Ինչպե՞ս է ստեղծում/սահմանա-փակում թվային մեդիան սպառողի օբյեկտիվ տեղեկատվությունը և համապատասխանաբար ճիշտ որոշում կայացնելու հնարավորությունը և ստեղծում/ սահմանափակում է անհատական զարգացման հնարավորությունը։ **(Կ. պատկ. 2.):**

	Առաջադրանք 3. Հետազոտություն, էջ 149 **Քայլ 3. Ինչպիսի՞ն է սոցիալական մեդիայի՝ որպես միջազգային հասարակության, ինտիտուտների հետ համագործակցության միջոցների/ալիքի նշանակությունը և ինչպե՞ս կարող ենք հակադրվել ատելության լեզվին սոցիալական ցանցերում, այդ թվում՝ մեդիայում: (Կ. պատկ. 3. 4.)** **Ռեսուրս.** Դասագիրք, «Սա հետաքրքիր է», էջ 129 **Ակտիվություն**. Աշխատանք տեքստի վրա **Հարցեր**. • Հիշեք հակամարտությունների զարգացման փուլերը: Ի՞նչ դեր ունի հաղորդակցությունը այս գործընթացում: • Կարո՞ղ են մարդիկ ճիշտ հաղորդակցություն կիրառելով խուսափել կոնֆլիկտից: • Սխալ, ագրեսիվ հաղորդակցությունը կարո՞ղ է դառնալ կոնֆլիկտի պատճառ: • Ինչո՞ւ է Եվրախորհուրդը աշխատակիցներին արգելել օգտագործել այս բառերը: • Ցանկալի՞ է, թե՞ ոչ, որ նրանց հետևի նաև մեդիան: Ինչո՞ւ: **Ակտիվություն**. Աշխատեք խմբերով, էջ 130 «Ճանապարհորդություն օդապարիկով», ամփոփում **Հարցեր**. • Խմբային առաջադրանքի ընթացքում կոնֆլիկտ առաջացե՞լ է: • Ինչպե՞ս կարողացան բանախոսները միմյանց ու դասարանին համոզել: • Հաղորդակցությունը ունի՞ կոնֆլիկտը կարգավորելու ուժ: **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 131 **Ռեսուրս**. Դասագիրք, Հակամարտությունները բազմազան միջավայրում, էջ 132 **Ակտիվություն.** Արեք դատողություն, էջ 132 **Ռեսուրս**. Աղյուսակ հարաբերությունների տեսակի մասին, էջ 133	• Ինչպիսի՞ն է սոցիալական մեդիայի՝ որպես միջազգային հասարակության, ինտիտուտների հետ համագործակցության միջոցների/ալիքի նշանակությունը և ինչպե՞ս կարող ենք հակադրել ատելության լեզվին սոցիալական ցանցերում, այդ թվում՝ մեդիայում: **(Կ. պատկ. 3. 4.)** Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման գործիքը տե՛ս՝ **Հավելված 10**, էջ 109-110

	Ակտիվություն. Աշխատանք տեքստի վրա, բանավեճ **Հարցեր**. • Ի՞նչ եք կարծում, աղյուսակում տրված որ վարքի տեր անձինք են կարողանում բավարարել իրենց կարիքներն ու պահանջները։ • Ագրեսիվ վարքի տեր մարդը ո՞ւմ հաշվին է կարողանում «ինքնահիրացվել»։ • Արդա՞ր է նման վերաբերմունքը։ • Ասսերտիվ ունակությունները ձեռքբերովի՞ են, թե՞ բնածին։ • Անհրաժե՞շտ է, որ այս տեսակետից նույնպես վերահսկենք մեր վարքը։ **Ռեսուրս**. Դասագիրք, Հակամարտությունները բազմաբնույթ հասարակությունում, էջ 135 **Ակտիվություն**. Աշխատեք զույգերով, էջ 136 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 136 **Ակտիվություն**. Արեք դատողություն, էջ 136 **Երաշխավորություն ուսուցչին.** Վերջին ակտիվությունում մշակվող տեքստում խաղաղություն կառուցողները քննադատում են մեդիան, որ այն չի լուսաբանում խաղաղարար գործունեությունը։ Հարցրեք աշակերտներին՝ ինչպիսի՞ հաղորդումներ եք նայում։ Ձեզ հետաքրքրո՞ւմ են, թե՞ ոչ խաղաղության կառուցման վերաբերյալ հաղորդումները, ինչո՞ւ։ **Ռեսուրս.** Դասագիրք, Բարի գալուստ այս աշխարհ, էջ 150 **Ակտիվություն**. Աշխատեք խմբերով, էջ 150 **Ակտիվություն**. Ամփոփում • **Ստացած և ձեզ ծանոթ տեղեկություններից մեդիագրագիտության ո՞ր ունակությունները կառանձնացնեիք և ինչո՞ւ։**	

Հավելվածներ

Հավելված 1.

Դիագնոստիկ՝ ախտորոշիչ հարցեր

- Նկարագրիր՝ ինչպե՞ս ընթացավ առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը։
- Նկարագրիր՝ ի՞նչ նյութ ես ստեղծել։
- Ի՞նչ հարցի է վերաբերվում քո կողմից պատրաստված առաջադրանքը։
- Բացատրիր՝ ինչո՞ւ ես ստեղծել այս նյութը։ Ի՞նչ ես ուզում ասել դրա միջոցով։
- Ինչո՞ւ ես կարծում, որ քո կողմից կատարված գործողությունը կամավորական ակտիվություն է։
- Քո կարծիքով, ո՞վ պետք է հետաքրքրվի քո կողմից ստեղծված համալիր առաջադրանքով և ինչո՞ւ։
- Ի՞նչ խոչընդոտի ես բախվել առաջադրանքի վրա աշխատելիս։
- Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք երբևէ կատարե՞լ ես։

Հավելված 2. Բուկլետի նմուշ

Զեզվան ու Մզիան քաղաքացիություն ստանալու համար ճանապարհորդում են ժամանակի մեջ **2022 թվական**	**Աթենք (մ. թ. ա. VII-V դարեր)** **Քաղաքացիություն.** Սոլոնի բարեփոխումով (մ. թ. ա. 638-558 թթ.) Ատտիկայում ծնված բոլոր տղամարդիկ դառնում էին քաղաքացի: **Քաղաքացու արտոնությունները.** Ուներ ժողովրդական խորհրդին մասնակցելու իրավունք: **Քաղաքացու պարտականությունները.** Զինվորական պարտականություն: **Կանանց իրավունքները.** Կանանց, ստրուկներին և օտարներին չէր տրվում քաղաքացիություն: **Առանձնահատկություններ**. Հին Հունաստանում քաղաքացիությունը յուրօրինակ բնույթ ուներ: Ձևավորվեց բարձրագույն օրենսդիր մարմին՝ Աթենքի ժողովրդական ժողով, հիմնվեց պետական խորհուրդ, կառավարման բարձրագույն մարմին, ստեղծվեց «երդվյալ դատավորների» դատարան: **Փաստաթղթեր.** Սոլոնի բարեփոխում **Կանանց և տղամարդկանց հավասարություն**. Չնայած Դեմոսի իրավունքների ավելացմանը, Աթենքի քաղաքացի տղամարդկանց կողքին ամբողջովին առանց իրավունքների էին մնում աթենացի կանայք:	**Հռոմ (մ. թ. ա. I դար)** **Քաղաքացիություն.** Հռոմի կայսրությունում բոլոր ազատ տղամարդկանց տրվում էր քաղաքացիություն, հետագայում արդեն նախադրյալը համարվում էր 25 տարվա զինվորական ծառայությունը: **Քաղաքացու արտոնությունները.** Քաղաքական իրավունքներ, ընտրության, ամուսնության իրավունք, պայմանագիր կնքելու, տոգա կրելու իրավունք. . . **Քաղաքացու պարտականությունները.** Հարկերի վճարում, զինվորական ծառայություն: **Կանանց իրավունքները.** Ունեին քաղաքացիության սահմանափակ ձև, չունեին ձայն տալու, պետական պաշտոն ստանալու, արդար դատարանի և քաղաքացիության պահպանման իրավունք արտագաղթի ժամանակ: **Առանձնահատկությունը.** Կայսրության ժամանակաշրջանում քաղաքացիները ձևականորեն չկորցրեցին քաղաքական իրավունքները, բայց քաղաքական ուժ չէին ներկայացնում: **Փաստաթղթեր**. Քաղաքացիությունը հաստատող դիպլոմ: **Կանանց և տղամարդկանց հավասարությունը**. Տղամարդկանց հետ համեմատած կանանց իրավունքները սահմանափակ էին, չնայած նկատվում էր նվազագույն դրական փոփոխություն:	**Անգլիա (XIII դար)** **Քաղաքացիություն.** Քաղաքացիությունը ֆեոդալական ժամանակաշրջանում, այդ թվում՝ Անգլիայում արժեզրկված Հպատակությունը գլխավոր կարգավիճակն էր պետության և քաղաքացու միջև: **Քաղաքացու/ հպատակի իրավունք-պարտականությունները.** Ազատությունների մեծ խարտիան (1215 թվականին) կարգավորում էր հարկերի, դատարանի, եկեղեցու, քաղաքի ու առևտրականների, ժառանգների իրավունքների ու խնամակալության հարցերը, նաև լիմիտ ու պատասխանատվություն էր սահմանում գումարի պարտապաններին ու պարտատերերին: **Կանանց իրավունքները.** Առանձնացվել էր այրի կանանց սեփականատիրության իրավունքների հարցը և ամուսնության որոշում ընդունելու իրավունքը: **Առանձնահատկություն.** Ազատությունների մեծ խարտիայի մշակմամբ դրվեց իրավունքների պաշտպանության ուղղությամբ նոր փուլի հիմքը: **Փաստաթղթեր**. Ազատությունների մեծ խարտիա **Կանանց ու տղամարդկանց հավասարությունը.** Խարտիան պաշտպանում էր ազդեցիկ կանանց իրավունքները մահացած ամուսնու բարեկամներից նրանց ունեցվածքը ինքնակամ վերահսկելուց:

Վրաստան (2022 թվական) **Քաղաքացիություն. ի ծնե** հպատակագրությամբ, քաղաքացիության վերականգնմամբ, այլ հիմքով: **Քաղաքացու արտոնությունները.** ընտրությունների, սեփականության, կրթության, տեղաշարժի, իրավունքների պաշտպանության և այլն: **Քաղաքացու պարտականությունները.** հարկերի վճարում, զինվորական ծառայություն: **Կանանց իրավունքները.** Վրաստանի օրենսդրությամբ Վրաստանի քաղաքացիները՝ կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ: **Առանձնահատկությունը.** չնայած օրենքներում գենդերային հավասարակշռությանը, Վրաստանում դեռևս արմատավորված են խտրական կարծրատիպերը, որոնցից ազատվել դեռևս չի ստացվում: Այս կարծրատիպերի ազդեցությամբ հաճախ խախտվում են կանանց իրավունքները, կան կարծրատիպեր նաև տղամարդկանց վերաբերյալ: **Փաստաթղթեր.** Վրաստանի Սահմանադրություն, միջազգային փաստաթղթեր: **Կանանց ու տղամարդկանց հավասարությունը.** կանայք դեռևս քիչ են զբաղեցնում որոշիչ պաշտոններ:	**Մաղթում ենք ճիշտ ընտրություն:** Քաղաքացիության հարցերի հետ կապված ծառայությունից կարող եք օգտվել հետևյալ կայքի միջոցով. www.sda.gov.ge	**Փորձագետի երաշխավորությունը Զեզվային ու Մզիային.** Ձեր տվյալները բավարար չեն այն բանի համար, որպեսզի ստանաք քաղաքացիություն կամ հպատակություն առաջին երեք պատմական փուլերում/ «կանգառներում»: Պետք չէ տխրել, ոչ էլ խորհուրդ ենք տալիս իջնել այնտեղ, քանի որ ձեր ցանկությունը՝ իրավունքներն ու հավասարությունը պաշտպանված ունենալու մասին, այս «կանգառներից» բոլորից լավ հնարավոր կլինի այսօրվա Վրաստանում: Վրաստանի քաղաքացիություն ստանալու հարցերով անձը կարող է դիմել Արդարադատության տուն կամ համապատասխան տեղական ծառայություն:	Դուք կարող եք իջնել չորրորդ կանգառում և պահանջել Վրաստանի քաղաքացիություն: Այս դեպքում կբավարարվի ձեր՝ քաղաքացիություն ստանալու ցանկությունը, ինչը այլ իրավունքների հետ միասին կտա նաև առանց վիզայի՝ այցեհրավերի Եվրոպայում ճանապարհորդելու իրավունք: Ինչ վերաբերում է իրավունքների պաշտպանությանն ու հավասարության ապահովմանը, Վրաստանը ժողովրդավարական երկիր է և իրավաբանորեն սա երաշխավորվում է, բայց վրացական ժողովրդավարությունը դեռևս ունի անցնելու ճանապարհ մինչև այս իրավունքները փաստացիորեն ապահովելը: Եթե կոնկրետ կանանց ու տղամարդկանց հավասարության մասին ենք խոսում, այստեղ էլ հավասարության իրավական հիմք կա, բայց առկա կարծրատիպերը պետք է հաղթահարել բոլոր մակարդակներում: Այս գործընթացին ինչպես Վրաստանի բոլոր քաղաքացիները, դուք ևս պետք է մասնակցեք:

Հավելված 3

1. Հատված 2022 թվականի մարտի 8-ի վերաբերյալ միջազգային հանրության հայտարարությունից

«Աշխարհին հարկավոր է գենդերային հավասարություն այսօր և ամեն օր: Նոր և տեղի ունեցող հակամարտությունների, կլիմայի ճգնաժամի ու ժողովրդավարական տարածության նվազեցման ժամանակ մենք կանգնած ենք գլոբալ գենդերային հավասարության նվազեցման վտանգի առջև: Միավորված ազգերի կազմակերպության կողմից այս տարի կանանց միջազգային օրվա թեմա է ընտրվել «Գենդերային հավասարություն այսօր՝ հանուն կայուն վաղվա օրվա»: Սրանով մենք ուզում ենք ցույց տալ կանանց ու աղջիկների ներդրումը աշխարհի մասշտաբով կլիմայի փոփոխությունների ուղղությամբ հարմարվելուն ու բացասական արդյունքների մեղմացմանը, բոլորի համար կայուն ապագա կառուցելու գործում:

2. **Երիտասարդները փոփոխությունների կողմնակից են**

«Ինձ համար գենդերային հավասարությունը արդար միջավայրի հիմքն է, որպեսզի առօրյա կյանքում Վրաստանը որպես բազմամշակույթ և հանդուրժողական երկիր կարողանա նվազեցնել խտրականության ու անհավասարության դեպքերը»,- ասում է Մարիամը և կոչ անում երիտասարդներին. «լինել ակտիվ, կյանքում օգտագործել բոլոր հնարավորությունները, քանի որ այն, ինչը այսօր համարում ենք ուրիշի խնդիրը, կարող է վաղը դառնալ մերը և հետո չկարողանանք մենակ հաղթահարել»:

«Գենդերային հավասարության տեսանկյունից կան շատ կարծրատիպեր և ցավոք, նորից գործ ունենք կանանց իրավունքների սահմանափակման հետ: Կանայք հնարավորություն չունեն զարգացնել մասնագիտական ունակություններն ու հմտությունները: Ցանկալի է, որ աղջիկը ունենա դիպլոմ, բայց այս դիպլոմը միայն խորհրդանշական բնույթ է կրում: Սա նշան է, որ աղջիկը հեշտությամբ կամուսնանա»,- ասում է Լիամանը և ավելացնում, որ տղամարդկանց գենդերային դերի մասին տարածված կարծիքների համաձայն, ընդունված չէ, որ նրանք լացեն կամ այլ ֆիզիկական կամ էմոցիոնալ թուլություն հանրայնորեն արտահայտեն:

«Տարածված կարծրատիպերի մասին խոսելիս, 20-ամյա Այնուրը օրինակ է բերում իր գյուղում տարածված միտումը, ըստ որի աղջիկները իրավունք չունեն կեսօրից հետո, երեկոյան ժամերին մենակ դուրս գալ: Իսկ տղաները ոչ միայն կարող են դուրս գալ, այլև իրավուք ունեն նույնիսկ տուն չվերադառնալ,. մնալ ուրիշի մոտ, ինչի իրավունքը աղջիկներին չեն տալիս»:

Գվանցան ուշադրություն է դարձնում երեխաների դաստիարակության գործընթացում հայրերի պակաս մասնակցությանը: Նրա կարծիքով հաճախ, երբ խոսում ենք գենդերային հավասարության մասին, հանդիպում ենք դեպքերի, երբ գենդերային հավասարությունը սխալ, ոչ համարժեք է հասկացվում: Լավ կլինի, եթե սա սկսենք վաղ տարիքից, քանի որ անհավասարությունը հենց վաղ հասակից է սկսվում:

Աղբյուրը՝ ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (UNFPA) տեղեկությունների

https://georgia.unfpa.org/ka/news/

Հավելված 4

Ինչպե՞ս գրենք հոդված։

1. Հոդվածի համար շատ կարևոր է լավ վերնագիրը։ Այն պետք է արտահայտի ամբողջ տեքստի բովանդակությունն ու միևնույն ժամանակ գրավի ընթերցողի ուշադրությունը։

2. Կազմե՛ք հոդվածի պլանը։ Այն պետք է պարունակի նախաբան (ինչի մասին է հոդվածը), հիմնական մաս (բովանդակություն, դատողություն) և վերջաբան (ամփոփում)։

3. Փորձե՛ք լինել կոնկրետ, գրեք կարճ ու հասկանալի նախադասություններով։ Լավ հոդված գրելու համար պետք է սահմանափակվեք 200-300 բառով։ Հակառակ դեպքում ընթերցողները կծուլանան աչքի անցկացնել մինչև վերջ կամ ուղղակի կհրաժարվեն կարդալ այն։ Բայց եթե հոդվածի թեման պահանջում է ավելին ասել, ավելի լավ է ավելացնեք, քան հետաքրքիր մասը կրճատելու հաշվին նվազեցնեք տեքստը։

4. Կարող եք հոդվածին կցել դիդակտիկ նյութ՝ լուսանկար, նկար, սխեմա, դիագրամ։

5. Լավ հոդվածի տեքստը պետք է լինի հեշտ ըմբռնելի, քերականորեն ճիշտ ու հաճելի ընթերցելի։ Դրա համար անհրաժեշտ է գրելն ավարտելուց հետո քննադատաբար աչքի անցկացնել ձեր աշխատությունը և ուղղել սխալները։

6. Մինչև կսկսեք գրել հոդվածը, անհրաժեշտ է ընտրված թեմայի վերաբերյալ հավաքել տարբեր տվյալներ։ Օրինակ՝ ծանոթացեք տարբեր աղբյուրների, փորձագետների կարծիքներին և նշեք ձեզ համար կարևոր արտահայտությունները, տվյալները, վիճակագրությունը։ Փնտրեք դիդակտիկ նյութ։ Դիտարկեք ձեր միջավայրում տեղի ունեցող գործընթացները ընտրված թեմայի վերաբերյալ։

Երբ ձեռքում կունենաք ամեն ինչ, մտածեք՝ ինչ եք ուզում ասել, հասկացնել ընթերցողին և դասավորեք ձեր ասելիքը՝ ըստ վերևում տրված կառուցվածքի։

Հավելված 5

Զարգացնող գնահատման գործիք

Հարց. Մարդու և քաղաքացու իրավունքներ: Ենթահարց.

Համալիր առաջադրանք 1, առաջադրանք 2
Աշակերտի անուն, ազգանուն ----------

Չափանիշ. Թիրախային հասկացություն → ↓	**Ժողովրդավարություն**
Ընդլայնված մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատելու գործընթացում ձեռք բերված գիտելիքը և փորձը կապել Ազգային ուսումնական պլանի գերառարկայական (մակրո) հասկացությունների հետ:	**Աշակերտը կարող է**. ստացված գիտելիքի հիման վրա ձևակերպել սեփական նարատիվը, որտեղ պատկերված է հարցի վերաբերյալ փաստացի նյութը՝ հաշվի առնելով սեփական նպատակներն ու լսարանը (նրա բազմազանությունը), հայտնաբերել օրինաչափություն և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, կապել ուսումնական նյութը այլ գիտական գիտելիքի հետ, ընտրել ռազմավարություններ հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը իրականացնելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն է թողել հարցի ուսումնասիրությունը նրա քաղաքացիական աշխարհայացքի վրա, սեփական կամ հասարակության կարիքների համար կիրառելով ստացած գիտելիքը՝ գտնել ասպեկտներ՝ տեսակետներ : Ստացած տեղեկության հիման վրա **բուկլետում/սլայդ շոուի մեջ/հոդվածում** ձևակերպել սեփական նարատիվը, որը համապատասխանեցված է լսարանին, արտահայտում է այն օրինաչափ գործընթացը, որը **կապված է գենդերային հավասարության հարցին, ասելիքը հաստատելու համար կիրառում է օրինակներ ու փաստարկներ, արտահայտում է հիպոթեզներ, դատում կոնկրետորեն: Գնահատում է ուսումնասիրվող հարցի, ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված մարդու իրավունքների, մասնավորապես՝գենդերային հավասարության պաշտպանության լծակների ու հնարավորությունների ակտիվացման նշանակությունը ինչպես իր, այնպես էլ տեղական ու միջազգային հասարակության համար: Ստացած գիտելիքն ու ունակությունները կապում է սեփական քաղաքացիական տեսակետի ամրապնդմանը:**
Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է քննադատաբար ու համակցված ընկալել և վերլուծել թիրախային հասկացությունների հետ կապված փաստերն ու իրադարձությունները, • համակցված վերլուծել թիրախային հասկացության կայուն պատկերացումները:	**Աշակերտը կարողացավ**. քննադատաբար ու համակցված ըմբռնել-վերլուծել թիրախային հասկացության հետ կապված գենդերային փաստերն ու իրադարձությունները, միմյանց կապել թիրախային հասկացության կայուն պատկերացումները, կապել ստացած տեղեկությունը այլ թիրախային հասկացություններին: **Բուկլետում/սյալդ շոուի մեջ/հոդվածում** վերլուծված են ժողովրդավարության թիրախային հասկացության հետ կապված գենդերային հավասարության/խտրականության փաստերն ու իրադարձությունները: **Պարզ ու հերթականությամբ բացատրված են նպատակ-արդյունքի կապերը մարդու, քաղաքացու իրավունքների (գենդերային հավասարության) և ժողովրդավարության սկզբունքների միջև:**

• Համատեքստայնացնել (առարկայի այլ թիրախային հասկացությունների հետ կապել) որոշակի թիրախային հասկացության հետ կապված տեղեկությունը:	**Կիրառելով կոնկրետ իրավիճակ՝ բացատրում է ժողովրդավարության սկզբունքների կարևորությունը մարդու, քաղաքացու իրավունքների իրացման, ամեն տեսակի, այդ թվում՝ գենդերային խտրականության վերացման համար, հիշեցնում է տեղական և միջազգային իրավական նորմերը, նրանց ակտիվացման լծակները: Բացատրված է՝ ինչ նշանակություն ունի այս նորմերի պահպանումը մարդու զարգացման, քաղաքացիական մասնակցության ակտիվացման և կայուն զարգացման տեսակետից:**
Բազմակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի քանի, միմյանց չկապակցված, չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:	Աշակերտը ունի մի քանի ասոցիացիա ուսումնասիրվող հարցի վերաբերյալ, չնայած նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն համակարգված, համակցված տեսք: Աշակերտի աշխատանքում բերված է մի քանի կարևոր ասպեկտ **(հիշատակում է ժողովրդավարությունը, կանանց իրավունքները, փոփոխությունների հնարավորությունները, բայց հերթականություն չկա, չի կարողանում բացատրել, ինչու է գենդերային հավասարությունը կարևոր ստուգիչ՝ինդիկատոր համայնքում, երկրում, աշխարհում ժողովրդավարության որակը սահմանելու համար):**
Միակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի չկապակցված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:	Աշակերտի դատողությունը ուսումնասիրվող հարցի վերաբերյալ սահմանափակվում է հանգուցային բառերին/վերնագրին պարզ ու տրամաբանական անդրադարձ կատարելով: Առաջադրանքում ճիշտ է անվանում մեկ ասպեկտ **(օրինակ՝ կանանց ու աղջիկների իրավունքները),** բայց դատողությունը հատվածային է ու համակարգված չէ:
Չկապակցված մակարդակ Աշակերտը ունի չկապակցված տեղեկություն հարցի մասին:	Աշակերտը ճիշտ չի հասկանում հարցի վերաբերյալ հարցերը/համալիր առաջադրանքի պայմանը: Աշակերտը չունի պատասխան կամ նրա պատասխանը ընդհանրապես շեղվում է պահանջից/առաջադրանքի չափանիշներից: Աշխատանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանը չի ըմբռնել համարժեք կերպով:

Հավելված 6

Զարգացնող գնահատման գործիք

Հարց. Գլոբալացում: Ենթահասկացություն.

Համալիր առաջադրանք 1, առաջադրանք 2

Աշակերտի անուն , ազգանուն----------

Չափանիշ Թիրախային հասկացություն → ↓	**Քաղաքացիական մասնակցություն**
Ընդլայնված մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատելու գործընթացում ձեռք բերված գիտելիքը և փորձը կապել Ազգային ուսումնական պլանի **գերառարկայական (մակրո) հասկացությունների հետ:**	**Աշակերտը կարողացել է.** ստացված գիտելիքի հիման վրա ձևակերպել սեփական նարատիվը, որտեղ պատկերված է հարցի վերաբերյալ փաստացի նյութը՝ հաշվի առնելով սեփական նպատակներն ու լսարանը (նրա բազմազանությունը), հայտնաբերել օրինաչափություն և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, կապել ուսումնական նյութը այլ գիտական գիտելիքի հետ, ընտրել ռազմավարություններ հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը իրականացնելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն է թողել հարցի ուսումնասիրությունը նրա քաղաքացիական աշխարհայացքի վրա, սեփական կամ հասարակության կարիքների համար կիրառելով ստացած գիտելիքը գտնել ասպեկտներ՝ տեսակետներ : **Ձևակերպել է միջազգային կազմակերպության առաքելությունը/կամավորի օրագիրը, որտեղ քաղաքացիական մասնակցությունը, գլոբալ քաղաքացիների որոշումները և գործողությունները պատկերված են ընկալված ու համակցված: Աշակերտը հույս է արտահայտում, ենթադրում է, որ գլոբալ քաղաքացիության համար կրթությունը բարձրացնում է մարդկության գիտակցությունը, մարդիկ կդառնան համերաշխ, հոգ կտանեն գլոբալ խնդիրների մասին:**
Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է. • քննադատաբար ու համակցված ընկալել և վերլուծել թիրախային հասկացությունների հետ կապված փաստերն ու իրադարձությունները, • համակցված վերլուծել թիրախային հասկացության կայուն պատկերացումները: Համատեքստայնացնել (առարկայի այլ թիրախային հասկացությունների հետ կապել) որոշակի թիրախային հասկացության հետ կապված տեղեկությունը:	**Աշակերտը կարողացավ.** քննադատաբար ու համակցված ըմբռնել-վերլուծել թիրախային հասկացության հետ կապված գենդերային փաստերն ու իրադարձությունները, միմյանց կապել թիրախային հասկացության կայուն պատկերացումները, կապել ստացած տեղեկությունը այլ թիրախային հասկացություններին: **Աշակերտը կազմակերպության առաքելության/օրագրի մեջ փոխկապակցված ներկայացնում է խնդրի ու քաղաքացիական ակտիվության ձևը, ռազմավարությունները, իրականացման ճանապարհները,** համակարգված կապում է քաղաքացիական մասնակցությունը թիրախային հասկացության կայուն պատկերացումներին **(բացատրում է քաղաքացիական մասնակցության կոնկրետ ձևերի առավելությունը, առանձնացնում է ժողովրդավարական արժեքները՝ որպես կազմակերպության հիմնադրման հիմք: Ըմբռնում է այլ ինստիտուտների համագործակցության, կամավորության և շահարկման նշանակությունը: Տեսնում է սոցիալական ցանցերի դերը գլոբալ գործունեության մեջ):** Նաև քաղաքացիական մասնակցությունը կապում է **ժողովրդավարության, կայուն զարգացման և սոցիալիզացման հասկացության բնութագրիչներին:**

Բազմակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի քանի, միմյանց չկապակցված, չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ։	Աշակերտը ունի մի քանի ասոցիացիա ուսումնասիրվող հարցի վերաբերյալ, չնայած նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն համակարգված, համակցված տեսք։ Աշակերտը թվարկում է մի քանի ասպեկտ, **կարողանում է դրանք ճիշտ նույնականացնել (առանձնացնում է գլոբալ խնդիրները, խոսում է գլոբալ կրթության, ընդհանուր չափորոշիչների մասին,** բայց չի կարողանում աշխատանքը ներկայացնել համակարգված ու պարունակությունը ամբողջացնել)։
Միակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի քանի չկապակցված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ։	Աշակերտի դատողությունը ուսումնասիրվող հարցի վերաբերյալ սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի պարզ ու տրամաբանական անդրադարձով։ Աշակերտի աշխատանքը շատ կարճ է, **հիշատակում** է գլոբալ խնդիրները, կամավորությունը, փորձում է բացատրել իմաստը մակերեսորեն ու հատվածային, չի կարողանում կապեր հաստատել։
Չկապակցված մակարդակ Աշակերտը ունի չկապակցված տեղեկություն հարցի մասին։	Աշակերտը ճիշտ չի հասկանում հարցի վերաբերյալ հարցերը/համալիր առաջադրանքի պայմանը։ Աշակերտը չունի պատասխան կամ նրա պատասխանը ընդհանրապես շեղվում է պահանջից/առաջադրանքի չափանիշներից։ Աշխատանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանը չի ըմբռնել համարժեք կերպով։

Հավելված 7

Կազմակերպության առաքելություն

Առաքելությունը կազմակերպության հայտարարությունն է այն մասին, թե ինչպես, ինչ մոտեցումներով է պատրաստվում կազմակերպությունը հասնել ցանկալի ապագայի նկարին/տեսլականին: Սա է հիմնական նպատակը, ինչի համար էլ ստեղծվել է կազմակերպությունը:

Առաքելությունը պատասխանում է հարցին, թե ո՞վ ենք մենք: Ինչո՞ւ է գործում մեր կազմակերպությունը: Ովքե՞ր են մեր բենեֆիցիարները/սպառողները և նրանց որ կարիքներն ենք փորձում բավարարել մեր գործունեությամբ:

Հաճախ առաքելությունը պարունակում է տեղեկություն այն հիմնական արժեքների մասին, որով առաջնորդվում է կազմակերպությունը: Չնայած հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ կազմակերպության արժեքները առաքելությունից առանձին, որպես անկախ բաղադրիչ են ներկայացված: Առաքելության առկայությունը ևս կարևոր է ցանկալի ուղղությամբ կազմակերպության ուժերը մոբիլիզացնելու համար: Լավ ձևակերպված առաքելությունը պետք է լինի կարճ, հասկանալի, մոտիվացնող, կազմակերպության արժեքները պատկերող և ամենակարևորը՝ կողմնորոշված հասարակական բարիք ստեղծելուն:

Կազմակերպության գործունեության պլանավորումը պետք է սկսվի նրա առաքելության, տեսլականի ու արժեքների սահմանումով, քանի որ դրանք ցույց են տալիս, թե ինչու, ինչ նպատակով է ստեղծվել կազմակերպությունը, ինչպես է այն տեսնում սեփական հաջողությունը երկարաժամկետ հեռանկարում և ինչ մոտեցմամբ է պատրաստվում այս արդյունքին հասնել:

Հավելված 8

Քաղվածքներ «Ռուս-ուկրաինական պատերազմի թեման դպրոցում» հոդվածից

Հեղինակ՝ Թեոնա Բեքիշվիլի https://bit.ly/3wXEZgK

Չկա ավելի չար բան, քան պատերազմը, և բոլորը, ով ինչ-որ կերպով արդարացնում է պատերազմը, կանգնած է չարության կողմում։

Երբ եղբայրական երկրում պատերազմ է, երբ սպանում են երեխաներին ու կանանց, երբ միլիոնավոր մարդիկ կորցրել են բարեկամներին, տունը, ունեցվածքը, այստեղ՝ Վրաստանում, գրել ու խոսել այն մասին, թե ինչպես ենք զգում, սպասում յուրաքանչյուր նորության, նույնիսկ անհարմար է։

Չնայած, մեզ հետ միասին այդ ամենը վերապրում են մեր երեխաները, մեր դեռահասները, մեր աշակերտները։ Ուսուցիչներիցս շատերը ստիպված ենք խոսել այս հարցի մասին։ Կարևոր է, որ պատերազմի մասին բանավեճերը ճիշտ անցկացվեն։

Մի կողմից, մեր աշակերտները ավելի են զգում հայրենիքը սիրելու և պաշտպանելու ապագա պատասխանատվությունը, եթե անհրաժեշտ լինի՝ պայքարել հրեշի դեմ, պայքարել հսկայի դեմ, որովհետև հավատն ու արդարությունը իրենց կողմն է, իսկ չարությունը վերջ ի վերջո կպարտվի։

Մյուս կողմից, սարսափելիորեն խտանում է թշնամու պատկերը։ Վերջին օրերը ցույց են տալիս, որ Վաժա-Փշավելային՝ վրացիների արիության և մարդկայնության առաջին ուսուցչին, բնակչության մեծ մասը սխալ է հասկանում։ Ինքնըստինքյան պարզ է, որ աշակերտները պետք է դատողություն անեն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին են՝ հյուրընկալությունը, թշնամուն համապատասխան դիմավորելը, մարդու, անհատի դերն ու կարևորությունը։

Դեռահասները հատկապես պետք է զգույշ լինեն, չդիմեն ագրեսիայի ռուս ազգության ներկայացուցիչների հանդեպ, որոնց բազմաքանակությունը շատ աչքի ընկնող է։ Պարզ է, որ լինելով Ռուսաստանի քաղաքացի, չի նշանակում, որ դու ինչ-որ մեկից պակաս մարդ ես։ Հիմա էլ Մոսկվայի հրապարակից տարածվում են կադրեր, թե ինչպես են ձերբակալում միջին տարիքի տղամարդուն, ով ինքնամոռաց, ձայնը կտրվելով երգում է Ուկրաինայի հիմնը։ Այս տղամարդը իսկական մարդ է, նա այնպիսի հերոս է, ինչպես ուկրաինացիները։

Նրան սպասում է բանտ, բայց երգում է։ Նաև բոլորս տեսանք ռուս տատիկի ձերբակալության տեսարանը, ով կանգնած էր երկու ցուցանակը ձեռքին, չնայած գիտենք նաև, որ Ռուսաստանի քաղաքացիների մեծ մասը ագրեսիայի կողմնակից են։

Պարզ է, ով ինչպիսի քաղաքացի ու մարդ է, այսօր մենք դա չենք քննարկի։ Սա քննարկելու պատասխանատվություն, լավ կլինի, իր վրա վերցնի մեր կառավարությունը։

Մեր դպրոցներում տասնմեկերորդ դասարանում սովորում են «Բախտրիոնին»։ Վաժայի համար առաջնային հերոսը՝ Լուխումը, սպանում է թշնամուն, բայց երբեք չի կոշտանում նրա հոգին, միշտ արցունքներ են հոսում նրա աչքերից ամեն մի սպանվածի պատճառով։

Խղճացիր, կարծեմ, դու անհավատին,

Սիրտդ ճմլվեց, լաց եղար նույնիսկ,

Եվ եթե կանայք մեր այդ տեսնեին,

Մեզ հետ ավելի կվարվեին խիստ,-ասում է նրան եղբայրացած Զեզվա Գափրինդաուլին։ Զեզվան հերոս է, մեծ հերոս, բայց այլ է նրա փիլիսոփայությունը.

Եվ ինչո՞ւ պետք է ես խղճամ նրանց,

Ովքեր որ երբեք չեն խղճացել ինձ։

Թշնամու համար մահը, անկասկած,

Ինքն է ստեղծել՝ աստվածը վերից։

Թարգմ.՝ Վ. Գրիգորյանի

Պարզ է, որ մեզ մոտ եկած ռուս քաղաքացիները այս երկրում պետք է զգան որոշակի անհարմարություն իրենց պետության պատճառով։ Կարծում եմ՝ սա անել հնարավոր է առանց բռնության ու անհարգալից վերաբերմունքի։ Օրինակ՝ բոլորս ունենանք ինչ –որ ատրիբուտ, որը նրանց կհիշեցնի մեզանից խլած 20 տոկոսը կամ Ուկրաինայի պատերազմը։ Բայց նմանատիպ արտահայտության ժամանակ նաև չպետք է մոռանանք Լուխումի արցունքները, քաղցրության մեջ չպետք է ընկնենք, պետք է ցավենք, որ ուրիշին ենք ամաչեցնում, հիշեցնում ենք, որ օկուպանտ՝բռնապետական երկրի զավակ է, որ այդ ուրիշը կարող է մեզանից ոչ պակաս մարդ լինել.

«Մենք կասենք՝ մարդը մենք ենք միայն, միայն մեզ են մայրեր մեծացրել»։

Մեր ինքնարտահայտումը պետք է լինի ազգային արժեքների պահպանումը և ոչ ուրիշի հանդեպ ատելությունը։

Կարծում եմ՝ այս թեմաներով բանավեճերը այսօր՝ ավելի, քան երբևէ ակտուալ են դպրոցում։ Ուսուցիչը պետք է կարողանա ազգային արժեքները այնպես զարգացնել, որ թշնամու ատելությունը սպագա սերունդների մոտ չվերացնի մարդու մեջ մարդ տեսնելու հնարավորությունը։

Հավելված 9

Զարգացնող գնահատման գործիք

Հարց. Կայուն զարգացում: Ենթահարց.Կայուն զարգացման հայեցակարգի բաղադրիչները (բաղադրիչներից մեկը) **Համալիր առաջադրանք. Առաջադրանք 1** **Աշակերտի անուն, ազգանուն ----------**

Չափանիշ. թիրախային հասկացություն → ↓	**Կայուն զարգացում**
Ընդլայնված մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատելու գործընթացում ձեռք բերված գիտելիքը և փորձը կապել Ազգային ուսումնական պլանի **գերառարկայական (մակրո) հասկացությունների** հետ:	**Աշակերտը կարողացել է**. ստացած գիտելիքի հիման վրա ձևակերպել սեփական նարատիվը, որտեղ պատկերված է հարցի վերաբերյալ փաստացի նյութը՝ հաշվի առնելով սեփական նպատակներն ու լսարանը (նրա բազմազանությունը), հայտնաբերել օրինաչափություն և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, կապել ուսումնական նյութը այլ գիտական գիտելիքի հետ, ընտրել ռազմավարություններ հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը իրականացնելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն է թողել հարցի ուսումնասիրությունը նրա քաղաքացիական աշխարհայացքի վրա, սեփական կամ հասարակության կարիքների համար կիրառելով ստացած գիտելիքը՝ գտնել ասպեկտներ՝ տեսակետներ : **Կայուն զարգացման բաղադրիչների մասին** ստացած տեղեկության հիման վրա ընտրել է մի բաղադրիչ, ստեղծել **նարատիվ, որը ներկայացրեց** առաջադրանքի նյութի տեսքով, հաշվի առնելով լսարանը: **Օրինակների հիման վրա** հստակեցրեց օրինաչափությունները **(կայուն զարգացման տարբեր բաղադրիչների փոխազդեցությունը), շնորհանդեսի ժամանակ վերլուծեց, թե ինչ փոխեց այս հարցերի ուսումնասիրությունը նրա քաղաքացիական տրամադրվածության մեջ:**

Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է. • քննադատաբար ու համակցված ընկալել և վերլուծել թիրախային հասկացությունների հետ կապված փաստերն ու իրադարձությունները, • համակցված վերլուծել թիրախային հասկացության կայուն պատկերացումները:	**Աշակերտը կարողացավ**. թիրախային հասկացության հետ կապված փաստերն ու իրադարձությունները քննադատաբար ու համակցված ըմբռնել-վերլուծել, միմյանց կապել ստացած տեղեկությունը այլ թիրախային հասկացությունների: **Աշխատության մեջ պատկերում է կայուն զարգացման հայեցակարգի որոշակի բաղադրիչի պատճառահետևանքային կապը այլ բաղադրիչների հետ, նրանում հիմնավորված է, որ ռեսուրսների ապագա հեռանկարը, հաշվի առնելով կիրառումը, որը կապված է հասարակության, այդ թվում՝ միջազգային հանրության հետաքրքրություններին, յուրաքանչյուր ահնատի տեղային գործունեություններից հասանելի են դառնում գլոբալ արդյունքները, թե՛ դրական, թե՛ բացասական: Սրա հետ մեկտեղ սա կապված է տեղական ու միջազգային իրավական նորմերին, մարդու քաղաքացիական պատասխանատվությանն ու անհատական աճին:**
Բազմակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի քանի, միմյանց չկապակցված, չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:	Աշակերտը ունի մի քանի ասոցիացիա ուսումնասիրվող հարցի վերաբերյալ, չնայած նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն համակարգված, հաջորդական տեսք: Աշակերտի պատասխանում առաջ է քաշված մի քանի կարևոր ասպեկտ **(օրինակ. հիշատակում է կայուն զարգացման հայեցակարգը, միջավայրի պաշտպանությունը, բայց նրանց միջև կապերը չի կարողանում հստակեցնել...,** անվանում է երկու-երեք նպատակ, բայց դրանք դիտարկում է առանձնացված, չեն երևում նրանց միջև կապերը/առնչությունները, ընկալումը մակերեսային է: Հնարավոր է մեկ կամ բոլոր ասպեկտները ըմբռնել է, բայց դրանք ամբողջացնել, առնչությունները պատկերացնել չի կարողանում:
Միակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի չկապակցված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:	Աշակերտի դատողությունը ուսումնասիրվող հարցի վերաբերյալ սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի պարզ ու տրամաբանական անդրադարձով: Աշակերտի պատասխանը շատ կարճ է և պարունակում է մի կարևոր ասպեկտ **(օրինակ. անվանում է կայուն պատկերացման որևէ նպատակ)**, ունի մակերեսային ընկալում, չնայած կարող է իրականացնել հասարակ գործընթացներ:
Չկապակցված մակարդակ Աշակերտը ունի չկապակցված տեղեկություն հարցի մասին:	Աշակերտը ճիշտ չի հասկանում հարցի վերաբերյալ հարցերը/համալիր առաջադրանքի պայմանը: Աշակերտը չունի պատասխան կամ նրա պատասխանը ընդհանրապես շեղվում է պահանջից/առաջադրանքի չափանիշներից: Աշխատանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանը չի ըմբռնել համարժեք կերպով:

Հավելված 10

Զարգացնող գնահատման գործիք

Հարց **ենթահասկացություն.**

Համալիր առաջադրանքի պայման – առաջադրանք 1, առաջադրանք 2, առաջադրանք 3:

Աշակերտի անուն , ազգանուն----------

Չափանիշ ↓ **Թիրախային հասկացություն** →	**Հասարակություն**
Ընդլայնված մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատելու գործընթացում ձեռք բերված գիտելիքը և փորձը կապել Ազգային ուսումնական պլանի գերառարկայական (մակրո) հասկացությունների հետ:	**Աշակերտը կարողացել է.** ստացված գիտելիքի հիման վրա ձևակերպել սեփական նարատիվը, որտեղ պատկերված է հարցի վերաբերյալ փաստացի նյութը՝ հաշվի առնելով սեփական նպատակներն ու լսարանը (նրա բազմազանությունը), հայտնաբերել օրինաչափություն և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, կապել ուսումնական նյութը այլ գիտական գիտելիքի հետ, ընտրել ռազմավարություններ հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը իրականացնելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն է թողել հարցի ուսումնասիրությունը նրա քաղաքացիական աշխարհայացքի վրա, սեփական կամ հասարակության կարիքների համար կիրառելով ստացած գիտելիքը՝ գտնել ասպեկտներ՝ տեսակետներ : **Նյութի մեջ (հրավիրատոմս/ռեպորտաժ/մինիդասագիրք) ձևակերպել է իր նարատիվը, փաստացի նյութը ճշգրիտ, համապատասխանեցնելով լսարանին, դիտարկելով հայտնաբերել է, որ մարդու անհատական զարգացման համար անհրաժեշտ է աջակցող միջավայր, հարաբերություններ հասարակության, ինստիտուցիայի հետ: Հույս է արտահայտել, որ այս ձեռքբերումները կարտահայտվեն իր քաղաքացիական կարծիքների վրա, քանի որ հասարակության հետ ներդաշնակ հարաբերություններում լինելը նրա նպատակն է:**

Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է. • քննադատաբար ու համակցված ընկալել և վերլուծել թիրախային հասկացությունների հետ կապված փաստերն ու իրադարձությունները, համակցված վերլուծել թիրախային հասկացության կայուն պատկերացումները: Համատեքստայնացում - (առարկան այլ թիրախային հասկացությունների հետ կապել) որոշակի թիրախային հասկացության հետ կապված տեղեկության համատեքստայնացում:	**Աշակերտը կարողացավ**. քննադատաբար ու համակցված ըմբռնել-վերլուծել թիրախային հասկացության հետ կապված փաստերն ու իրադարձությունները, միմյանց կապել թիրախային հասկացության կայուն պատկերացումները, կապել ստացած տեղեկությունը այլ թիրախային հասկացությունների: **Աշխատանքի մեջ հերթականությամբ ներկայացված է կապը մարդու կարիքներից մեկի՝ պատկանելության զգացումի և անհատապես զարգացման միջև: Քննադատաբար ընկալված է սոցիալ-էմոցիոնալ ունակությունների պակասի գործոնը: Ցույց է տրված գլոբալ քաղաքացիության պատասխանատվության շրջանակը, կապը մարդու կարիքների բավարարման ու ներդաշնակ հարաբերությունների ձևավորման միջև, սոցիալական կապերի ազդեցությունը մարդու անհատական զարգացմանը:** **Քննարկված է միջավայրի և մեդիայի ազդեցությունը մարդու անհատական զարգացման վրա:** **Առանձնացված է կապը պատկանելության զգացումի ու պատասխանատվությամբ կիսվելու, կայուն զարգացման ասպեկտների միջև:**
Բազմակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի քանի, միմյանց չկապակցված, չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:	Աշակերտն ունի մի քանի ասոցիացիա: Հասարակության մասին խոսելիս հիշատակում է պատկանելության զգացումը, բայց չի տեսնում կապը ենթահարցի ու հասկացության/կայուն պատկերացման միջև: Աշակերտի աշխատանքի մեջ անվանված է, մի քանի կարևոր ասպեկտ, բայց չի կարողանում այս ասպեկտները միավորել համակարգում:
Միակապ մակարդակ Աշակերտը ունի միայն մի չկապակցված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի վերաբերյալ:	Աշակերտի դատողությունը ուսումնասիրվող հարցի վերաբերյալ սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի պարզ ու տրամաբանական անդրադարձով: Առաջադրանքում ճիշտ է անվանում մի կարևոր ասպեկտ **(օրինակ. կամավորություն)**, բայց սա ցանկալի արդյունքից կտրված է մնում, չի զարգանում:
Չկապակցված մակարդակ Աշակերտը ունի չկապակցված տեղեկություն հարցի մասին:	Աշակերտը ճիշտ չի հասկանում հարցի վերաբերյալ հարցերը/համալիր առաջադրանքի պայմանը: Աշակերտը չունի պատասխան կամ նրա պատասխանը ընդհանրապես շեղվում է պահանջից/առաջադրանքի չափանիշներից: Աշխատանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանը չի ըմբռնել համարժեք կերպով:

Հավելված 11

Ինչպե՞ս պատրաստենք հրավիրատոմս։

Հրավիրատոմսը կիրառվում է բիզնես-գործընկերոջը շնորհանդեսի, խորհրդաժողովի, ընթրիքի կամ այլ միջոցառման հրավիրելու համար։ Հրավերը պետք է լինի քաղաքավարի, բոլոր ձևականությունները պաշտպանված, անընդունելի է կիրառել ժարգոնային ձևեր։

Նամակի կառուցվածքը

Հրավիրատոմսը չպետք է լինի ընդարձակ, նրանում պետք է ներկայացնենք ամենակարևոր տեղեկությունն ու հարգալից ձևերը («Ուրախ ենք ձեզ հրավիրել հանդիպման»)։

Գործարար մարդիկ խնայում են ժամանակը, դրա համար ուշադրություն դարձրեք այս փաստին։

Ողջույնը անհրաժեշտ է, պետք է լինի հարգալից հրավերք միջոցառման անվանմամբ, նշելով ժամանակն ու տեղը։

Մեր դեպքում հաջորդ պարբերությունը պետք է նվիրվի հրավերքի նպատակին ու հասցեատիրոջից ձեր սպասելիքներին (ինչու հույս ունեք, որ կլինի ձեր բարեգործության աջակիցը։ Ինչու եք մտածում, որ, ասենք, աղքատ երեխաների բախտը անհանգստացնում է նրան)։

Նշում եք բազմաբնույթ մենյուի ու համերգային ծրագրի մասին։

Վերջում հույս ենք հայտնում, որ բոլորս միասին կկարողանանք այս հաճելի միջոցառմանը թեթևացնել փոքրիկների ներկայությունը։

Կարող եք նախօրոք շնորհակալություն հայտնել գլոբալ քաղաքացու պատասխանատվության փորձով կիսվելու համար։

Հրաժեշտ կտաք։

Չմոռանաք նշել ձեր ով լինելը, կազմակերպության անվանումը և կոնտակտային տվյալները։

Հավելված 12

Հրավիրատոմսի նմուշ

Թանկագի՛ն Մայկլ, Դավիթ, Հելլեն, Էմմա,

Ողջունում ենք և ուրախ ենք ձեզ հրավիրել միջազգային բարեգործական միջոցառմանը, որը տեղի կունենա 2022 թվականի ապրիլի 20-ին, Նյու-Յորքի . . . . հյուրանոցի ռեստորանում ժամը 18-21-ը։

Մեր միջոցառումը կհյուրընկալի հարգարժան հասարակությանը աշխարհի 15 երկրներից։ Բազմաթիվ այլ արժանիքների հետ միասին այս մարդկանց միավորում է գլոբալ քաղաքացիության զգացումն ու պատասխանատվությամբ վերաբերմունքն այն խնդիրների հանդեպ, որոնց պատճառով աշխարհի շատ երկրներում մարդիկ տանջվում են աղքատությունից։ Առանձնահատուկ հոգատարության են արժանի երեխաները, որոնց անհանգստացնում են անօթևանությունն ու քաղցը։ Կորոնավարակի արդյունքում ստեղծված իրավիճակը ավելի է ծանրացրել նրանց առօրյան։

Դուք հրավիրված հասարակության հայտնի անդամ եք հանդիսանում գլոբալ խնդիրներին հակադրվելու մեծագույն փորձի պատճառով։ Համոզված ենք՝ մեր միջոցառմանը այս անգամ էլ ձեզ կտեսնենք ձեր կնոջ/ամուսնու հետ միասին։

Հանդիպման գործնական մասը կսկսվի ժամը 18:00-ին և կտրամադրվի երեխաների կտավների բարեգործական աճուրդին։ Երեխաները նկարել են իրենց երազած իրերը։ Ինչ-որ մեկի համար դա տուն է, մյուսի համար՝ պաղպաղակ, մեկ ուրիշի համար՝ հացի կտոր. . . Աշխարհը պարտք է նրանց։

Ժամը 19:00-ին կտեղափոխվենք ընթրիքի։ Ընթրիքը տեղի կունենա առաջին սրահում։

Պարտք ենք համարում ձեզ հետ կիսվել կազմակերպչական որոշ մանրամասներով. քանի որ ընթրիքին ներկա կլինի բազմաբնույթ հասարակություն, ընտրել ենք ժողովրդավարական մոտեցում, և հագուկապի ոճը կլինի ազատ։

Ձեզ անհրաժեշտ չի հիշեցնել սրա մասին, բայց միջոցառման բոլոր մասնակիցները պարտավոր են հարգանքով և ըմբռնումով մոտենալ հավաքված բազմաբնույթ հասարակությանը, չկիրառել թշնամանք և ագրեսիա առաջացնող բառապաշար, կառավարել էմոցիաներն ու վարք

Մեր մենյուն լի է անակնկալներով և երաժշտական ծրագրով, քանի որ մեր աշխատակիցները հատուկ փնտրել են հյուրերի սիրելի ուտեստներն ու երաժշտությունը։ Անակնկալ ունենք Ձեզ և Ձեր ամուսնու/տիկնոջ համար։

Սրանք մանրուքներ են, գլխավորը այն մեծ գործն է, որի մասին հոգ ենք տանում և ինչպես միշտ, ունենք ձեր մեծ հույսը։

Շնորհակալություն, որ ժամանակ հատկացրեցիք ու ծանոթացաք նամակին։

Մինչ հանդիպում։

«Լավագույն աշխարհի համար» կազմակերպության անունից

Կոնտակտային տվյալներ՝

Հասցե՝